

ԷԶՄԻԱԾԻՆ



1968

ՌՆԺԷ
ԻՂ ՏԱՐԻ

Ապրիլ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1968



HA-9624.



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Էջ
ԱՄՆԱՏՆ ՀԱՅՈՑ ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ գիրք Մոսկվայի և համայն Թուսիայի պատ- րիարք, Նորին Սրբություն Տ. Տ. Ալեքսի սրբազան պատրիարքին՝ ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերականգնման հիմնականի առթիվ	3
Արժույթան պատվի տվչություն Հյուսիսային Ամերիկայի արևելյան բնվի տոալեոդ գերա- շնորհ տ. Թորգոմ եպո. Մանուկյանին	4
Փրկչի հրաշափառ և ուրբ Հառության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատ- րիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և բայր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ռղչույնի հետագրերն ու գրությունները	5
Փրկչի հրաշափառ և ուրբ Հառության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատ- րիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրապետական Արքեների ու առաջնորդաբանների միջև փոխանակված ռղչույնի հետագրերն ու գրությունները	7
Վեհափառ Հայրապետի բառազր Փրկչի հրաշափառ ուրբ Հառության տոնի առթիվ Մայր տաճարում	9
Հ ա դ ո ղ ա գ ռ ո յ լ յ ո յ ն	12
Ամենայն Հայոց Հայրապետի հայտաբարությունը ՏԱՌՈՒ-ի գործակալության բղրակցին	13
Ներքին քննիչի խորհրդակցական ձեռնարկ Մայր Աթոռում	14
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	16
Հայրապետական հանդիսավոր ուրբ պատարագ և բարոզ Փրկչի հրաշափառ Հառություն տոնի առթիվ	18
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ ու Էջմիածնի պատմության վրա	19
Զ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին հետ	28
Ս. ԱՆԹՈՍՅԱՆ—Հայոց լեզվի բնույթն ու զարգացումը	36
ԷՈՎՀԱՆՆԵՍ ՔԶՆ. ՄԱՐՈՒԹՅԱՆ—Քանաճան ուղեւոր յայտարարակ	43
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ—Ներսես Լամբրոնացին և իր առեւտրաբարությունը	48
Ս. Ե. ԲՈՒՆԱՏՅԱՆ—Հանգիստ Հ. Համազասպ վ. Ոսկյանի	56

Հանձնված է արտադրության 2/IV 1968 թ.: Ստորագրված է տպագրության 30/IV 1968 թ.:
Տպագրական 4 լամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 245

ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ
«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԿՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԽՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԵՆՏՐԱԼ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԻՐԸ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԷ,
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ՝ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՐԻԱՐԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ
ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՎԱՆՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱԼԵՔՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՒ

Պատմական քարի ավանդությունն է արդեն, որ հայ եկեղեցին ուրախությամբ լուսավորվում է ամեն անգամ, երբ ուս պրավոսլավ սուրբ եկեղեցին տոնական օրեր է ասլորում փառավոր հանդիսություններով:

Այսօր, երբ Ձերդ Սրբությունը նախագահում է Ձեր մեծ եկեղեցու պատրիարքության վերականգնման հիսնամյակը, Մենք եղբայրաբար երջանիկ ենք Ձեզ շնորհավորելու և հոգեպես մասնակցելու Ձեր տոնախմբության:

Թող Աստված անսասան և միշտ փառքի մեջ պահպանի ուս պրավոսլավ սուրբ եկեղեցին և նորս պատրիարքության պատմական սուրբ Աթոռը, խաղաղության և հոգևոր լուսավոր ծաղկումի մեջ՝ ի մխիթարություն ուս աստվածաճեղ ժողովուրդին և հուրախություն մեզ բոլորին:

Թող Աստված քաջառողջ կյանք շնորհե Ձերդ Սրբության, որպեսզի Ձեր քաղցր հոգիով, Ձեր արդար խղճով և Ձեր բարձր հեղինակությամբ շարունակեք առաջնորդել Ձեր եկեղեցին և Ձեր ժողովուրդը երկար տարիներ:

Փառք և հավերժ լույս ձեր սուրբ Աթոռին և Ձերդ Սրբության:

«Աստուած լուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առանելոյ ձեզ լուսով, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ», ամեն (Հոռմ. ԺԵ 13):

ԽԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տվավ կոնդակս ի 25 ապրիլ
1988 փրկչական ամի,
ի և տումարիս մայրց ՌԴԺԷ,
ի մայրավանս արքո Էջմիածնի:
ՀՄՐ. 697



**ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊՍ.
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԼԻԿԷ
ԷԶՄԻԱՄՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

Աստուածային օրհնությանց ներքե կ'ապրի ու կը գոյատևել Հայաստան-
եայց եկեղեցին, իր ասպարով հովանիին տակ պահելով հալ հատատացեալ
ժողովուրդը, ուխտապահ ու նուիրեալ առաջնորդութեամբ մեր հոգեւորական-
ութեան:

Այսօր Ձերդ Սրբազնութիւնը կը հանդիսանայ հայ եկեղեցոյ ճշմարտա-
պէս անձնուէր ու ներշնչեալ բարձրաստիճան հոգեւոր սպասաւորներէն մին,
որ կոչուած էք ամերիկահայոց թեմի առաջնորդութեան, շրջապատուած Ձեր
հոգեւորականաց դասուն, թեմական-եկեղեցական իշխանութեանց եւ հաւա-
տացեալ ժողովրդեան սիրով ու գնահատանքով:

Բարձր է Ձեր կոչումը, նուիրական Ձեր գործը, մեծ է Ձեր պատասխա-
նատուութիւնը: Տիրոջ ողորմութիւնը սակայն անբաւ է եւ սուրբ Հոգւոյն զօ-
րութիւնը ամենալաղթ: Այդ ողորմութիւնն ու զօրութիւնը պիտի լլնան Ձեզի
ապաւենն ու զօրավիգ, եւ Դուք պիտի տանիք Ձեր լուծը ոչ միայն քաղցրու-
թեամբ, այլ եւ հետզհետէ առաւել արդիւնաւետութեամբ:

Մեզի յայտնի էր արդէն, բայց այժմ աւելի համոզուեցանք, թէ Ձեր
Սրբազնութիւնը իբրեւ նորընտիր առաջնորդ կը գտնուիք իրապէս Աստուծոյ
եւ Մեր ազգին ծառայելու ուղիղ ճամփուն վրա, անմահանջ կորովով, բարե-
ջան հեղինակութեամբ ու պայծառ տեսիլքներով:

Մենք, իբրեւ Հայոց Հայրապետ, ուրախ ենք, զոհ ենք, մխիթարուած ենք:

Որով իբրեւ արդար արտայայտութիւն Մեր այս զգացումներուն, Ձեզի
կը շնորհենք, սիրելի Սրբազան, արքութեան պատիւ, աղօթքով որ ս. Հոգին
մնա Ձեզի ներշնչարան, եւ Դուք Ձեր հոգեւոր իշխանութեան լիութեամբ շա-
րունակէք Ձեր առաքելութիւնը, անշէջ ու անաղարտ պահելով սուրբ հա-
ւատքը եւ հայկական հոգին Ձեզի ապաւինած մեր ժողովուրդին:

Սուրբ Անետարաճով լուսաւորեցէք Ձեր եկեղեցիները, առաջնորդեցէք
մեր ժողովուրդը. մխիթարեցէք անոնց հոգիները, փառաւորելով սուրբ Էջ-
միածինը եւ ուրախացնելով Մեզ: Լիակատար յաջողութիւն Ձեզի:

«Եւ յոյսն մեր հաստատունն է վասն ձեր, քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ
եմք չարչարանացն՝ նոյնպէս և մխիթարութեանն» (Բ Կորնթ. Ա 7), «Ամե-
նայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 18—14), ամէն:

Վաչագհ Բ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐՈՒՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆՈՋՆ ՀԱՅՈՅ**

Տոստ կոնդակս ի 14-ճ ասրլիլի

1968 փրկական ամի,

եւ ի տուժարիս մայրց ՈՆժԷ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:

ՀՄՐ. 836



ՓՐԿԶԻ ՀՐԱԾԱԺԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Արքեպիսկոպոս ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Ղաթի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՎ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԲԵՆԵՂԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի և Համայն Արևելքի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և Համայն Արևելքի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ՄԱՔՍԻՄՈՍ Գ-ԻՆ (Դամասկոս),
Սիրիական օրթոդոքս եկեղեցու և Համայն Արևելքի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մայաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Արքեպիսկոպոս ԲԱՍԻԼԻՈՍ ՈՒԿԵՆԱ-ԻՆ (Կերալա),
Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Արքեպիսկոպոս ԵԹԻՄԻ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),
Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԳԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Արքեպիսկոպոս ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻՆ (Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Արքեպիսկոպոս ԽՐԻՍՏՈՍՈՍԻՆ (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի միտրոպոլիտ, Նորին Արքեպիսկոպոս ԳԱՄԻԱՆՈՍԻՆ (Տիրանա),

Վաղշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Արքեպիսկոպոս
Ս Ս Ե Յ Ա Ն Ի Ն (Վարշավա),
Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Արքեպիսկոպոս
Գ Ո Ր Ո Յ Ե Յ Ի Ն (Պրագա),
Հայ կաթողիկոս եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),
Կիարոսի արքեպիսկոպոս, Նորին Արքեպիսկոպոս
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
Նորին Ամենապատվություն կարդինալ
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեղահանուր քարտուղար
Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ
Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Բ Ե Յ Յ եպիսկոպոսից,
(Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Արքեպիսկոպոս Գ Ո Ւ Ս Տ Ա Վ Տ Ո Ւ Ր Ս Ի Ն (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Արքեպիսկոպոս Ե Ա Ն Կ Ի Յ Վ Ի Տ Ի Ն (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության կոաստող
Հ. Լ Ի Ն Ո Ւ Ս Կ Ո Պ Պ Ի Ե Լ Լ Ի Ի Ն (Երուսաղեմ),
ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ,
Գերապատիվ հայր Ռ Ո Ւ Բ Ե Ն Մ Յ Ո Ւ Լ Լ Ե Ր Ի Ն (Նյու-Յորք),
Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ Շ Ա Ռ Լ Ռ Յ Ո Ւ Պ Ի Ն (Մոնակո),
Մխիթարյան ուխտի աբբաճայր, Գերհարգելի հայր
Հ Մ Ա Յ Ա Կ վարդապետ Կ Ե Տ Ի Կ Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբաճայր, Գերապայծառ հայր
Մ Ե Ս Ր Ո Պ վարդապետ Հ Ա Պ Ջ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Սուրբ Հարության լույսն է, որ վերստին կիցնե մեր եկեղեցիներուն և հուսացյալ աշխարհին վրա և ազատ ու պայծառ կշողա մեր մոգիներենց ներս:

Ուրախ սիրով կշնորհավորենք Ձերդ Արքեպիսկոպոսը և Մեր ալոթքը կմիացնենք Ձեր աղոթքներուն, որպեսզի մարդիկ և ժողովուրդներ իրենց մտածումներն ու ձեռագ զործերը այդ լույսով շաղախեն ի փառս Ամենակալին Աստուծո և ի փառս Մարդուն:

Ձերմապես կաղոթենք մանկատությունները, լուսավորված սուրբ Հարության շնորհներով, առաջնորդեն աշխարհը դեպի ափը իրական խաղաղության և արդարության:

Թող Փրկիչը մեր Հիսուս օգնե մեզի բոլորիս, որպեսզի իր խաղաղարար կամքը կատարենք փոթորկահույզ արդի աշխարհի մեջ:

Սուրբ Հարության ավետիսով կշնորհավորենք Ձերդ Արքեպիսկոպոսը և կմաղթենք, որ երկար տարիներ շարունակենք Ձեր սուրբ առաքելությունը՝ բարի և առատ պտղավորումով:

Ամենախոր գնահատանքով և եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ



ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ,
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐԻԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵՆԱՄ ԲՈՂՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Աիրեցյալ Եղբայր Մեր.

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, ձեզ և մեզ մեծ աւետիս»:

Սուրբ Հարության ավետիսը նոր լույս կիջեցնե մեր օրերու հուսացյալ աշխարհին վրա, մեր եկեղեցիին վրա, ամենուս հոգիներեն ներս:

Ազատ ու պայծառ թող շողա լույսը Հարության: Մարդիկ և ժողովուրդներ, իրենց մտածումներն ու ձեռաց գործերը թող այդ լույսով շաղախեն, բյուրեղացնեն՝ ի փառս Ամենակալին և ի փառս Մարդուն: Հարության լույսով թող առաջնորդվին նաև պետությունները՝ հասնելու համար իրական խաղաղության և արդարության ամփին:

Այսօր սուրբ Հարության լույսեն լույս կրերենք Ձեզի հավիտենական սուրբ Էջմիածնեն՝ սրտագին մաղթանքով, որ Փրկիչը մեր Քրիստոս անասան պահպանե հայոց Մայր եկեղեցին և համայն ժողովուրդը մեր, հոգեշեն և ազգանվեր գործոց առատ պտղավորումով:

Բարի մաղթանքներ նաև Ձերդ Սրբության, ձեր տիրախնամ Աթոռի ուխտապահ միաբանության և համայն մեր հավատավոր զավակներուն՝ ի պայծառություն և հանսասան միություն մեր առաքելական սուրբ եկեղեցվույն:

Արդ, սուրբ Հարության շնորհներով «ազատացեալք ի մեղացն, և ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն և վախճան նորա կեանք յաիտենից: Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհք Աստուծոյ կեանք յաիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տեր մեր» (Հռոմ. Զ 22—28):

Խնդրոյամք և սիրո ողջունիվ՝

ՎԱՋԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷՋՄԻԱՇԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանը և իտրիուրդներին, Հայկական քարեզուծական ընդհանուր միության Կենտրոնական վարչության նախագահ պրոֆ. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին (Լիսաբոն), ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պրոֆ. Ա. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտտերտուն), Կալկասայի հայկական ընկերության վարչությանը (Կալկասա), գաղութային վարչություններին, հայրենասիրական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի քարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

Ծնթ.—Պատասխան հեռագրերը կտպագրվեն հաջորդ համարում:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1968 թ. ապրիլի 14)

«Եթե Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է
քարոզութիւնն մեր, ընդունայն ե՞ն եւ հաւատքն
ձեր» (Ա. Կորնթ. ԺԵ. 14):

Դարեր բազում և սերունդներ մահախոնապ, կտուղանցեն Քրիստոսի
դատարկ գերեզմանին առջեւն՝ Հարության խորհուրդով հավիշտակված: Ժա-
մանակը կհոսի, կանցնի: Կանցնին և բազմությունները մարդկային, կյանքի
փոթորիկներու ընդմեջեն, կմնա յուզ երազը մարդուն, թե հարլավ Քրիստոս
ի մեռելոց:

«Քանզի ամենայն մարմին իբրեւ զլուստ է. եւ ամենայն փառք մարդոյ
իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ եւ ծաղիկն յօթափեցաւ: Եւ բան
Տեառն մնայ յաիտեան, այսինքն բանն որ ի ձեզ աւետարանեցաւ» (Ա Պետ-
րոս, Ա 24—25):

«Յարեաւ Քրիստոս», որովհետև «մահումբ գմահ կոխեաց», որովհետև
«յարութեամբն իրով մեզ զկեանս պարգեւեաց»: Ավետիսը Քրիստոսի Հարու-
թյան, գերազույն առհավատչյան է անմահության հույսին և հավիտենական
կյանքին:

Հիսուսով, կյանքը դեպի կյանք կերթա մահվան սահմանեն անդին: Նյու-
թալյան աշխարհի մշտանորոգ կյանքի օրենքը. «Հիսուս» իր մահով և իր հա-
րությամբ, հաստատեց մարդու նաև հոգե-քարոյական աշխարհին մեջ: Բնու-
թյան վերածննդյան օրենքը Հիսուս քարծրացուց քարոյական իմաստի կա-
տարին: Հիսուս իր հարությամբ աշխարհի մեջ նոր մակարդակ, նոր որակ
ստեղծեց, նոր իրականություն, մարդու համար նույնիսկ ավելի իրական, քան
նյութական իրականությունը:

Հիսուսի հարությունը տեղի կունենա տևապես՝ աշխարհի այդ նոր իրա-
կանության մակարդակին վրա:

Չմոռանք, սիրելի հավատացյալներ, թե Հիսուս խաչին վրա մահը ճա-
շակեց՝ սրբելու համար մեղքերը մարդոց և փրկելու զանոնք՝ մահվան կա-
պանքներեն: Եվ հարություն առավ ան՝ մարդոց ցույց տալու համար ճանու-
պարհը նոր կյանքի մը, որ անվախճան է: Այսպես է, որ Պողոս Առաքյալ կբա-
ցականչե՝

«Զի որ մեռան, մեղացն մեռաւ միանգամ, եւ որ կենդանի է՝ կենդանի է
Աստուծոյ: Նոյնպէս եւ դուք համարեսցիք զանձինս մեռեալ մեղացն, և կեն-
դանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր», «Զի յոշակն մեղաց մահ է,
այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաիտենից ի Քրիստոս Յիսուս» (Հռովմ. Զ,
10—11, 23):

Խորհիլ, թե Հիսուս իր մահվամբ մահը հաղթեց՝ արդարացնելու և հավի-
տենական կյանք պարգևելու համար մարդոց, և թե ուրեմն բոլոր մարդոց փոր-

կոչությունը ապահովված է ի սկզբանե, անշուշտ մակերեսային, միառիշտ մտածելակերպ մը պիտի լուրսը:

Հիսուսի հարության շնորհներուն արժանանալը պայմանավորված է ամեն մեկ մարդու հավատքով և կյանքի գործերով: Պետք է մեղքերով մեղքինք Հիսուսով, որպեսզի արդարացյալ հարություն առնենք Հիսուսով: Մեր հոգիներուն, մեր կյանքի մեջ պետք է կարողանանք խափանել, արմատախիլ անել մեր մեղքերը, մեր տկարությունները, որպեսզի կարողանանք հոգեպես վերածննդ և մասնակից դառնալ կյանքի մը և ժառանգորդ՝ աշխարհի մը, որ վախճան չունի: Նյութի և մարմնի կապանքներն ձերբազատված քարոյան կան կյանքն է, որ վախճան չունի:

Մարդուն հատուկ, այդ քարոյական կյանքի աշխարհին մեջ, «Եթե Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզությունն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»: Հետևաբար, երբ այսօր, Քրիստոսի սուրբ Հարության հիշատակը կփառավորենք, այդ կվերաբերի ոչ միայն այն պատմական իրողության, որ երկու հազար տարիներ առաջ Քրիստոս մեռելներեն հարյավ, այլ այդ կվերաբերի նաև այժմու հոգեկան իրողության մը, որ կարտահայտվի ամեն մեկ հավատացյալի հոգեկան աշխարհին մեջ: Հիրավի, ամեն տարի, գոնե զատկական այս օրերուն, մեզմե ամեն մեկը կփորձե ապրիլ իր հոգվովն մեջ խորհուրդը Քրիստոսի մահվան և հարության: Հարության հրաշքը ոչ միայն գերագույն գրավականն է Հիսուսի աստվածության, այլ նաև մեր հոգիներու վերածնության և փրկության:

Դուք, հայ հավատացյալներ, զավակներն եք ժողովուրդի մը, որ ինքն իր մեջ ամբողջ աշխարհ մըն է, աշխարհ մը՝ մարդկային ոգեկանության, որ կտիրե նույնպես օրերը մշտանորոգ կյանքին: Հայ ժողովուրդը տիրացած է անմահության խորհուրդին: Եվ այս իրողությունը սկիզբ է առած հայուն հավատքեն, թե Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Ահա այսպիսի ազգի մը զավակներն եք դուք:

Եվ ձեզմե ամեն մեկը կոչված է մասնակից և ժառանգորդ դառնալու հայ ազգի անմահության, հետևաբար և ի՞ր անմահության:

Միայն թե անխախտ պահեցեք ձեր հավատքը, անհատն պահեցեք ձեր հոգին, ձեր քարոյական նկարագիրը, և ձեր ձեռք գործերով, ձեր կյանքով՝ ծառայեցեք քարոյական հրամայականներուն: Լուսավորեցեք, զարդարեցեք ձեր կյանքերը բարի, առաքինի գործերով, մարդասեր, շինարար իրագործումներով: Ձեր սրտերեն և ձեր կյանքի սահմաններեն հեռու վանեցեք սուտն ու կեղծիքը, նախանձն ու ատելությունը, ազահությունն ու մարմնաջը արծաթեն, ծուլությունն ու գողոգությունը և այն ամենը, որ դուք պիտի չուզեիք որ ուրիշներ ձեզի ընեն:

Ձի եթե անձնատուր ենք այս մեղքերուն և չենք ձերբազատված անոնց նապանքներեն, կնշանակե զուրկ ենք վերանորոգվելու, վերածնելու հոգեկան կարողութենեն, և այն ատեն ընդունայն է թե՛ մեր քարոզությունը, թե՛ ձեր հավատքը:

Մաքրեցեք, նորոգեցեք ձեր մտքերը և զգացումները և այն ատեն պիտի ապրիք ձեր հոգվովն մեջ խորհուրդը Հիսուսի մահվան և հարության: Ազատած մեղքերու խավարեն, պիտի տեսնեք ու զգաք ճառագայթումը Հարության լույսին: Հին իր մեղքերով ձեր մեջ մեռնելով, վերստին պիտի ծնի նոր մարդը, նոր կյանքի մը մեջ, որուն առջև կբացվի հորիզոնը հավերժության:

Մենք իբրև ձեր հոգևոր հայրը, ծունկի եկած Փրկչի Իջման սեղանի առաջ, պիտի մնանք միշտ աղոթող, որ Աստված լուսավորե ձեր բոլորին մտածումները, ազնվացնե ձեր բոլորին զգացումները, զորացնե ձեր բոլորին կամքի ուժերը, որպեսզի դառնաք վերածնած հոգիներ, մնաք լուսո որդիներ, արժանի զավակներ ձեր լուսաբնակ նախնյաց, որոնք ապրեցան հավատքով և առաքինի գործերով, և մեռան՝ ապրելու համար, հավիտենական կյանք ժառանգելով: «Որպես յարեալ Քրիստոս ի մեռելոց փառքն Հօր, նույնպես եւ մեք ի նորոգումն կենաց շրջեցուց» (Հռովմ. Զ 4):

Սուրբ Հարության շնորհներով թող նոր լույս իջնե մեռ եկեղեցիին վրա, և ան պայծառանա ու վերանորոգվի և շարունակե իր փրկարար առաքելությունը առավել կենսունակությամբ, առավել հոգևոր արդյունավետությամբ: Եվ մեր Մայր եկեղեցվու հովանիին ներքև, Հարության շնորհները թող վերանո-

րոգեն մեր ժողովուրդի հոգին ու կյանքը, որպեսզի ան դառնու առավել գիտակից՝ իր պատմության ոգեկանության, իր հոգևոր ժառանգության և կոչումին, իր քարոշական ուժերուն և իր արդի ազգային վերածննդյան: Այս գիտակցությանը գոտեպինդ, ան դուրս թող վանե իր ծոցեն ամեն կողմնակի և անհարազատ միում, ամեն տկարություն և երկմտություն, և վառ հուսերով լավատես դեպի հայոց ապագան, միասնաբար գործեն ու պայքարի. միշտ ու անդադար գորացնելու, վերակառուցելու և ծաղկեցնելու համար մայր երկիրը ամենայն հայոց, հավերժության միակ ամրոցը մեր ազգին:

Հայեր, դուք, հայաստանցի հայեր, և դուք, պանդոխտ հայեր, որ ի սփյուռս աշխարհի, այսօր, երբ Զատիկ է, պահ մը գոհն սևեռեցեք մեր հայացքը դեպի քարձուցքը Միժեռակաբերդի և դիտեցեք կոթողը մեր սզգի մահատակներուն:

Այնտեղ ձեր հոգիի աչքերով դուք պիտի տեսնեք դատարկ գերեզմանը Հիսուսի, և հավիտակված՝ պիտի հասկնաք անեղ ու վսեմ խորհուրդը մահվան և Հարության:

Այո՛, որպես հարյավ Քրիստոս ի մեռելոց, նույնպես և մեք ի նորոգումն կենաց շրջեցաք:

Սուրբ Հարության շնորհներով, համայն աշխարհի վրա թող հաղթական շողա նաև խաղաղության ոգին և ամրապես հաստատվի մարդոց և ժողովուրդներու հոգիներեն ներս, ու անոնք գիրար տղջուցեն իբրև վերածնած մարդիկ, իբրև նորայրներ և գործակիցներ:

Սուրբ Հարության ավետիսով թող հզոր հնչե ձայնը խաղաղության: Թող լոեն պատերազմները թուր, թող խորտակվին մահվան գործիքները թուր, թող իսպառ չքանան անարդարությունները թուր: Թող փարատի սեզր հոգիներուն: Թող ազատ լույս աշխարհ գա նոր մարդը լուսո, մարդ արդարության և խաղաղության:

«Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցաին»:

Միրելի ժողովուրդ մեր, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն, սուրբ գրական Արարատյան հայոց աշխարհեն ձեզ և մեզ մեծ ավետիս՝ «Քրիստոս լարեալ ի մեռելոց»:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետ, հրավերովը Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց թեմակա առաջնորդի, պիտի նախագահի Նյու-Յորքի նորակառույց Մայր տաճարի արարողություններին ապրիլի 28-ին և ապա Իր հայրապետական օրհնությունները պիտի բարձի Մ. Նահանգաց և Կանադայի Հայոց թեմերի մի շարք եկեղեցական համայնքներին:

Վեհափառ Հայրապետը, Իր ճանապարհի վրա դեպի Մ. Նահանգներ, հրավերովը Վիեննայի հայոց եկեղեցական համայնքի վարչության, պիտի կատարի օծումը Վիեննայի հայոց նորակառույց և Հոփսիսմե եկեղեցու ասպրիլի 21-ին:

Նորին Սրբությունը հունիսի 15-ից հետո Իր ուղևորությունը պիտի շարունակի դեպի Հայրավային Ամերիկա, հրավերովը Հարավ-Ամերիկյան Ռայրապետական պատվիրակին և Արգենտինայի հայոց եկեղեցական կեդրոնական վարչության, Իր օրհնությունը տանելու համար նաև այդ շրջանի Իր հոգեվոր զավակներին:

Սույն ուղևորության ընթացքում Նորին Սրբության պիտի ուղեկցեն գերշ. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյան՝ առաջնորդ թեմին հայոց Վրաստանի, հոգշ. տ. Ներսես Ծ. վրդ. Պոզապայան՝ տեսուչ հոգևոր ճեմարանի, և պրն. Արթուն Հատիսյան՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով կմեկնի ապրիլի 18-ին և կվերադառնա Մայր Աթոռ հուլիս ամսի կեսերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ

25 մայրտ 1968 թ.

Ա. Էջմիածին,



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՍՍ-Ի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետը, դեպի արտասահման իր ուղևորության հախօրյակին, ընդունեց ՏԱՍՍ-ի գործակալության թղթակցին և արեց հետևյալ հայտարարությունը.

— Ապրիլի 16-ին կմեկնիք Մայր Աթոռից և կուղևորվիք դեպի արտասահման՝ հրավերովը Վիեննայի և Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայ եկեղեցական իշխանությանց՝ նախագահելու համար նորակառույց եկեղեցիների օծման արարողություններին:

Վիեննայում ս. Հովսեփսե եկեղեցու օծումը տեղի կունենա ապրիլի 21-ին, իսկ Նյու-Յորքի Մայր տաճարի օծումը՝ ապրիլի 28-ին:

Համաձայն Ամերիկայի հայոց եկեղեցու առաջնորդարանի նախագծած ծրագրի, Մենք պիտի այցելենք նաև մի շարք այլ հայաշատ քաղաքներ Միացյալ Նահանգաց մեջ, ինչպիսիք են՝ Վաշինգտոն, Բոստոն, Դետրոյտ, Չիկագո, Լոս-Անջելոս, Ֆրեզնո և Սան-Ֆրանցիսկո՝ տաճարի համար մեր հավատացյալ ժողովուրդին Մեր օրհնությունը սուրբ Էջմիածնից և ողջունը՝ մեր վերածնած մայր հայրենիքից:

Բնական է, թե պիտի հանդիպենք քույր եկեղեցիների քարծր ներկայացուցիչներին, և Մենք շատ ուրախ պիտի լինենք տաճարի նրանց բոլորին Մեր եղբայրական ողջույնը, հայոց սուրբ գրական երկրից և քրիստոնեական հավատքի բազմադարյան մեր կենտրոնից:

Վերջին օրերս ստացանք նաև հրավեր Հարավային Ամերիկայի մեր եկեղեցական կենտրոնից՝ Բուենոս-Այրեսի հոգևոր իշխանության կողմից՝ այցելելու Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հայ եկեղեցիները և հավատացյալներուն:

Մենք ընդունեցինք նաև այս հրավերը, ուրախ ենք, թե Մեր օրհնությունը պիտի բաշխենք նաև Հարավային Ամերիկայի Մեր հավատացյալ գավալներին:

Որպես հայ եկեղեցու գերագույն պետ կյտրինենք, թե վերոհիշյալ Մեր ուղևորությունները երջանիկ պատեհություններ են, որպեսզի է՛լ ավելի ամրապնդվի սփյուռքի հայության հոգևոր կապը իր պատմական մրակ կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ և է՛լ ավելի զորանա միության և միասնության գիտակցությունը մեր պանդուխտ ժողովուրդի կյանքի և գործունեության մեջ:

Մենք ուրախ պիտի լինենք, եթե Մեր այցելությունների և հանդիպումների առթիվ Մեր խոսքով և գործով կարողանանք նպաստել եկեղեցիների և ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության ոգու և աշխարհի խաղաղության դատի ամրապնդման:



ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 18—21 օրերին Մայր Աթոռում կայացավ ներքին թեմերի խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին՝

1. **Մայր Աթոռից.** Մայր Աթոռի միաբանական կազմը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հալկազուն արքեպ. Աբրահամյանի, Գերագույն հոգևոր խորհուրդը, Վերաբուհի, հանձնաժողովը և Մայր Աթոռի դիվանապետը, ֆինանսական և տնտեսական քաժիցների վարիչները:

2. **Արարատյան թեմից.** առաջնորդական փոխանորդ գեր. տ. Վահան եպս. Տերյանը, թեմական խորհրդի անդամներ Պողոս Պողոսյանը, Խաչիկ Գուպուպաշյանը, Վարդան Գոնչեգույանը (հաշվապահ):

3. **Շիրակի թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, արժ. տ. Վազգեն քհն. Ղարազյուզյանը (կիրովական), Հովսեփ Ալեքսանյանը, Մովսես Անթառյանը (հաշվապահ):

4. **Վրահայոց թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, թեմական խորհրդի անդամներ Ալեքսանդր Հովսեփյանը (նախագահ), Սուրեն Եսայանը, Խաչիկ Հեքեքյանը, Գևորգ Դուրգարյանը (հաշվապահ):

5. **Աղբյուրներից հայոց թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրույանը, թեմական խորհրդի նախագահ Արզար Միրզոյանը, Նիկողոս Աթաջանյանը (հաշվապահ):

6. **Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Պարզե եպս. Գևորգյանը, եկեղեցական խորհրդի անդամ Գևորգ Գևորգյանը (Մոսկվա), Սարգիս Մելքոնյանը (Օրջոնիկիձե):

7. **Գեղարդի վանքից.** վանահայր հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, Արա Բաստրբուսյանը (տնտեսվար):

Մարտի 18-ին՝ ներքառքի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը քարեհանգե Վեհարանում ընդունել պատգամավորների՝ թեմական առաջնորդների գլխավորությամբ՝ ըստ թեմերի:

Ժամը 11.30-ից մինչև ժամը 15-ը Մայր Աթոռի դիվանատանը տեղի ունեցավ 1987 տնտեսական տարվա թեմերի բյուջեի կատարողականի հաշվետվության քննությունը և 1988 տարվա նախահաշիվների քննարկումը:

Ժամը 15-ին հյուրերը ճաշեցին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը:


Երեկոյան ժամը 19.30-ին պատգամավորները Երևանում, Գ. Սուրդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում, դիտեցին ներկայացում:

Մարտի 20-ին՝ չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Մայր տաճարում հանդիսավոր կերպով կատարվեց «Արեւիկա»-ի ժամերգությունը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժամերգությանը ներկա էին բոլոր պատգամավորները:

Արարողության ավարտին Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հալկազուն արքեպ. Աբրահամյանը հանուն Վեհափառ Հայրապետի ողջունեց թեմակալ առաջնորդներին և պատգամավորությանը և խոսեց գեղեցիկ քարոզ՝ «Միրեցի գվայելչություն տան քո և գտնի հարկի փառաց արքութեան քո» քնարացով և մաղթեց, որպեսզի պառնա մնան հնչյունն ու Էջմիածինը, այնպես էլ թեմերի բոլոր եկեղեցիները:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը քարեհանգե Վեհարանի մուտքի առջև նկարվել պատգամավորների հետ:

Ժամը 11.30-ից մինչև 14.30-ը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի քարձր նա-



ՎԵՃԱԾԱՆՈՒ ՀԱՅՈՐԱՊԵՏԸ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԳԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ (1888 թ. ՄԱՐՏԻ 21)

խազանությամբ, գումարվեց խորհրդակցական ժողով: Ելույթ ունեցան թեմակալ առաջնորդներն ու պատգամավորներից շատերը:

Խորհրդակցության վերջում Վեհափառ Հայրապետը տվեց Իր պատգամն ու օրհնությունը:

Ժամը 15.30-ին Վեհափառի սեղանատանը տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ պատգամավորների:

Երեկոյան ժամը 19.30-ին հյուրերը Երե-

վանում, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, դիտեցին ներկայացում:

Մարտի 21-ին՝ հինգշաբթի, ժամը 10.30-ին, ներքին թեմերի պատգամավորությունը, ընկերակցությամբ Մայր Աթոռի միաբանության, ուխտի զնաց ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը Օշականում և Երևանում՝ Ապրիլյան եղեռնի 50-ամյակին նվիրված հուշարձանին:

Երեկոյան հյուրերը հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնեցին իրենց թեմերը:





ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

Մարտի 22-ին՝ ուրբաթ.—Երեկոյան ժամը 8-ին Վեհարանում գումարվեց Գերագոյն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ։

Մարտի 23-ին՝ շաբաթ.—Անպաշտօն կերպով Մայր Աթոռ ժամանեց՝ Անթիլիասի դպրեմանքի տեսուչ գեր. տ. Գարեգին եպս. Սարգիսյանը, որը մեկ շաբաթ մնալուց հետո Մայր Աթոռում, մեկնեց Մոսկվա։

Մարտի 24-ին՝ կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դաաստիւն)։

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարությանը, Քարոյեց հոգ. տ. Ներսէս ծ. վրդ. Պողապալյանը՝ աՊարտ է մեզ յամենայն ժամ աղօթս կալ և մի՛ ձանձրանալս քնարանով։

Մարտի 30-ին՝ շաբաթ.—Տօն սրբոյն Դրիգորի Լուսամուշիկ մերոյ. սոսկալի շաբաբանացն և մտին ի վիրապն։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գեորգ վրդ. Սերայդարյանը և քարոյեց «Ի պրի ներքնումն իջեալ նորին շաղխէր նովալ զգուլս վիշապինս քնարանով։

Նույն օրը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահութեան ներքո, գումարվեց ճարտարապետական հանձնախմբի նիստ, ուր քննարկվեց Մայր Աթոռի և ս. Գեղարդի վանքի շինարարութիւններն արագացնելու ծրագիրը։

Մարտի 31-ին՝ կիրակի.—Չ կիրակի Քառասնորդական Պահոց (Դաստնան)։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գեորգ վրդ. Սերայդարյանը, Քարոյեց պր. տ. Գարեգին եպս. Սարգիսյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ապրիլի 4-ին՝ ճիւղջաբթի.—Երկշաբաթյա արձակուրդով Մայր Աթոռ ժամանեց Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր. հովիվ, Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը։

Ապրիլի 5-ին՝ ուրբաթ.—Երեկոյան ժամը 7-ին Վեհարանում գումարվեց Գերագոյն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ։

Ապրիլի 7-ին՝ կիրակի.—Մաղկազարդ և Աւետումն Ս. Աստուածածնի։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, Քարոյեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը՝ «Զի ահա ձմեռն անց, անձրեւ անցին և գնացեալ մեկնեցան. ծագիկք երեւեցան յերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերումս քնարանով։

* *

Ապրիլի 11-ին՝ ճինգլաբթի.—Աւագ հինգ-
յաբթի. Յիշատակ ընթերցադ Տեառն սերոյ
Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց և հաւար-
ման արարողութեան ժամանակ քարոզեց
հոգ. տ. Արսեն վրդ. Բերքերյանը ժաջալե-
րեցարութեան հիւսիսեան աշխարհիս ընա-
րանով:

* *

Ապրիլի 13-ին՝ յաբաթ.—Աւագ շաբաթ
Սրբազան Ջառիկի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. ա.

Ներսէս Ժ. վրդ. Պողոսեանը և քարոզեց
«Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ ընդունալն
են քարոզութիւնը մեր և ընդունալն են հա-
ւատքն ձեր» ընարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայ-
րապետը:

* *

Ապրիլի 15-ին՝ երկուշաբթի.—Յիշատակ
մեռելաց.

Մայր տաճարում պատարագեց արժանա-
պատիվ տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հաւարտ « պատարագի կատարվեց հոգե-
հանգիստ՝ ի հիշատակ հայ ազգի համայն
նշեցյալներին:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ
ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԲԱՐՈՋ ՓՐԿՉԻ ՀՐԱՅԱՓԱՌ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ

Ապրիլի 14-ին՝ կիրակի.—Ջատիկ: Ծա-
րութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի-

Այսօր Մայր տաճարում պատարագի է
վեհափառ Հայրապետը:

Օրվա մեծ տոնի խորհուրդը իրեն է ձգել
Հայաստանի և սփյուռքի տարբեր ծայրերից
հայ ուխտավորների մի հոծ բազմություն:
Մայր տաճարը և նրա շրջակայի լցված են
հավատացյալներով:

Առավոտյան ժամը 11-ին թափորով և
«Հրաշափառ» շարականի հնչյունների տակ
վեհափառ Հայրապետը առաջնորդվում է
Մայր տաճար:

Սկսվում է սուրբ պատարագի արարողու-
թյունը:

Աջակողմյան և ձախակողմյան դասերում
տեղեր են գրավում Գերագույն հոգևոր խոր-
հրդի և վերստուգի հանձնաժողովի ան-
դամները, «Էջմիածին» ամսագրի խմբա-
գրական և հոգևոր ճեմարանի դասախոսա-
կան կազմերը, Մայր Աթոռի պաշտոնեո-
թյունը:

«Հայր մեր»-ի ժամանակ վեհափառ Հայ-
րապետը Հայաստանի և սփյուռքի հայ հա-
վատացյալ ժողովրդին տալիս է հաւրապե-

տական իր պատգամը, որը մուրն երեկոյան
ծայնասփռվում է Երևանի ուղիղկայանից:


Համարտ սուրբ պատարագի վեհափառ
Հայրապետը նույն հանդիսավորությամբ,
թափորով և «Այսօր յարեաւ» շարականով
ուղեկցվում է վեհաբանի զահասրահը:


Հանում Մայր Աթոռի միաբանության,
պաշտոնեության և ներկաների, խոսք է
վերցնում և վեհափառ Հայրապետի Ջա-
ւինկն է շնորհավորում Մայր Աթոռի յուսա-
րարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Ար-
րաբաշիանը:

Այնուհետև վեհափառ Հայրապետը պա-
տասխանելով գեր. տ. Հայկազուն արքեպիս-
կոպոսի շնորհավորանքներին, ներկա բազ-
մությանը ավետում է Փրկչի հրաշափառ ս.
Հարությունը և պատգամում է վարել քրիս-
տոսավալել կյանք, որպեսզի քիորր արժա-
նի լինեն հոգեկան ու մարմնական հարու-
թյան Հիստ:սով:

Բոլոր ներկաները աջահամբուրով շնոր-
հավորում են վեհափառ Հայրապետի Ջա-
տիկը:

Ջատկական հանդիսությունները աւարտ-
վում են վեհափառ Հայրապետի «Պահպա-
նիչ»-ով:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱՇՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ*
(1920—1967 թթ.)

ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ Տ. ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՎ

S. Խորեն Ա. կաթողիկոսի գաճակալության առաջին իսկ օրերից, նրա մտահոգության առարկան է եղել Մայր տաճարի վերանորոգության և ներքին թարեզարդության խնդիրը:

1925—1926 թվականներին Գևորգ Ե կաթողիկոսի օրոք մասնակի վերանորոգության էր ենթարկվել Մայր տաճարի մեծ գմբեթը՝ ճարտարապետներ Ա. Թամանյանի և Թ. Թորամանյանի հսկողությամբ:

S. Խորեն Ա. կաթողիկոսի օրոք 100-սուլյա պատմական այդ կոթողի խարխուլ վիճակը, անհրապույր տեսքը, արտաքին և ներքին վերանորոգության անհրաժեշտությունը, ստիպում էին կաթողիկոսին դիմել ախյուռքի հայության օգնության՝ գլուխ քերելու համար համազգային այդ կարևոր հարցի հաջողությունը:

Այս նպատակով S. Խորեն Ա. կաթողիկոսի կարգադրության համաձայն, մասնավոր առաքելությամբ, արտասահման էր ուղարկվում Գերագույն հոգևոր խորհրդի նախագահող անդամ տ. Գարեգին արքեպ. Հով-

սեփյանցը՝ որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ և հայրասպետական պատվիրակ:

S. Խորեն Ա. կաթողիկոսը արտասահման ուղարկվող հայրասպետական պատվիրակի առաքելության կապակցությամբ գրում էր երեք կոնդակներ՝ համար 970, 971 և 972, որոնցում նշվել և ճշտվել էին հայրասպետական պատվիրակի երեք հիմնական պարտականությունները.

1. Մայր տաճարի վերանորոգության համար համազգային հանգանակության կազմակերպում.


2. Ափյուռքի մի շարք թեմերի կազմակերպում. միության, համերաշխության և խաղաղության հաստատում ազգային-եկեղեցական կյանքում.

3. Մայր Աթոռի հոգևոր-մշակութային ձեռնարկների (ճեմարանի քաջում և պատճառներով հրատարակություն) և միաբանության տնտեսական ապահովության համար միջոցների հայթայթում, «Լուսավորչի լույս» կամավոր նվիրատվության հաստատում:

Այս առթիվ S. Խորեն Ա. կաթողիկոս իր կոնդակում ասում էր.

«Ուղարկում ենք դեպի ձեզ Աթոռի հարազատ տ. Գարեգին արքեպիսկոպոսին, որ-

* Ծարուհանկված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի № ԺԲ-ից և 1968 թվականի №ՁՁ Ա.—Գ-ից:



պես Մեր ներկայացուցիչն ու նվիրակը՝ միաթարեղու ձեզ և կարգավորելու նաև եկեղեցական գործերը: Նա կլինի նաև բոլոր հարցերի մեջ Մեր իղծերի և գանկությունների թարգմանը ձեր առաջ»:

Հայրապետական պատվիրակ տ. Գարեգին արքեպ. Հովսեփյանցը 1935 թվականի հունվարին մեկնում էր Մայր Աթոռից արտասահման: Տ. Գարեգին արքեպիսկոպոսը իր առաքելությունը սկսում էր Ռումինիայի թեմից:

Տ. Թորգոմ պատրիարք Գուշակյան «Սիոն» ամսագրի 1935 թվականի փետրվարի համարում (էջ 87), «Հայրապետական պատվիրակը» խմբագրականի մեջ, արտահայտելով սփյուռքի ազգային-եկեղեցական մարմինների ուրախությունն ու գոհունակությունը, նշում էր.

«Տ. Գարեգին արքեպ. Հովսեփյան մեր մեջ սփյուռքի շրջանակեն ներս է արդեն ավելի քան ամիսն մը ի վեր: Իր հուշիկ՝ բայց զգոն քաղափոխերը, իր խաղաղ բայց խոհական կերպը, սկսած ըլլալ կթվին ամենուն ուշադրության մատնանշել ոչ միայն զինքը՝ իր անումին ներքև, այլ նաև զԱյն, զոր կուգա ներկայացնել ինչ մեր մոտ»:

«Մայր Աթոռու սրբություններեն, հայրենիքի կենսախայտություններեն, մագաղաթներու մեջ ծրարված հիմնավոր զեղեցկություններեն բույրեր, ձայներ և գույներ կթրթռան իր խոսքերուն մեջ, որոնց՝ սրտագրավ երգի մը քաղցրությունը կուտա Ամենաւնի Հայոց Հայրապետությունը պատգամավորելու իր հանգամանքն ինքնին»:

Հայաստանեն կուգա ան, ու միայն ասիկա քավական է որ ամենքը, նման Ղարիբին, իրենց հեքին մեջ սեղմած կարոտին անձուկը, իրենց նավածքները մույն իսկ թվին հարօնել իրեն. «Ուստի՝ կուգաս. ծառա եմք ձայնիդ, մեր աշխարհեն խապրիկ մը չուցի՛ս»:

Թորգոմ պատրիարք միաժամանակ հանգամանորեն քննադատում էր հայրապետական պատվիրակի անձն ու առաքելությունը՝ նրան ներկայացնելով հանրության սիրույն ու հարգանքին. «զգա՛ում, հոգեսեր և գիտո՛ւմ, միանգամայն արվեստագետ հոգևորական, ան գիտն տալ ամենուն՝ ոչ միայն պատշաճության պատասխանը, ինչպես կը հարկադրեն իրեն իր դիրքն ու աստիճանը, այլ նաև ճշմարտության և արդարության պատասխանը, ինչ որ կպարտադրեն իրեն անկեղծությունը և արդարության սերը»:

Հայրապետական պատվիրակը, իրեն հանձնված յուրք պարտականությունների գիտակցությամբ զբաղված, այցելում էր Բալկաններ, Լիբանան, Սիրիա, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս, Ֆրանսիա՝ ամեն տեղ

տանելով Մայր Աթոռ ու. Էջմիածնի կենարար օրհնությունն ու Հայոց Հայրապետի ուղեւնները:

Տ. Գարեգին արքեպիսկոպոսի առաքելության առաջին նպատակը՝ Մայր տաճարի նորոգության համար կատարվելիք հանգանակությունը, մասամբ հաջողությամբ էր պսակվում: Մայր տաճարի նորոգության համար հայրապետական պատվիրակը հանգանակում էր 35 հազար-դոլար: Այդ գումարը Ամենայն Հայոց կաթողիկոսի անունով պահ էր դրվում արտասահման՝ մի պրամատան մեջ, հարմար ժամանակին իր նպատակին գործածվելու համար Մայր Աթոռում:

Հայրապետական պատվիրակի վրա դրված երկրորդ պարտականության կատարումը, սփյուռքի մի շարք թեմերի կազմակերպումն ու ներքին թեմական խաղաղությունն ու համերաշխությունն ստեղծելու ջանքերը, հանդիպում էին որոշ դժվարությունների, քաղաքական, կուսակցական հողի վրա:

Տ. Խորեն Ա կաթողիկոս, դեռևս 1933 թվականի հունիսի 1-ին, հայրապետական իր անդրանիկ կոնդակում հանգամանորեն խոսում էր սփյուռքի մեր թեմերի առաջ կանգնած բազում դժվարությունների մասին, որոնցից առաջինը համարում էր հայ ժողովրդի՝ աշխարհով մեկ ցրված ու զաղթալան լինելը, «զրկեալ ի հայրենի տանէ, թափառական յոյրտս օտար և հեռաւոր աշխարհաց... ենթակալ այլաներման, տաւանեալ ի հաւատս և բեկեալ ի յուսու»:

Աս կագություն առաջ Հայոց Հայրապետը հորդորում էր սփյուռքի իր հոգևորական և աշխարհական զավակներին զբաղվել քաղաքականությամբ, հեռու մնալ «ի կուսակցական պայքարաց և յանախորժութեանց, հայելով միայն ի քարոյական և կրօնական շինութեան հօտիդ»:

Տ. Խորեն Ա-ի օրով Մայր Աթոռ մտնելից հետաքրքրվում էր սփյուռքի թեմերից Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմերի կազմակերպման հարցով:

Հայրապետական պատվիրակին հրահանգ էր տրված զբաղվել այս հարցերով:

Եվրոպայի արևմտյան թեմը անկազմակերպ վիճակում էր: Մանավանդ Մարսելի և Լիոնի թեմերը ներքին խաղաղության և միասնության էին կարոտում: Հյուսիսային ԱՄՆ-ի արևելյան թեմը պառակտված էր կուսակցական պայքարների հետևանքով և մոռնալ խաղաղության էր կարոտում:

Ահա նման թեմական անբարենպաստ պայմաններ և կացություններ ստիպել էին Տ. Խորեն Ա կաթողիկոսին զբաղվել սփյուռ-

քի մի շարք թեմական կազմակերպության և ներքին խաղաղության, համագգային գործերով և անհրաժեշտ գտնել հայրապետական պատվիրակի առաքումը այդ և նման ցավերին դարձան գտնելու համար:

Սփյուռքը կուսակցական գետնի վրա, ինքն իր մեջ պատակալված էր, իսկ կացությունը՝ ծանր ու խառնակ:

«Է՞նչ պիտի լինե, ի՞նչ պիտի գործե, ի՞նչ հրաշք պիտի կարենա գործել» հայրապետական պատվիրակը, հարցնում էր Թորգոմ պատրիարք, մի պահ ինքն էլ շվարած սփյուռքի խառնակ, դժվարություններով խճոված կացության առաջ, «դրությունը քարվոքելու, խաղաղությունը վերահաստատելու և պատակտումներում բացած վիճի լեցնելու համար, ի՞նչ...»:

Թորգոմ պատրիարք միաժամանակ զգաստության, խոհեմության կոչ էր անում թեմական-եկեղեցական կազմակերպություններին, սփյուռքի մասնույին, քաղաքական հոսանքներին՝ մոռանալ հատվածական շահերը, մեկտեղվել Մայր Աթոռի և հայրենիքի կենդանացող իրականությունների շուրջ, մոռանալ վեճերը և ամենայն «հարգանքի և հնազանդության ոգիով» լցվել «առ Մայր Աթոռն Հայաստանյայց և առ նորա արժանավոր Գահակալը»:

Իժմայստաբար և՛ Թորգոմ պատրիարքի, և՛ հայրապետական պատվիրակի միության, համերաշխության, խաղաղության կոչերը սնացին «ձայն քարքառող յանապատի»՝ հակաէջմիածնական տարրերի համար, որոնք «քոյրուկին տարբեր կերպով ըմբռնեցին իրենց պարտականությունը» Մայր Աթոռի և հայրենիքի հանդեպ, այն օրվանից, երբ «վերջապես ճշտված և որոշված էր պատվիրակի մեկնումը Էջմիածնեն և անապարեցին կանխել, դիրք բռնել անոր դեմ, որպեսզի երբ հասներ ան իրենց մոտ՝ կատարված իրողության առջև գտներ ինքզինքը, այն խնդիրներում համար, որոնց համար տարիներն էին անհրաժեշտ կղատվել հայրապետական տնօրենությունը» («Սիոն», 1935, էջ 39—40):

Դժվարությունները սկսվեցին Մարսելի թեմից: 1927 թվականին Գրիգորիս եպս. Պալաքյան, որը 1925 թվականին Գևորգ Ե-ի օրով նշանակվել էր Եվրոպայի հայոց հայրապետական ներկայացուցիչ և դժվարությունների առաջ ձեռնդրել էր եղել և 1927-ին քաշվել էր Մարսել և, ինքնագլուխ կերպով իրեն համարելով առաջնորդ Մարսելի, մի նոր դժվարություն էր ստեղծել Մայր Աթոռի համար, ի վերջո հուսահատած Մարսելում ստեղծված քառասյին վիճակից, ուր տեղ ու տնօրենություն էին անում հակաէջմիածնական տարրերը, 1934 թվականին

հրաժարվում էր իր պաշտոնից, հանրության ուղղած և տպագրված մի շրջաբերականով:

Սակայն երբ հայրապետական պատվիրակը արդեն ժամանել էր սփյուռք և հայրապետական հրահանգ ուներ զբաղվելու Մարսելի թեմի հարցով, Մարսելի քառասյին կացության ստեղծման պատասխանատուները ամեն ճիգ թափեցին «համոզելու» Պալաքյանին, որ հրաժարականը ետ վերցնի և վերադառնա իր պաշտոնին: Պալաքյան եպիսկոպոս խաբվեց և վերադարձավ իր պաշտոնին: Սակայն մա Մարսելի թեմում տեղեկված և հետզհետե խորացող քառասյին վիճակի մեջ հազիվ կարողացավ մնալ երկու շաբաթ և «գուցե այդ խառնակ վիճակին և առաջացուցած հոգեկան վերհիվանդումներն նույն իսկ չարախոցը, առավոտ մի հանկարծամահ գտնվեցավ իր սենյակին մեջ» («Սիոն», 1935, էջ 40):

Պալաքյանի քառասունը չլրացած, Մարսելի հակաէջմիածնական տարրերը, Կալիֆոռնիայի թեմի հրաժարած առաջնորդ տ. Գարեգին Խաչատրյան եպիսկոպոսին, որպես իրենց համախոհի, «առաջնորդ» են ընտրում և նրա անվան հիշատակությունը ս. պատարագի ժամին հրահանգում են մի թեմում, «որում առաջնորդական վիճակի հանգամանքը դեռ չէր ճանչված Մայր Աթոռն, որում կպատկանի սակայն՝ ըստ ազգային և նույնիսկ եկեղեցագիտական իրավաբանության, թեմագրական բաժանումի, բաշխումի և հաստատումի գործը» (Թորգոմ պատրիարք, «Սիոն», 1935, էջ 40):

Երբ հայրապետական պատվիրակը, Հայոց Հայրապետի հրահանգով ժամանում էր Ֆրանսիա, Մարսելի մուրդյանները փորձում էին նրան դնել իրենց «քոյր աճապարկտ գործառնությունը» կատարված իրողության առաջ:

Նույն հակաէջմիածնական տարրերի եկեղեցաքանդ գործունեության հետևանքով, նույն օրերին խորանում էր նաև պատակտումը ԱՄՆ-ում՝ հայոց երկու թեմերում:

1931 թվականի մարտի 2-ին ԱՄՆ-ի հայոց առաջնորդ էր ընտրվում տ. Ղևոնդ արքեպ. Դուրյանը՝ համաձայն ամերիկահայ թեմական կանոնադրության:

Մայր Աթոռը հաստատում էր հայրապետական կոնդակով այս ընտրությունը՝ հանգամանորեն քննելուց հետո «ընտրական գործը», ինչպես նշված է Գերագույն հոգևոր խորհրդի համապատասխան արձանագրության մեջ:

Նորընտիր առաջնորդը ձեռնամուխ էր լինում իր պաշտոնին՝ ընդհանուր խանդավառության և համերաշխության մեջ:

Նման համերաշխություն և խանդավառություն սրտովը չէր սակայն ազգստից վար-

չութեան մեջ հակաէջմիածնական պատգամաւորներ, որոնք փորձում էին դժկարություններ հարուցել ԱՆՆ-ի հայոց ազգային կենտրոնական վարչության և առաջնորդարանի առաջ, գոտ քաղաքական գետնի վրա:

Կոքերը բորբոքվում են 1833 թվականի հունիսին՝ Չիկագոյի ցուցահանդէսում, հայկական օրվա հանդիսության ժամանակ դրոշակ պարզելու առթիվ:

Կոստակցական փոքրաթիվ թեմականները փորձում են ամեն կերպ ցուցահանդէսում հայկական օրվա հանդիսությունը կատարել տալ եռագույն դրոշակի ներքո: Մեծամասնությունը արդարորեն առարկում է, որ եռագույնը ներկա Հայաստանի պետական դրոշակը չէ և գուրկ է պաշտոնական հանգամանքից, և հանուն համերաշխության և թեմի խաղաղության, որոշում է հայկական օրվա հանդիսությունը կատարել առանց որոշակի:

Մայր Աթոռը կենտրոնական վարչության սույն որոշումը գտնում է «խոհեմ և իրավաքի, միանգամայն օգտակար և օրինական» հայ եկեղեցու, հայ ժողովրդի և մեր հայրենիքի շահերի տեսակետից (Գերագույն իրազեկոր խորհրդի արձանագրություն, համար ԿԵ, 1833 թ.):

Տ. Խորեն Ա կաթողիկոս այս առթիվ ուղարկում է նաև հատուկ շրջաբերական երկու կոնդակներ, համար 1341 և 1342՝ ի հանդարտություն ժողովրդի, յուսաբանելով նաև հանրային կարծիքը, խաղաղություն հաստատելու ցանկությամբ նաև կողմերի միջև: Բորբոքված կոստակցական կրքերը սակայն չեն հանդարտվում:

1833 թվականի սեպտեմբերին Նյու-Յորքի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում գումարվում էր ԱՄՆ-ի հայոց երեսփոխանական ընդհանուր ժողով՝ ընտրելու համար ամերիկահայ կենտրոնական մոր վարչություն:

Ժողովում մի շարք դաշնակցական պատգամավորներ, առաջնորդված կոստակցական շահերից, աշխատում են իրենց ազդեցությամբ ենթարկել երեսփոխանական ժողովը: Բայց ադ նրանց չի հաջողվում: Ժողովականների մեծամասնության քվեներով ընտրվում է ամերիկահայ թեմի կենտրոնական մոր վարչությունը:

Ժողովում պարտված և փոքրամասնություն մնացած կոստակցականամիտ երեսփոխանների խմբակը համառում է մնալ իր եկեղեցաքանդ դիրքերի վրա և մերժում է ճանաչել և՛ սահմանադրապես ընտրված ամերիկահայ կենտրոնական վարչությունը, և՛ առաջնորդը, և՛ առաջնորդարան:

Փոքրամասնություն մնացած և ընդդիմա-

դիր երեսփոխանների այս խմբակը, ամերիկահայ ազգային-եկեղեցական սահմանադրության (21-րդ հոդված, 6-րդ և 10-րդ կետեր) ակնհայտ բռնաբարոյունով կազմում է, այսպես կոչված, «ամերիկահայ ազգային թեմի կենտրոնական վարչություն» և ապրտաութության դրոշ պարզած նաև Ամենայն Հայոց Հայրապետության դեմ, եկեղեցական պառակտում է ստեղծում, փորձելով իր ազդեցությունը տարածել ԱՄՆ-ի մի շարք եկեղեցիների վրա:

ԱՄՆ-ի հայոց օրինավոր և մեծամասնություն ունեցող ազգային վարչությունը իր ժողովն է գումարում Մարթենիք հյուրանոցում՝ տ. Հովսեփի եպս. Կարապետյանի գլխավորությամբ, և մասնակցությամբ 57 երեսփոխանների, ստեղծված կացությունը քննելու համար:

Իսկ փոքրամասնությունը որպես անջատ «թեմ», առաջ տանելով իր քալքայի, պառակտող գործունեությունը, իր միատերը գումարում էր 27-րդ փողոցի հայ եկեղեցու ներքնասրահում և առաջնորդ տ. Ղևոնդ արքեպիսկոպոսին՝ պաշտոնակ է հռչակում: Երկու կողմերն էլ դիմում են Մայր Աթոռին՝ մասնավոր գեկուցագրերով, խնդրելով հարգի լուծումը:

Տ. Խորեն Ա կաթողիկոս, Գերագույն հրազեկոր խորհրդի հետ, 1833 թվականի սեպտեմբերի 25-ին քննության է առնում ստեղծված լուրջ կացությունը և հետ երկար խորհրդակցության որոշում է.

1. 27-րդ փողոցի հայ եկեղեցու ներքնասրահում փոքրամասնության ժողովը համարել ապօրինի:

2. Փոքրամասնության ժողովի ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Ղևոնդ արքեպիսկոպոսի դեմ հանած պաշտոնակության որոշումը համարել անհիմն, հակասահմանադրական և ապօրինի:

Տ. ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Ղևոնդ արքեպիսկոպոսին ժամանակ տալ մոր ժողով հրավիրել իր նախագահության ներքո՝ միություն և համերաշխություն ստեղծելու համար կողմերի միջև:

Արանով էլ հարցը չի լուծվում սակայն: Պառակտումը խորանում է և ազգային ողբերգության է հասնում:

1833 թվականի նոյեմբերի 12 թվակիր և համար 1341 կոնդակով Տ. Խորեն Ա կաթողիկոս վրդովմունքով անդրադառնում էր սփյուռքի մեր ազգային-եկեղեցական խաղաղ կյանքը խանգարող «տխուր երևույթս իրադարձութեանց ի վիճակս արտասահմանահայ Հայոց», որոնք Հայոց Հայրապետի սիրտը համակում էին «վշտօք և տրտմութեամբ»:

Կաթողիկոսը նշում էր, որ սփյուռքի «յա-

մենայն վիճակն տեսանեմք զբարձրացուցեալ զգուխ իւր հոգի երկպառակութեան և կուսակցական վատթարագոյն պայքարաց, բաժանելով յերկուս ժողովուրդ մեր»:

Միյուրքում «երկպառակութեան և անկուպար կուսակցական խռովութեանց» հետեւանքով ստեղծված այս անառողջ, ազգավնաս, եկեղեցաքանդ կացութիւնը կաթողիկոսը համարում էր «իսկական խառնակութիւն բարեւոյնեան», և քույրին հորդորում էր «ի զգաստութիւն և ի խաղաղ գործակցութիւն», հետո մնալ «ի կուսակցական և ի քաղաքական պայքարաց, չգործածել զեռագոյն դրօշ և կամ զայլ ինչ նշանակ, որք ունին զբնոյթ քաղաքական, զի եկեղեցական և վարչական հաստատութիւնք նորա չեն ասպարեզ քաղաքական և կուսակցական պայքարաց, այլ հոգևոր շինութեան և խաղաղութեան»:

Հայրապետական այս հորդորներին վտըրաւորակական երեսփոխանները պատասխանում էին առաջնորդի սպանության կազմակերպմամբ:

1833 թվականի դեկտեմբերի 25-ին, կիրակի, ա. պատարագի ընթացքում, դաշունահաւոր սպանւում էր ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Ղևոնդ արք. Դուրյանը, որը զոհ էր դառնում իր պարտականությունների կատարմանը, իր դեպի Մայր Աթոռ ունեցած որդիական սիրույն և հնազանդութեան:

«Այս ոճիրը րմբոստացուց քույր մաքուր մտքերը հայ ժողովրդի գավակներում: Կրդատապարտեմք այս ոճրագործությունը. կդատապարտենք այս ոճրագործության շարժառիթը: Կդատապարտենք այս ոճրագործությունը խորհույներն ու վճռույնները:

Կդատապարտենք, որովհետև այս ոճրագործությունը նախատինք մըն է Հայց. եկեղեցւոյ դեմ, հայ ժողովրդին մաքուր և երկյուղած զգացումներուն դեմ, հայ եկեղեցւոյ հոգևորականության և սնոր վերին իշխանության դեմ», գրում էր Բարսեղ Ա կաթողիկոսը «Հասկ»-ում (1833, էջ 61—62):

Թորգոմ պատրիարք «Տխուր ախտանշան» խմբագրականի մեջ խոսելով գործված անլուր ոճրի մասին, նշում էր, որ սույն ոճիրը «հանկարծական և կույր դիպվածի մը բնույթը չէ ունեցած բնավ» ... Ոճրի ծրագրի գարգացման և գործադրման «հանգրվաններն եղած են 2իկագոյի արվեստահանդեսը, Ուստրի դաշտահանդեսը և Նյու-Յորքի խիփիմովան ճաշկերույթը» («Սիոն», 1833, էջ 35—36):

Թորգոմ պատրիարք միաժամանակ նշում էր, որ Դուրյանի սպանությանը ոչ միայն մեծ է հայ եկեղեցու և ազգի կորուստը, այլ նաև «անհույս պահ մեծ և զարհուրելի է կորանքող, զոր սահմանս ազգովին կունենանք», և

ավելացնում էր. «Մենք երկյուղած սիրով կխոնարհինք՝ ամեն բանե առաջ հայ եկեղեցւոյ զաղափարին և Մայր Աթոռ սկզբունքին համար զոհված իսկապես անձնվեր պաշտոնակցի մը անվան և հիշատակին առջև» («Սիոն», էջ 32):

Խորեն Ա կաթողիկոս 1834 թվականի մարտի 16-ին հաւար 20 սրբատառ կոնդակով դատապարտում էր գործված անլուր ոճիրը.

«Դատապարտելի է ոճիրը, որ կատարեցաւ ի վերայ բարձրաստիճան պաշտօնէին եկեղեցւոյ, որ ըստ բարոյական պարտուցն և հայրական սիրոյն, զոր ունէր նա առ հօտն իւր, և ըստ հրահանգաց Մերոց առաջնորդէր (ընդգծումը մերն է—Ա. Հ.) ի շաւիղ խոհմութեան և ազգաշահ գործունէութեան... քանալով հեռի պահել ի մոլորութեանց և յազգիս վնաս գործոյ: Նզովք հասարակաց համարեմք զայդպիսի ոճիր անլուր»:

Հայրապետական կոնդակը «Յայտնելով զխորին Մեր վիշտ և գցաւ վնաս տարապարտ եղերական մահուան որդւոյ Մերոյ սիրելւոյ», որը կատարում էր «զգաստութիւն Մեր յօգուտ եկեղեցւոյ և սիրեցեալ ժողովրդեան», կոչ էր անում «զգաստանալ, թողուլ զանօգուտ վեճ և գերկպառակութիւն, հեռի մնալ մանաւանդ յանգուսպ գործողութեանց, որք վնասաբերք են և անվայել բարեկիրք: ազգի և ժողովրդեան, ոչ ի շահ բնիկ հայրենեաց Խորհրդային Հայաստանի և կառավարութեան հասեալ մեզ ի բաժին, որպէս զիրական և զթանկագին ժառանգութեան, խաղաղ պահպանութիւն, որոյ խարխիս յուսոյ և արմատ կենդանութեան է ըստ իմաստուն ասացածոյ, թէ—ծառն արմատով է ծառ և տուն՝ հիմամբ»:

1834 թվականի մայիսի 24-ին Տ. Խորեն Ա կաթողիկոս, Գերագոյն հոգևոր խորհրդի հետ միասին, հանգամանորեն քննության էր առնում Ղևոնդ արքեպիսկոպոսի սպանությունից հետո ԱՄՆ-ում ստեղծված կացությունը:

Գերագոյն հոգևոր խորհուրդը քննության էր առնում և հաստատում հետևյալ կացությունը.

1. Անկարելիություն երկու հոսանքների համագործակցության.
2. Հայրապետական իշխանության անհնազանդ վտըրամասնական կողմի անցատնդական գործը և ժողովրդին ու հոգևորականությանը պատակտույ լիորոճելը.
3. 1833 թվականի սեպտեմբերին երեսփոխանական ժողովների գումարման և այլ հարցերի վերաբերյալ տեղում քննություն կատարել, արդարություն ու նշանարտություն Երևան հանել և թեմի միությունը վերահաստատել.

4. Հատուկ հայրապետական պատվիրակ ուղարկել տեղում կազմությունը ուսումնասիրելու և Մայր Աթոռ զեկուցելու համար.

5. Հայրապետական պատվիրակի տեղեկագիրը առանալուց և իրական վիճակի մասին կատարելապես իրազեկ լինելուց հետո պատե՛մ ժամին ընդհանուր եկեղեցական ժողով հրավիրել.

6. Անջատողական գիծ տանող և գրգռիչ քարոզներով ժողովուրդը պառակտող, հոգեվոր իշխանության անհնազանդ ութ քահանաների պարագլուխ Ղևոնդ վարդապետ Մարդուկեայանին և Նշան քնն. Փափազյանին կարգալույծ հռչակել, «ի խրատ ե ի զգուշութիւն» մյուսների.

7. Եկեղեցու և հայրապետության հավատարիմ քահանայության հորդորական և խրախուսական խոսք ուղղել «ի տրիտուր Երցա անձնուէր գործունեության և ի քաջաբերութիւն ապագայի».

8. Նախատակ Դուրյան արքեպիսկոպոսի

աճյունը ամփոփել նրա անվան նվիրված նորակառույց ս. Ղևոնդյանց եկեղեցում.

9. Մայր Աթոռի հավատարիմ ազգային-եկեղեցական կենտրոնական վարչության միջոցով հայտարարել, որ փոքրամասնության կենտրոնական վարչության նկատմամբ «արձակված հայրապետական որոշումը մնում է իր ուժի մեջ, որի հետևանքով պիտի դադարեցնի նա իր հակասահմանադրական և ինքնիշխանական գոյությունն ու գործունեությունը և սույսն ամերիկահայ թեմի միությունն ու միիշխանությունը վերահաստատելու հայրապետական նոր տնօրինության»:

Այնուհետև ևս Տ. Խորեն Ա. կաթողիկոս, միշտ հեռատեսությամբ, համբերատար ուժով, բայց վիրավոր սրտով, աշխատել է մեղմել սփյուռքում բորբոքված կյանքը, հաշտեցնել կողմերը, վերացնել գայթակղության արմատները և բոլորին համախմբել հայ եկեղեցու շուրջ, ս. Էջմիածնի հովանու ներքո:

Հայ եկեղեցու բարեկարգության հարցը Տ. Խորեն Ա. կաթողիկոսի օրով

Տ. Խորեն Ա. կաթողիկոսի երրորդ կարևոր գործը հայ եկեղեցու բարեկարգության հարցով զբաղվելն էր:

1882 թվականի նոյեմբերին, 10—13 օրերին, Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի երրորդ հարցն էր Հայաստանյայց եկեղեցու բարեկարգության հարցը: Այս հարցի մասին Գեորգույն հոգևոր խորհրդի զեկուցումը ներկայացնում է տ. Գևորգ արքեպիսկոպոսը:

Այդ զեկուցման հիման վրա ժողովը հաստատում է հանգուցյալ Գևորգ Ե կաթողիկոսի կանոնական հիմն լոնդակները (1817 թ. համար 878, 1822 թ. համար 844, 845, 1828 թ. համար 850, երկու կոնգրակ):

Զեկուցագրում հայ եկեղեցու բարեկարգության և եկեղեցական սահմանադրության վերաբերյալ այլ հարցերի մասին ժողովը հանձնարարում է բարձրագույն հոգևոր իշխանության, մասնագետների միջոցով ուսումնասիրել հարուցված հարցերը, ապա այն ենթարկել համաժողովրդական քննության, և Տաճկ կիլիկիայի, Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքների և թեմերի կարծիքները լսելուց հետո, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ Գերագույն հոգեվոր խորհրդի ընդլայնված նիստում մշակել և արդյունքը հրատարակել, և ապա մերձավորագույն ազգային-եկեղեցական գումարվելիք ժողովում առաջարկել ի վերջնական քննություն և հաստատություն:

Տ. Խորեն Ա. կաթողիկոս 1888 թվականի հունիսի 1-ին գրած իր անդրամիկ կոնգրակում խոսում էր ազգային-եկեղեցական ժողովի որոշումների կատարման առնչությամբ նաև հայ եկեղեցու բարեկարգության և եկեղեցական սահմանադրության մասին «ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի... կազմել նոր սահմանադրութիւն, թլխեալ ի նուիրական և ի պատմական աւանդութեանց եկեղեցւոյ մերոյ, ի նկատ առեալ և զբազմատեսակ իրաւակարգ ժողովրդոց, յորոց միջի բնակեալ կան հատուածք հաւատացելոց մերոց, բարեկարգել և նորոգել զհնացեալ սովորութիւնս և կարգս, որք կարօտին սրբազրութեան... ի սահմանս իմաստուն խոհականութեան և զգուշաորութեան»:

Այս ձևով Տ. Խորեն Ա. կաթողիկոս հայ եկեղեցու բարեկարգության հարցը պաշտոնապես դնում էր հանրության առաջ:

Այնուհետև Տ. Խորեն Ա. կաթողիկոս ազգային-եկեղեցական ժողովի այս որոշման և ցանկության հիման վրա պատրաստում է Գերագույն հոգևոր խորհրդի հետ եկեղեցական բարեկարգության և եկեղեցական սահմանադրության մասին ընդարձակ մի զեկուցում և 1937 թվականի օգոստոսի 1-ին համար 417 սրբատառ կոնգրակով ուղարկում է Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոսին՝ հանձնարարելով ազգային-եկեղեցական ժողովի որոշման մեջ ճշված եղանակով քննարկել և ապա արդյունքը իր

եզրակացությամբ ներկայացնել Մայր Աթոռ՝ Վերջնական խմբագրության և տնօրինության համար:

Տ. Խորեն Ա կաթողիկոս իր կոնդակում նախ նշում է, որ «քրիստոնեական կրոնի, հավատի դավանության, եկեղեցական խորհուրդների և ձեռնադրության կարգի հիմունքները», որոնք բխում են Ավետարանի ոգուց, առաքելական քարոզություններից և երեք տիեզերական ժողովների կանոններից, բոլոր ուղղափառ եկեղեցիների՝ այդ թվում նաև հայ եկեղեցու մեջ «մինչև այսօր մնացել են անփոփոխելի և անորոշվելի»:

Այնուհետև մեր եկեղեցու «հոգեբույժ և շնորհալից հայրապետներն ու վարդապետները պայծառացրին և զարդարեցին աստվածապաշտության կարգը աղոթքներով և հոգևոր երգերով, եկեղեցական տոներ և հանդիսություններ սահմանեցին»:

Մեր հայրապետներն ու վարդապետները այս սկզբունքի յուրի տակ «եկեղեցու կարիքները միշտ իրենց ուշադրության կենտրոնում են պահել, յուրաքանչյուր ժամանակի հանգամանքների համեմատ»:

Մեր օրերում էլ, նշում է կաթողիկոսը, Գևորգ Ե-ի օրերից սկսած, ստեղծված նոր իրադրության մեջ, եկեղեցու պետությունից բաժանված իննելու փաստի առաջ, «բարի խորհուրդ ծագեց Մայր Աթոռում ձեռնարկել եկեղեցու գործերի և պաշտամունքի բարեկարգության, եկեղեցական ժողովների միջոցով»:

Կոնդակում Տ. Խորեն Ա կաթողիկոսը խոսում է հայ եկեղեցու բարեկարգության հարցի շուրջ Գերագույն հոգևոր խորհրդի կազմած զեկուցումի մասին՝ հաստատելով, որ ազգային-եկեղեցական ժողովի հրահանգի համաձայն Մայր Աթոռում կազմվեց հայ եկեղեցու կարգ ու կանոնի հմուտ հոգևորական և աշխարհական անձերից բաղկացած մի հանձնաժողով, որը կազմել է մեր եկեղեցու բարեկարգության այս ծրագիրը:

Տ. Թորգոմ պատրիարք, որը ըստ հայրապետական կոնդակի հրահանգի նշանակվել էր «որպես Մեր ներկայացուցիչը սվյուրքում և այս գործին դեկավար», այս առթիվ «Սիոն» ամսագրում (1937, էջ 298) հրատարակելուց հետո հայ եկեղեցու բարեկարգության մասին հայրապետական կոնդակը (էջ 293) և նրա աշխարհաբար թարգմանությունը, «Բարեկարգություն հայ եկեղեցվո» իր բովանդակալից խմբագրականի մեջ, հարցը բազմակողմանիորեն քննության առնելով իր բոլոր կալմբերով, նշում էր, որ «բարեկարգությունը անհրաժեշտ է թե՛ իրականության և թե՛ հասարակաց զգացման մեջ... Նույն ատեն ծանրակշիռ հարց է որ կղբվի մեր առջև, հարկ է անոր մոտենալ վերին աս-

տիճանի զգուշությամբ, զգաստ հոգովով, լուրջ միջոցներով, երկյուղածությամբ և իմաստությամբ միանգամայն»:

Հայ մամուլը նույնպես լայնորեն քննության էր առնում և՛ հայրապետական կոնդակը, և՛ հարակից զեկուցումը՝ «Զեկուցումն հայոց եկեղեցու բարեկարգության մասին»:

Զեկուցման մեջ ներկայացվում է հայ եկեղեցու բարեկարգության ծրագիրը ըստ հետևյալի.

1. Միասկան-աղայողական խնդիրներ
 - ա) ժամանակագրություն.
 - բ) եկեղեցական տոներ.
 - գ) եկեղեցական խորհուրդներ և սրբազան արարություններ.
 - դ) Մաշտցի կրճատման խնդիր:
2. Ընդհանուր հարցեր
 - ա) հայ հոգևորականության ցենզի (արտոնություն, տիտղոս, ուսումնական աստիճան) խնդիր.
 - բ) կուսակրոն հոգևորականություն.
 - գ) ամուսնական և ամուսնալուծական հարցեր.
 - դ) նոր տոմարի հարց.
 - ե) եկեղեցական սքեմի փոփոխության հարց.
 - զ) աշխարհիկ հոգևորականության ավարտության հարց.
 - է) Պահքի վերացման հարց.
 - ը) աստվածաշատության լեզուն:

Տ. Թորգոմ պատրիարք սույն զեկուցումը գնահատում էր որպես «գնահատելի լայնամտությամբ» կազմված ոչ թե «խսկալես ծրագիր մը, այլ հարցարան մը... նպատակ ունենալով դյուրացնել հանրային կարծիքը և ժողովական տեսությունները մշակելու և հավաքելու գործը...: Ծրագիրը ի վերջո պետք է կազմվի հանրային կարծիքը հավաքել, դասավորել և կրոնական ու եկեղեցական հմուտ անձերու կողմե մասնագիտական քննության մը ենթարկել ետք, Գերագույն հոգևոր խորհուրդին և Գվիրապետական Աթոռներու տեսությանց հետ՝ ներկայացնելու համար ազգային-եկեղեցական ժողովի վավերացմամբ և հայրապետական հաստատմամբ օրինականաբար համարվերջնապես» («Սիոն», 1937, էջ 299—300):

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով հայ եկեղեցին մասնակցում է 1937 թվականի օգոստոսի 3—18 օրերից Էդինբուրգում գումարված միջեկեղեցական ժողովին: Հանուն Մայր Աթոռի ժողովին մասնակցում են որպես հայ եկեղեցու ներկայացուցիչներ, Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, Ռումինիայի առաջնորդ տ. Հուսիկ արքեպ. Ջոհրաբյանը և Մանչեստրի հոգևոր հովիվ տ. Մատթեոս արքեպ. Իճեյանը:

Հայ եկեղեցու պատվիրակները, հանուն

Ամենայն Հայոց կաթողիկոսի, ողջունել են համագումարի բացումը՝ ժողովի աշխատանքներին հաջողություն մաղթելով, որ «Աստուծո օրհնությամբ արդյունավոր կեր-

պով հառաջ վարե օրակարգի հարցերը, սիրո և խաղաղության միմուրտի մեջ» («Արևիկ», 1937, էջ 321—322):

Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահը

1938 թվականին, ապրիլի լույս 6-ի գիշերը, 85 տարեկան հասակում և իր հայրապետության 6-րդ տարում վախճանվում է Տ. Խորեն Ա կաթողիկոսը՝ սրտի կաթվածից:

Տ. Գևորգ արքեպ. Չեղեքյանը, որ 1936 թվականի ապրիլ 18 հայրապետական և համար 820 կոնդակով նշանակվել էր տեղակալ Ամենայն Հայոց կաթողիկոսի, ապրիլի 11-ին հեռագրում էր Երուսաղեմի տ. Թորգոմ պատրիարքին Հայոց Հայրապետի մահը. «Վշտով հայտնում են որ Խորեն կաթողիկոս ի Տեր հանգչավ սրտի կաթվածից: Խնդրում են տնօրինել պատշաճ հաղորդելու քույր թեմերին»:

Այնուհետև, 1938 թվականի մայիս 24 թվակիր և համար 180 պաշտոնական գրությամբ տեղակալ տ. Գևորգ արքեպ. Չեղեքյանը հետևյալ շրջաբերականն էր ուղարկում նվիրապետական Աթոռներին, թեմերին՝ Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահվան առիթով: Շրջաբերականի տակ ստորագրել էր նաև հանուն Գերագույն հոգևոր խորհրդի Արևելյան արքեպիսկոպոսը.

«Նորին Սուրբ Օծություն Տեր Խորեն Ա կաթողիկոսը տարվույս ապրիլի լույս 6-ի գիշերը հանգչավ ի Տեր սրտի կաթվածից: Գերագույն հոգևոր խորհուրդը իսկույն ևեթ հաղորդեց այս մասին կառավարության, որի հետևանքով Երևանից ժամանեցին թիշկներ, որոնք՝ մանրագին քննությունից հետո՝ հայտարարեցին թե հանգուցյալ Հայրապետի մահը տեղի է ունեցել սրտի կաթվածից: Կառավարության առաջարկությամբ և Գեր. հոգ. խորհրդի համաձայնությամբ թիշյալ թիշկները պրոֆեսոր Ծեկ-Հովսեփյանի գլխավորությամբ դիաֆերենցիա հանգուցյալի դին, որով վախճանապես հաստատավեցավ թե՛ Խորեն Ա կաթողիկոսի մահը հետևանք է եղել սրտի կաթվածի:

Անմիջապես հեռագրվեցավ Տանգ Կիլիկիո շնորհազարդ Տ. Ամակ Բ կաթողիկոսին, սուրբ Երուսաղեմի և Կ. Պոլսի ամենապատիվ պատրիարքներին, տ. Թորգոմ պատրիարքին խնդրվեց իրազեկ անել արտասահմանի քույր թեմերին Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահվան մասին՝ կարգադրելով հանգուցյալի թիշատակին հոգեհանգիստ կատարել: Նույնիմաստ հեռագրեր ուղարկվեցան նաև համամիութենական հանրապետություններում գտնված քույր թեմերին: Մատուցվեցավ հանդիսավոր սուրբ պատա-

րագ և կատարվեցավ հանգուցյալի օծումն ու թաղումը:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի վաղաժամ մահը խոր վիշտ պատճառեց սուրբ Էջմիածնի միաբանության, սակայն աշխարհի ամեն կողմից և միութենական սահմանի հանրապետություններից տեղացող վշտակցության, սիրո և հավատարմության զգացմունքներով ի հեռագրները սու պատմական Մայր Աթոռ ս. Էջմիածինը մխիթարում և քաջալերում են մեզ:

Գերագույն հոգևոր խորհուրդը բերում է իր շնորհակալիքը շնորհազարդությանը (Ամենապատվությանը, գերաշնորհությանը, գերապատվությանը և այլն) և հոտի (թեմի) հավատացյալ ժողովրդին՝ Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահվան առթիվ արտահայտած ջերմ ցավակցության ու քարեմաղթության համար: Գերագույն հոգևոր խորհուրդը կատարելապես հավատացած է, որ թե՛ Ձեր և թե՛ հայ հավատացյալ ժողովրդի հավատարմության և քարայցականության զգացմունքները միշտ վառ ու կենդանի կմնան առ ընդհանրական Հայրապետությունն ու առ Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Աղոթենք հարձրյալին, որ պարգևե Ամենայն Հայոց Հայրապետության և ս. Էջմիածնին անասանություն և հաջողե Հայաստանյայց քույր ավանդակալ կարգերի համաձայն՝ զումարել ս. Էջմիածնում համագլային եկեղեցական ժողով և ընտրել նոր ընդհանրական Հայրապետ: Հայաստանի խորհրդային Առցալիստական Հանրապետության քարեհամ վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ հաստատուն գրավական է սույն հարցի քարվոք լուծման:

Ընդ սմին Գերագույն հոգևոր խորհուրդը անհրաժեշտ է համարում հաղորդել Ձեզ, որ հանգուցյալ Տ. Խորեն Ա կաթողիկոսը 1936 թվականի ապրիլի 18-ի հայրապետական կոնդակով Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չեղեքյանին կարգել է Ամենայն Հայոց կաթողիկոսության տեղակալ: Գերագույն հոգևոր խորհուրդը բոլոր սմին ներմակում է թիշյալ կոնդակի վավերացրած պատճենը»:

Գերագույն հոգևոր խորհուրդը 1938 թվականի մայիսի 24-ին և համար 228 երկրորդ շրջաբերականով հրահանգում էր.

«Գերագույն հոգևոր խորհուրդը սույն շրջաբերականով հրահանգում է Հայաստան-

յայն եկեղեցու բոլոր թեմակալ առաջնորդներին՝ հանգուցյալ Վեհափառ Հայրապետի օծման և անվանակոչության առթիվ փոխանակ հայրապետական մաղթանքի՝ կատարել հոգեհանգստյան պաշտոն, իսկ ս. Էջմիածնի տոնին և նոր տարումն կատարել մաղթանք Ամենայն Հայոց Հայրապետության հարատևության և անասանության համար:

Այլև այսուհետև շարունակել հիշատակել հանգուցյալ կաթողիկոսի անուճը պատշաճ ձևով, մինչև նոր Հայրապետի ընտրությունը: Վերոհիշյալը հաղորդվում է ի գիտություն և ի գործադրություն թեմիդ, բոլոր եկեղեցիներին»:

Հանգուցյալ կաթողիկոսի թաղումը կատարվում է ս. Գարանե վանքում:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահը մեծ կորուստ էր հայ եկեղեցու համար:

Տ. Թորգոմ պատրիարք «Մեծ սուգը» խմբագրականի մեջ, մշելուց հետո Տ. Խորեն Ա կաթողիկոսի մահով «որքան ծանր է կորուստը գոր ազգն ու եկեղեցին կկրեն իր մահով», հորդորում էր հույսն ու հավատքը չկորցնել դեպի Մայր Աթոռն ու հայրենիքը. «Իմաստություն միայն պիտի ըլլար անշուշտ չկորսնցնել՝ հատկապես որևէ լավատեսություն շարունակելու վստահությունն Հայաստանի կառավարության քարեկամության

և ազգին լրջմտության մասին, որոնք այնքան գեղեցիկ կերպով ի հայտ եկան Գևորգ Ե-ի մահեն մինչև ողբացյալ հոգեւոյս Հայրապետին ընտրության օրերը: Բայց ամենն ավելի անհրաժեշտ է որ սփյուռքը իր Աթոռներով, թեմերով, ժողովներով և ժողովրդով պահե իր հարգալիզ դիրքը Էջմիածնի զաղափարին հանդեպ. զահակալը չկա ժամանակի մը համար անշուշտ, բայց կմնա զահը (ընդգծումը մերն է—Ա. Հ.), իր շուրջը ունենալով իրենց նվիրյալները: Պետք է պատկառ մնալ այն բոլոր տնօրինություններուն, որոնք եղած են որևէ գործի և խնդրի մասին հանգուցյալ Հայրապետին օրով. պետք է զգուշանալ իրավանգ և իրավասությանց որևէ խնդիր հարուցանել և հանրային կարծիքի վրդովում հառաջ բերելով դժվարացնել գործը Գերագույն հոգևոր խորհրդին և տեղակալին, որոնք, անշուշտ, որևէ ուրիշներե ավելի խելամուտ և իրազեկ ընդհանուր կացության, կկատարեն կարևորը գիտակցորեն և սիրովն ազգին և եկեղեցվույն:

Այս կպահանջե երանաշնորհ հանգուցյալին հիշատակին հարգանքը և ազգին ու եկեղեցիին օգուտն ու պատիվը» («Որոհ», 1988, էջ 193):

(Եարունակելի)



Հ. Ճ. ՄԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏՑ

Ժ
ԾԱՆԱԴԱՐՈՂ ԽԱՁԻ

I.—Չարաշուք մանգաղը

Ձգույշ, ընթերցող, Հանն հողաթափերդ. Գողգոթա պիտի քարծրանանք, Հայոց պատմության այն ահավոր պահն է՝ երբ ամբողջ ժողովուրդ մը Գողգոթա ելավ խաչը ուսին:

Եթե պիտի չկրնաս հուզումդ զսպել, մի՛ կարգար, ընթերցող, դուն այս գլուխը մի՛ եթե այնուամենայնիվ փորձվիս կարգալ այս դժնե գլուխը՝ դիպցիր որ արցունքով է՝ զըրված ան:

Ավա՛ղ, երբեմն քաջ կնկատենք մենք, զմեզ, կկարծենք թե պիտի կրնանք պաղարյուն նայիլ երեկվան վրա, ու չհուզվիլ դայի պատմած ատենն: Ի զուր կհավատանք թե տարիներուն հետ կսկիծները կանհետին, ու կմեղմանա սուգը: Պատրա՛նք, Անոնք միշտ գո են մեր հույիներուն մեջ, ու օրվան հուգերն են որ մեզ կմոռցնեն պահ մը զանոնք: Հին օրերու աճյուններուն մեջ դեռ կապրին այնքան անուշ ու դառն վայրկյաններ, այնքան հույսեր ու հուսախաբություններ, վերելիք բոլորն ճիգեր ու փշուր-փշուր խորսալիւժ թևափներու, թռիչքի: Ու մենք, միամիտ մարդիկ, պահ մը կարծեր ենք թե գերեզման ենք դրեր մեր բովանդակ երեկը: Վա՛յ քեզի եթե փորձես գերեզմանին կափաբիշը վերցրնել: Վա՛յ քեզի եթե ուզես խառնել հին օրե-

րու մոխիրը, անթեղված կայծ մը բավ է կրուկին բռնկցնելու հին հուշումները...

Տեսանք թե ինչպես, 1915 ապրիլ 5/17-ին, ահավոր շարաթ մը կրացվեր հայ ժողովուրդի ճակատագրին մեջ, թե ինչպես անդոհանքով անցուցինք մենք այդ մռայլ շարաթը, եե ինչպես լուսցավ շարաշուք առտուն, որ ապրիլ 11/24-ն է:

Կոմիտասն երբ կրածնվեինք առտուն՝ տն ամուր էր իր հոգեկան կորուվին մեջ: Այդպիսի մի մնացեր էր ամբողջ օրը: Ամենուն շիտխած պահուն՝ ան իր ջիղերը ուժեղ կպահեր միշտ: Ինչ աշխատելու տրամադրություն ունեցիլ էր նույնիսկ այդ օրը՝ տեղյակ ըլլալով հանդերձ որ վտանգը ման կուզա իր գոտներուն առջի ալ:

Կոմիտաս նույնիսկ իր աշակերտներուն հետ պատարագի փորձ րրեր էր այդ օրը՝ Կանաչ կիրակիին կրկին անդամ երգելու համար զայն Ղալաթիո եկեղեցին:

«Մուժը իջած էր և ամեն ոք կաճապարեր իր տեղը հասնիլ», կպատմե Միհրան Թումանյան: «...Իսկ անոնք որ Բերայի կողմերը կրնակեին, վարդապետին շուրջը բոլորված, խոսելով ու խնդալով կրարձրանային Ղալաթիո զառիվերեն, գեպի Բերա և Բանկալթի: Այդ շարաթ իրկունն էր որ Կոմիտաս վարդապետ իր աշակերտներուն «Քարի գիշեր» կմաղթեր և գոհունակ ու երջանիկ՝ իր տունն ներս կմտներ»:

Մայրաքաղաքին մեջ դեռ վրդովված չէր մարդոց առօրյա կյանքը:

* Ետունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ՊՊ Ա-ից, Ե-ից, 1966 թվականի ՊՊ Ա-2-ից, Ը-ից, 1967 թվականի ՊՊ Գ-2-ից և 1968 թվականի ՊՊ Ա-Գ-ից:

ճիշտ միևնույն օրը, Զավեն պատրիարքին կայցելել գերման դեսպանատան պաշտոնյաներին մեկը, զոհաւ. Մորթման, որ պաշտոն ունի կապ պահպանելու հայոց պատրիարքարանի հետ։ Եկած է առաջարկելու որ հայթուրք և գերման հանձնաժողովներ յրկկիկ զավառները սիրալիր կապեր ստեղծելու համար տարբերու միջև, ու այդ առաջարկը կուգար ընել ճիշտ պահու մը երբ թուրք իշխանութիւնները ձերբակալութիւններ սկսելու վրա էին արդեն Պոլսո մեջ, ձերբակալութիւններ՝ որոնցմէ չէր կրնար լուր չունենալ իր մեծավորը, Վանդեհհուլմը։

Այլուր պատմած եմ, ընդարձակ, թե ինչպէս անցուցի ես այդ օրը, և ինչպէս կրցա ճողոպրիլ ճիւղադին ճանկին, Լսեմ այստեղ, համառոտակի, թե Կոմիտասէն բաժնովելու հետո շունչ խմրազրատուն առի, և պատմեցի ինչ որ լսեմ էի։ Ապա դացի Գյուլհաննի հիվանդանոցը, և օգտովելու ներումին որ շնորհված էր փախստական սպացուններուն՝ բժշկական քննութիւն ներկայացաւ։ Բարբ-Ալիի պողոտային անցնելուս՝ Վարդգէսը տեսա որ գուրս կելլեր Թուրքաթի քովին, — որուն պացեր էր Թեոդիկի համար բարեխոսելու, — անոր սպառնալիքներուն տակ շշմած։ Ան ես կըզարթն թե պայթելու վրա է փոթորիկը։ Իրավալ, իրմէ հազիվ բաժնոված, կիմանայի թե արդեն չորս-հինգ հոգի ձերբակալած են օրցորեկով Բարբ-Ալիի շրջականերու հայ գրատուններին և սպարաններին։ Տեսնալու առանք չէր ա՛յլ Ուղղակի Շավարշ Միսաքյանին դացի, ու որոշեցինք հետքերնիս կորսնցնել։ Պետք եղավ սակայն որ խմրազրատուն հանգիստիմ, և իմացնեմ թե ձերբակալութիւններն արդեն սկսած են։ Քիչը միայն լուրջի առիկ վտանգը, ու շարունակեցին տնտնալ։ Մեկնելիս քիչ հետո ոստիկանները խմրազրատունը կոխեմ էին, ու առեր տանք ու՛ղ գտեմ էին։

Ոստիկանութիւնը այն գիշեր չգտաւ գիս տունը։ Բարբ մարդիկ, — որոնցմէ մեկը կյանքիս ընկերը պիտի դառնար հետո, — այն իրիւնը իրենց վար գրին գիս, ու հանձնառու եղան ինձ ընկերանալ հաջորդ առտուն զնայի քաղաքին դուրս, այնտեղ անցրնելու համար օրը։ Քաղաքին մեջ կրնալին գրծախտ բաներ պատահել։

Ու առտուն կանուխ փողոց կենտովինք։

Երբ Մեծ-փողոց կելլեմք հանրակառք առնելու համար զնայի Շիշի՛, կտեսնեմ մեկը մեզի կվազի հուլոված։ Կարապետ Թյուլպենտյանն է որ զիմացի Քյուրքճյան ղեղարանէն կուգա հետսպառ։

— Փախեք, կպոռա, անհետացեք մեջտեսին։ Գիշերը Կոմիտասը տարին տունն, քի մը անդի տուններն ալ գոհաւ։ Պաղքեկանք և գոկոտ։ Այլահիւրտին։ Կրսեն թե ուրիշ ղեռ

շատեր բռնած են գիշերը։

Կենտովինք հասած առաջին հանրակառքը, ու կերթանք օրը անցրնելու Լուրսիէն Բաղը, հայոց ղեռնադմանոցն քիչ անդին։ Սարսափ մը պաշարած է մեզ։ Զենք գիտեր ինչեր կրուան այդ պահուն քաղաքին մեջ, ու ինչ կրսպասեմ մեզ հոն։

Մութը կոխելու մոտ կղաղանք քաղաք։ Բալոթը, ընկճված երեւոյթ մը ունին, Կվախնաք որն է մեկուն մոտենալ ու բան մը հարցնել։ Մարդոց ղեմքերուն վրա գրված է արգեն ամեն ինչ։ Պետք է որ շատ մարդ տարած ըլլան տուններին որպէսզի բոլորը այսպէս լուռ ու զիսկիոր բալեն, փորձելով իրենց հուլումը ծածկել։

Կբալենք իրարմէն բաժնոված, ջանալով որ մեր ըովեն անցնողները մեզ չնկատեն, մինչև որ կերպով մը մենք մեզ տուն նետենք։

Հազիվ քաղաք մտած ենք՝ հանկարծ բարեկամներու խումը մը կելլի մեր գիւմը։ Կոմիտասի խումրին անդամներն են, բոլորն ալ կամ Իրավարանականն, կամ Կեդրոնականն ինձ գպրոցակից, — Վարդան Ազիլյուլանը, Գուրգեն էլմասյանը, Միհրան Թումաճանը, Հայկ Սեմերճյանը, և զեռ քանի մը ուրիշներ։ Կոմիտասի սաններն։ Վերջին իմացանք որ իրենցմէ համարձակողներ եղել են մինչև բանաւ երթալու և Կոմիտասի մասին հետաքրքրվելու։

Զիս տեսնելուն՝ անոնցմէ մեկը կպոռա։

— Ծոլո՛ւ, քեզ հո՞ս ձգել են։

Նշանացի կհասկցնեմ որպէսզի լռեմ, ու աբաղ մը կանցնիմ քովերնուն։

Այդ գիշերվրեն ա՛յլ կպահվորտիմ։ Ա՛հ, հիմա դուրին է բսել թե ա՛յլ կպահվորտիմ։ Կես գար հետո ալ զեռ սարսուռ մը կեմէն հոգիս երբ կհիշեմ մղձափանքի այդ զմեզակ պահերը, քոնվելու սարսափը որ ամեն վայրկյան կփոթորիկ բեղ, ու սե-սե լուրերը որ ամեն օր խուցղ կմտնեն։ Կրնա՞ս հուլումդ զսպել երբոր կիմանաս թե դուռն դուռ տակալին մարդ կրփնտրեն, կամ վարադուլիի ճեղքն երբոր կտեսնես փողոցն անցնող ոստիկանները։

Ամեն վայրկյան դուժ մը կբերեն քեզի։ Միրտ ունեցիր ու զիմացի երբոր քեզ բսեն թե երեք հարյուրն անցած է ձերբակալված մտավորականներուն թիվը ու անոնց մեջ բոլոր մտերիմներդ կան։

Շարաթներ կանցնին այսպէս։

Այդ առաջին օրերուն, անսնք որ ծվարած են ինձ պես հյուրերնկալ մեյ-մեկ հարկի տակ, չէինք ղդար զեռ աղետը իր ահափորութիւն մեջ։ Հարմարին ազդեցութիւն տակ կշշմի, կշմարի մարդ։ Պետք էր օրեր անցնելին, տարինն, ուսպեսզի ղդայինք թե ինչ պատահած էր, ինչպէս խողխողված էր ժողովուրդի մը բովանդակ կեսը։

Քաղը, ուր Կոմիտաս կրնակեր, Բանկայթին, ամենն հայաշատներն մեկն էր Պոլսո թաղերուն: Ան զարհուրանքով արթնցեր էր ապրիլ 25-ի կիրակի առտուն, որովհետեւ ամեն փողոցն մարդ տարած էին:

Բանկայթի բռնած էին, օրինակ, Կոմիտասն զատ, Վարուժանն ու Ռուբեն Սևակը, Սարգիս Մինասյանն ու Արամ Անտոնյանը, դոկտ. Ալլահվերտին ու դոկտ. Նազաշյանը, Հրայր Սուրենյանն (Արմեն Տորյան) ու Գեղամ Բարսեղյանը, Ներսես Փափազյանն ու Բարսեղ Շահպազը, Շավարշ Քրիսյանն ու Արուստի Հայրիկյանը, Աղեքսանդր Փանոսյանն ու Ընովք Շահենը, Խաչիկ Խաթրեճյանն ու Ժագ Սայապալյանը (Փայլակ), Արիս Խորախյանն (Խորախի Տխրունի) ու Կիկոն (Քրիզոր Քորոսյան), դոկտ. Հակոբ Թոփճյանն ու դոկտ. Պաղիբ, ու այս մտավորական մարդոց կողքին վաճառականներ ալ՝ Ռոստոմ Ռոստոմյանի, Վրթանես Մարտիկյանի, Նոյիկ Տեր-Ստեփանյանի, Հովհաննես Թերլեմեզյանի պես, Վարդան Դարակյոզյան քահանան, դեղագործ Հակոբ Նարկիսեճյանը, և հասարակ մարդիկ ալ՝ ոմանք իրենց ունեցած կապերուն համար կասկածելի դեմքերու հետ, ուրիշներ պարզապես թյուրիմացությանը բերված:

Կոմիտասի ձերբակալությունը շմենցուցեր էր թաղը: Մարդ չկար որ զայն չճանչնար, մարդ չկար որ պաշտամունք չունենար դեպի ան: Բայց ոչ ոք չէր համարձակեր անոր դռան մոտենալ այդ լարաշուք առտուն: Միակ հանդուգնը իր հայրենակից Կարո Ուշագլյանը կրչալ: Ահա թե ինչ կատարվեց ան:

«Պոլիս, 1915: Ապրիլի առտու մը կանուխ կատնվեի Բանկայթի մեկ դեղաբանը՝ քայնակալի մոտ: Ներս մտավ բժ. Ա. Նազաշյան՝ գլխարաց և շփոթ:

— Տղաք, Կոմիտաս վարդապետը տարած են այս դիշեր...»

Շյամած իրարու նայեցանք: Ոչ մեկ նշանակություն կրցանք տալ եղածին: Քիչ վերջ ուրիշներ եկան և սկսան թվել ուրիշ կալանավորներու անուններ, բոլորն ալ հանրածանոթ մտավորականներ: Մեր դարմանքը վախի փոխվեցավ: Վարկյան մը ուղեցի երթալ վարդապետին քնակարանը, տեղեկություն ատնելու համար, սակայն ետ կեցա, մտածելով որ կրնա հսկողության տակ ըլլալ:

Այդ միջոցին միտքս ինկան Մեհմետ էմին պեյր և Համտուլլահ Սուլայի, երկուքն ալ հիացողներ վարդապետին: Առաջինը քանի մը անգամ տեսած էի վարդապետին մոտ, երբ եկած էր իր մեկ յափածո գրութիւնը եղանակավորել տալու (է՛յ ի՛յնեմ, տի՛հ. ո՞վ ասեղս, կարե՞)՝ շոն ծանոթացած էինք իրա-

րու և այցնեումսը սոված էր ինձի որպեսզի իրեն այցելեմ: Երկրորդը, Համտուլլահ Սուլայի, տակավին ամիս մը առաջ, կարծեմ «Սապահ» թերթին մեջ գնահատական տուցեր նվիրած էր վարդապետին, անոր թյուրք Ռ. Տաղըի մեջ սոված երաժշտական մեկ դառախոսության առթիվ: Ուրեմն մտածեցի՝ հեռաձայնել: Պատասխանեցին թե Հ. Սուլային հոն չէր, հետո Մեհմետ էմին պեյր կանչեցին: Անոր տեղեկացուցի վարդապետին ձերբակալությունը՝ խնդրելով որ միջամտեն:

— Էֆենտիմ, ատիկա կառավարական գործ է, չենք կրնար որեւէ միջամտութիւն կատարել: Դեմ կարծեր որ ծանր պարագա մը կենա. թերես ազատ կարձակեն, ըսավ և գոցեց հեռախոսը»¹:

...Ո՞վ այն օրերու մեր միամտութիւնը: Այնպես կկարծեին մեզմե շատերը թե իթթի-հատի ծոցին մեջ, Քալեբթի կողքին, լավերն ալ կային, ու այդ լավերուն մեջ էին, օրինակ, գրագետ Համտուլլահ Սուլայի և քանաստեղծ Մեհմետ էմինը: Մենք դանդաղ երկուքն ալ ճանչցանք, ավա՛ղ, Համտուլլահ Սուլային ճանչցեր էինք երբ կխժժեք հայերը թուրք լեզուի ազավաղած ըլլալուն համար, ու երբ օվսանա կկանչեր Քուրանին, հետո պալն ճանչցանք երրորդ Բուրեշ էր իրիս թուրք դեսպան, այս անգամ արդեն Սուլայի թանրեռտի վերածված. ճիշտ է՝ հայեր ունեւ իր շրջապատին մեջ, հայ եկեղեցին եկավ անոնցմե մեկուն հարսնիքին, ու մասնակցեցավ հայ խնջուքներու, բայց իր խորքին մեջ մոլեռանդ թուրքն էր միշտ, ու իր դեսպանութիւն օրերուն ծագումով թուրքեր կկնտրեր Ռումանիո մեջ որպեսզի Քուրքիան շենցրենելու դրկն: Իսկ Մեհմետ էմինը, ավելի կանուխն ճանչցած էինք մենք զայն, երբ Ազատամարտ կհաճախեր իր քերթվածները կարդալու մեղի, երբ մեզ գովքը կընէր Վարուժանին՝ զոր ճանչցած էր Սերաստիա, իր կուսակալության օրերուն. մենք էինք որ Կոմիտասի մեկ համերգին տարած էինք զայն առաջին անգամ, ու իր քերթվածներու հայերենի թարգմանած էի: Մեզ հանդեպ իր ողորդ իրաւի վարկյաններուն ալ մոլեռանդ թուրք մտ կմնար միշտ, ու միշտ կերազեր Քուրանը, դեռ նոր, պատերազմի առաջին օրերուն, ան սովքն էր հյուսեր, թէյ թյուրք ուլան (թուրք արթնցիր) խորագրով քերթվածն մը մեւ, Քուրանին և իրմե թխող գեղերուն՝ որոնք դարձաւ պիտի համախմբեին միակ մականի մը տակ: Այդ քերթվածին մեջ ան կրսեր:

Ով իմ աղգս, հարուր միլիոն համրանքով Սառփ, Կովկասներ և Արցախս

¹ «Արածախն», 1940, էջ 66—67:

Պիտի երրեք չգատեն թուրքը իր թուրք եղ-
բորմեն,
Քու սամանդ, նաղիրդ, քու իլխանդ, Բա-
րենդ
Սղրալրական մեր ազգը նույն երազին
կտանին.
Միլիոն հաղվող այս ցեղին բոլոր սրտերն
հրապաս
Պիտի տրուինն զերդ մեկ սիրտ՝ սիրովն
համակ թրքություն
Համատարիմ զբրդըներն ու ջրտնաթոր
թաթարներ.
Խիստ աղնարկով թունդուղներն ու մաշար-
ներ ժպտաղեն:

Անապատներեն ուղի կամ տար
Հեռվի, մոտի հողերեն
Կապույտ, կանաչ լիճերեն
Բարձունքներեն, ձորերեն
Հեղեղի պես պիտի դան՝ դահուղ գլուխ խո-
նարհեր:

Սույն Համառույլա՝ Սուղհի՝ ու սույն Մեհ-
մետ էմիր՝ պիտի ուղեին Կոմիտասը փրկ-
կել իրենց երեք եղբորը՝ Թալեաթին ձա-
կեն...

Անոնք քար սրտով, ու թերես ալ հրճվա-
նով պետք է իմացան ըլլալին որ դահիբ ի-
րենց բուլներեն խառն կաանի Կոմիտասը.
Վարուժանը և բոլոր մյուսները... Բայց այդ
արգելք պիտի չըլլար որ նույն այդ Մեհմետ
էմիրը զրկատական էջ մը հորինեն 1935-ին,
Կոմիտասի մահվան դուժը առնելուն...

Կոմիտաս նույն այդ առտուն հանդիպում
պիտի ունենար իր աշակերտներուն հետ, ու-
րոնք պատարագի արարողությանց մասնակ-
ցելն հետո Ղալաթիո եկեղեցիին մեջ՝ պիտի
զային իր մոտ: Ու իրավ ալ անոնցմէ խոսք
մը, անտեղյակ դիժուլման պատահածներուն,
ճամփա կելլն դեպի վարդապետին քնակա-
րանը: Միհրան Թուրանան կպատմե թե
ողեւ մոտեցած չէին Կոմիտասի տան, հրք
զիմացնին կելլն իրենց ընկերներեն մեկը,
որ առանց կանգ առնելու կփափոս՝

— Շուտով տուններնիդ դացքը: Հեռուցե-
րարմն դատվեցք...

Զհասկցան թե ինչու...:

Արգեն հասած էին վարդապետին տանը
դուռը: Զարկին զանդակը: Վարպետը— իր
ձառան—բացավ դուռը: Ալլալված կմկմաց.

— Խայր Սուրբ տարան...

Աշակերտները քար կարեցան իրենց լցու-
ցած ցնցումեն: Սվ խոր հուզումով լսելիին լին
ինչպես երկու պաշտոնյաներ ոստիկանի մը
հետ զիջեցված մութին դուռը զարկին. ներս
եկան և հարգանքով հրավիրեցին Կոմիտաս
վարդապետը, որ բարի ըլլա հրամանել մոտա-

կա պահականոցը մեկ քանի բացատրու-
թյուններու համար...

— Խայր Սուրբ առան, ֆայթոն դրին ու
տարան, կկրկներ Կոմիտաս վարդապետի
անձնվեր խոհարարը...

Աշակերտները, սարսափած իրենց հա-
ղորդված այդ յուրեն, հանդգնությունը կու-
նենան դեպի մոտակա պահականոցը նրմա-
լով տեղեկություն առնելու համար իրենց
վարպետին մասին:

«Այնանգ քաղաքավարությանը կրտի ի-
րենց թե Կոմիտաս վարդապետը Պուլսի բան-
տի հյուրանոցը կդռնվի հիմա: Իսկ իրենց
հարցումին, թե կրնան երթալ և զինքը տես-
նել, հեռուն նստած սև աղնոցավոր մեկը
կուստասխանե.

— Հայ-հայ, էֆենտիմ... ինչու չէ...

— Ըսել է դուք Փուլիքաս Էֆենտիմ: աշա-
կերտներեն եք, հայ...

— Մաշալլահ... մաշալլահ...

— Գացեք և ձեր խոնարին հալը— Պաթլըլը
հարցուցք...

...Ու կսրոշեն որ իրենց ընկերներեն: Հայ-
կերն ու Վաղարշը—որ Պուլսի կողմը կրնա-
կեին—իրենց ճամփուն վրա, երթալին կեդ-
րոնական բանտի հյուրանոցը և Կոմիտաս
վարդապետը տեսնեին և...

...Նվ երբ կմոտենան բանտի սահմաննե-
րուն, երկու ոստիկաններ կհարցնեն.

— Ո՛ւր կերթաք...

— Բանտ կերթանք մեր ուսուցիչը Եհանե-
լու...

— Եկեք հետներիս, կըսեն ու իրենց բով
կանգնած ուրիշ երիտասարդի մը հետ, Էրե-
քը մեկ կտանին պահականոց: Կարգով դա-
նոնք կհարցափորձեն: Իրենց ընկերայուց ե-
րիտասարդին հարցաքննությունը կիրկաշի,
որովհետեւ թոթով ըլլալով՝ խոսածը հաղիվ
կհասկցվեր: Մինչ այդ սենյակը կիտնվեր
ուրիշ ներկաներով, որոնք եկած էին նմանա-
պես իրենց սիրելիներուն ո՛ւր և ինչպե՛ս ըլ-
լալը իմանալու: Այս երիտասարդին թոթվա-
խոսութենեն զոգորգոված՝ ոստիկանապետը
կպոռա.

— Տեֆ քրեք սա Բերաթաները: Այստեղ
չուրիս-չոճուխի տե՛ղ է... Դուրս նետեցեք
սա փիճերը...

Հրամանը իսկույն կզործադրվի:

Արամ Անտոնյան, մեկը մեր այն մտավո-
րականներեն որոնք աքսորի բոլոր դարու-
րանքը ճաշակելն հետո, կըցան ողջ պառնալ
ետ, և մեզ պատմեցին իրենց ապրածնիդն
ու տեսածներեն, շատ նյութ տվավ հայ ժողո-
վորդի մարտիրոսացրության զրվագներեն:
Ան մեկն եղավ անոնմ որ Թեհլերյանի դա-

տաժարութեան ատեն քատմանցուցիչ առհիւ պատմեցին Քեռիկին դատարանին առջև ալ, և լույս աշխարհ հանեցին շատ բան ևղենի փաստաթուղթերն: Ան սկսաւ գլխի և արատարակել Փարիզի Արեւմտեան մեջ հոգւածներու շարք մը՝ Կոմիտաս վարդապետ արքայի մեջ խորագրով, առանց կոտորուած սակայն զայն ազարտելու:

Լույս տեսած հոգւածներուն մէջ տեսնալի զրկագներ կ'պատմեն այն զուգ մը որոնք մասին, զոր Կոմիտաս և ձերբակալուած իր մշուս ընկերները անցուցին Պոլսո կնիք ունեւան քանտին մեջ ապրիլ 24-ին և 25-ին Արամ Անտոնյանի պատմածները շահեկան են մանավանդ տնով որ միակն էն Կոմիտասի այդ երկու օրերուն մասին, մինչ իր արտոյի կյանքին մասին շատ սպիշ բան գիտենք՝ շնորհիւ իր վերապրող ընկերներն ու մանց պատմած հուշերուն:

Ինչ որ քացառապես շահեկան է Անտոնյանի հուշերուն մեջ այն պարագան է որ Կոմիտաս անոնց մեջ կ'ներկայանա իր հոգեկան քովանդակ կորովով, չղերով դեռ ամուր, և միշտ տրամադիր հեղինակ և կատակելու: Անտոնյան նախ կ'ակնարկէ Կոմիտասի ձերբակալութեան:

«Բանկալթի շրջանակը գործող գաղտնի ոստիկանները տեղյակ էին անշուշտ Կոմիտասի սովորութիւններուն և գիտեին որ կ'անուի տուն կ'առնար: Զինքը ձերբակալելու էին առանց երկար սպասումներու և զգուշութեան, ինչպէս պարտավորվեցան ընել մեղմ մեղմ շատերուն համար որ գիշերովան մեծ մասը դուրսը կ'անցընէինք մեր զրադումներուն քերմունքով: Եւ արդեն մենք տարբեր բարքի տեղ մարդիկ էինք, քան տարաբախտ վարդապետ, որ ոչ մեկ մտաւախութիւն կ'ներշնչէ իրենց: Կոմիտասի ձերբակալութիւնը, ինչպէս առհասարակ այդ գիշերովան քուր ձերբակալութիւնները, ալքի չէր զարկած, և չգիտցանք քնով թե ինչ պայմաններու մէջ տեղի ունեցած է:

Շուտով իմացանք թե եկեղեցականներ ալ կ'ան ձերբակալութիւններուն մեջ, և այդ առթիւ մեղի տվին Կոմիտաս վարդապետի անունը: Իրոք կ'անուի քերված էր բանտ, և Սյուպիան Մեքթեպի առաջնորդված: Վերջին պիտի իմանաինք թե իր ձերբակալութիւնն առաջին տեղեկութիւնն ունեցողը եղեր էր դուրս: Ավանտիս նազդաշյան, որ վարդապետին դրացի էր, բայց ոչ նույն գիշերը, այլ հաջորդ կիրակի առտուն: Կոմիտաս վանեցի սպասավոր մը ուներ, Կարապետ վարդապետ, որ վարդապետին տարվելն ետք ամբողջ գիշերը կ'ուսուցանէր անոր վերադարձին: Առտու կ'անուի: տեսնելով որ Կոմիտաս դեռ չէ դարձած:

կ'ուսնա դուրս: Նազդաշյանի տունը, զրեթ հեղուկ, և այնքան հոգւած, որ ամբողջ վայրկյան մը չի կրնար բառ մը արտասանել: Դուրսը կ'կարծէ թե Կոմիտաս հանկարծական տկարութիւն մը ունեցած է և իսկույն կ'սկսի հագովիլ ածապարանքով: Վերջապես Կարապետ կ'հաջողի խոսիլ ու կրնա օգրագին շնչառով մը:

— Տարա՛ն, Տոքթոր, տարա՛ն...

— Տո՛, ի՛նչ տարա՛ն:

— Հայր սրբ տարա՛ն:

— Տո՛ ա՛յ տղա, ո՛վ տարա՛ն:

— Բոլիսներ տարա՛ն, գիշեր տարա՛ն:

Նազդաշյան որուն բոլորովին տնհագւատալի կ'թվի վարդապետին ձերբակալութիւնը, կ'պարտաստվի դուրս ելլել, մինչև թագին պահականոցը երթալ և Կոմիտասը փնտրել, բայց ժամանակ չունենար, որովհետեւ քիչ ետքը ինքն ալ կ'ձերբակալվի:

Կոմիտաս այսպէս ինկալ դահիճին ձանկը...

IX.— Կեդրոնական քանտին մեջ

Մեծ մասամբ պահականոց պահականոց ստացուցին նախ գիշերը ձերբակալվածները: Կոմիտասը կ'թվի թե ուղղակի կ'զրոնական քանտ տարին, ու նետեցին Սյուպիանն ու խովուշը:

Հիմա այլևս խոսքը Արամ Անտոնյանին տանք:

«Ոչինչ անսովոր Կոմիտասի երեւոյթին մեջ: Իր համբավավոր «Քերթնեքել»-ն քերան էր միշտ, ինչ որ անշուշտ լավ նշան էր, և զայն առատորեն կ'բաշխէր ալ ու ձախ, երբ իր կրակոտ ու հեղինակամբ հորդուն նայվածքը, որ անընդհատ մեկին մուսը կ'ոստոստէր, հանկարծ մտերիմ դժմբ մը վրա կ'հանգչէր:

— Դո՛ւն ալ, Բերթեմեկ... եւ կ'ամ՝

— Զկրցա՛ր քարի մը տակ սողոսկիլ ու սրծիլ, ալ քերթնեքել...

Անշուշտ լավ գիշեր մը չէր անցուցեր Սյուպիան Մեքթեպի տակավին խոնավ տախտակամածին վրա: Բայց իր սովորական մահճակալն ալ փայտ մըն էր լոկ, նրբին սավանով մը ծածկված, և չէր սիրեր կակուղ անկողնի մեջ պառկիլ: Քիչ նեղվէր էր գիշերը, և այն ալ քաղմութենէն, մանավանդ սիկարեթներու ծուխնէն, որ պարզապէս կ'զգայնացնէր դինքը:

Երբ մեր մոտ եկավ, իր վիճակին վրա չէր խորհեր: Կամ գոնէ ներքին վրդովում մը մատնող բառ մը շարտասանեց, ինչպէս ուրիշ շատեր, ինք ալ հույս ուներ թե այս կատակը—բառը իրն էլ—երկար չի տեւեր, և թե պատրիարքն ու Ազգ. վարչութիւնը, օսմանյան երեսփոխանական ժողովի ազդեցիկ

* «Արեւմտեան», Փարիս: 1946, թիվ 5 և 6.

հայ անգամներուն, ի հարկին նաև աստոր
դեպի անառիկներու միջնորդութեամբ, կհա-
ջողին վերջ տայ անոր:

Եվ անշուշտ այդ հուլիսով լեցված բլրալուն
համար էր որ խնդարով կնկարադրեր այն հու-
սարեկ և հոգեմտական միակերպ որուն ենթարկ-
ված տեսեր էր զիշերը իրեն հետ անցուցած
բանի մը հայանի անձնավորութիւններ,
մասնավորաբար զոկտ. Յորգովյանը:

— Լայիս էր, կրսեր դարձացմամբ, անոր
ակնարկելով:

Քիչ վերջը, զոկտ. Յորգովյան, որ մեզի
միացեր էր, պատմեց թե արդարեւ ամբողջ
զիշերը լայով անցուցեր էր և թե վարդապե-
տը շատ քանացեր էր զինքը միթարելու:

— Եթե Կոմիտասի քաջայերանքը չլրլար,
զուցե նվազեի, բայց բառ առ բառ:

Արած Անտոնյան կնկարագրեց այն պահի
երբ բանտային իշխանութիւնները պիտի
ստուգէին բանտ քերվածներու ինքնութիւնը
հատուկ ցուցակի մը վրայն:

«Բարձրահասակ, դալկաղեմ, երկար ու
շատ սուր քիթով և տարապայման կերպով
նիհար երիտասարդ մըն էր, որ մարմարե
նստարանի մը կատարը ցցված, ձեռքը դրա-
նոված ցանկերու վրայն մեր անունը պիտի
կարդար և արձանագրեր թե որո՞նք բախտը
ունեցած էին վայելելու իրենց կործանելիք
«հաշտանոց»-ին ասպնջականութիւնը:

Կոմիտաս մեր մոտե էր, շրջապատված
քանի մը անծանոթներ, որոնք տաք վիճա-
րանութեան մը բռնված էին: Չէինք բմոռներ
թե ինչի վրա կպիճեին. բայց շատ կազմակերպ,
միջոցառող պաշտօնյան, հայտնապես ստանե-
ղած կապասեր որ լուրջութեամբ զոյանա և ըն-
թերցումը սկսի:

— Սը սու, մեքեց Կոմիտաս, մեկն ու մու-
սը ցնցելով. թողեք որ կոնչ արագիր:

Պաշտօնյան իրոք որ արագիրի մը երևութիւն
ունէր այն բարձունքին վրա ուր թառեր էր:
Մեզի նորեն պատկերվեցավ, — ինչպես
անգամ մը ըրեր էինք, — Բեշատ պելի մոտ, —
մեկնուտ (ներկա) բառը արտասանել երբ
մեր անունը կարդացվեր:

Եվ արագիրը սկսավ կոնչել:

Բայց շուտով ազմուկը պիտի սկսեր նորեն,
այս անգամ մեր ամենուս ըրքիջներով: Պաշ-
տօնյան որ կերեա թե շատ ընտանի չէր հայ-
կական անուններուն, այնքա՞ն դաւեշտա-
կան փոփոխութիւններով կարտասաներ
մեզմե ռմանք և մեկ քանի բազմականերու ան-
ունները որ կարելի չէր յուրջ մնալ: Բոլորս
ալ կոնչգայինք:

Մարդը սակայն այնտեղվանքը չէր: Յու-
րաքանչյուր անունի առջեւ երկար պահ մը
կհամենար հեղեյով, հետո հնազառ ածա-
պարանքով մը կկարդար զայն այնպես ինչ-
պես կրցեր էր բմոռնել, կարծես վախճալով

որ կմոռնա և պետք կծագի վերստին հեղ-
կանշուշտ իր արտասանած անունները մեծ
մասամբ ճիշտ էին, կամ շատ քիչ չափով
ազաւաղված. բայց կարող մը անուններ ը-
լորովին այլանգակ ու դժվարիմաց կերպա-
րանափոխութեանց կենթարկվելու: Այսպես,
Հեղազ Մեհարյուրար, Թիրիքի Հայիգ, Տա-
դրեյն Նեղարեթ, Միսքին Տորթոր, Ճեհան-
կերցի Արթին, Ուտի Նովանդ, Ի նույնքան
ապշեցուցիչ այլակերպութեանց առարկա
դարձած ուրիշ անուններ իրարու կհաշորդեի:
Մեր քրքիջներուն շահնդին մեջ, ու զորք մըն
էր զուշակել թե ասոնք անուններն են Միհր-
դատ Հայկազի, Հայկ Թիրյաքյանի, զոկտ.
Նազարեթ Տաղավարյանի, զոկտ. Միսք-
ճյանի, Հարութիւն Ճանկուլյանի, Նովանդ
Ուլանի:

Ձրի ներկայացում մըն էր որուն հանդի-
սատեւ կրկային ալապես տնակնկալ կեր-
պով և որ պոնե սկիպները շատ զվարճացու-
մեղ:

Իմ անունիս ընթերցումն Լուր ես բաժնվեմ
ի իւրմբն: ...Լեկի վերջն պատմեցին թե
Կոմիտաս ալ իր բաժինը ստեցած էր այդ
անվանափոխումներն: Պաշտօնյան, երբ ի-
ստեւին կհասնի, երկար պահ մը կհեղե-
յայն, — «Ես... Բով... Բով...», և կերե-
վա վերջին սին (ս) արարական տառը շփո-
թելով ճիւղ (ճ) և Լ (լ) միացալ տառերուն
հետ, կպրտա շտապով:

— Բովթաճի Բովթաճի...

Ինչ որ պարզապես կըշանակեր «հեղափո-
խական վարդապետ»:

Ավելցուցին նաև որ Կոմիտաս ցնցվեր է
այդ ըլորովին անսպասելի անվանափոխու-
թենն, որ անշուշտ բաժնալի բան մը չէր ալ
միջոցառում մեջ ուր կըշանակեինք, և շփոթու-
թենն Լեկու անդամ «մեկնուտ», «մեկնուտ»
պատասխաններ է փոխանակ «մեկնուտ»-ի:

Կոմիտաս սակայն, նույն իսկ շփոթութեան
մեջ, չէր կրնար մոռնալ թուրքերենը
որ իրեն, ինչպես իր մտնկութեան շրջանի ը-
լոր կուտինացիներուն համար մայրենի լե-
զու Լեզա էր և վերջին Լեզանի մեջ սորված
էր հայերենը: Շատ հաճախակիաբար դիտ-
մամբ շրջած էր «մեկնուտ» բառին կազմը,
իր փոխադարձութիւն իր անունին ալա-
կերպման: Գիտենք որ կսիրէր կատակել, և
կկատակեր սման առթիւ, երբեմն ըլորովին
անսպասելի պարադաներու մեջ:

Արած Անտոնյան կպատմէ հետո հաղի
բաշխումը, որ այլևս լրիվ կհիշեցներ թան-
ւարկայնութիւն թե իրապես բանտն էն և դա-
նունք կլեցներ տիւր կառկածներով:

«Բայց անթութիւնն ու իր պահանջները
ունի, հաճախ ավելի տիպական քան ուրիշ
սման մտահոգութիւն: Ամեն մարդ առավ
իրեն սահմանված հացը. Տրվածը պիտիորա-

կան սև քայլիներ էր. գոր շատեր նախընտրեցին Պոլսո սպիտակ հացեն: Պայիները գերաւաք էին, գրեր էինք մեր ձախ անութիւն տակ. և պատառ-պատառ փրցնելով կծամեինք: Մի-հրդաւ Հայկազն, որ բանտի կյանքին ձանդթ էր, կպոռար:

— Օրվան ամբողջ հացն է ասիկա. մաս մը պահեցեք իրիկվան համար:

Կոմիտաս ալ իր հացը անութիւն տակ առած էր, շրջապատված համակիրներե, որոնցմէ ոմանք ձիթապտուղ, պանիր, շոր թուլ կամ խաշած հավիկի ձարեր էին բանտին նպարալաճառեն, և ափերնին լեցուն իրեն կերակրեին որպէսզի հացին հետ ուտեն: Բայց հագիվ թե ձեռք մեկնեց անոնց:

Արամ Անտոնյան կշարունակե պատմել. «...Հանկարծ բանտապահները ծանուցին թե արտոնված ենք տուն նամակ գրել, ճեր մակեղեն, անկողին կամ կերակուր բերել: Եւ այս համար:

Անշուշտ այս ծանուցումը բարեգուշակ բան մը չէր. պարզապէս հայտնութիւն մըն էր թե մեր բանտարկութիւնը կրնար երկար լինել. բայց թերեւ ոչ ոք համեցավ այդ մուսաձման վրա: Բանտապահները նոր ծանուցմամբ մը հայտնեցին թե պետք էր թղթատարական բաց քառթերու վրա, և լոկ թուրքերեն գրել: Արտոնված էինք նաև հեռագրելու: Քառթերը գնեցինք իրենցմէ, և քնական էլ յայնորեն շահագործեցին այս երկնառար առիթը: ...Ամեն մարդ կանապարեր վայրկյան մը առաջ օգտվիլ տրված արտոնութեան: Շատեր սակայն, որոնք թուրքերեն բառ մը չէին կրնար գրել, շփոթեւ էին, և իրենց գնած քառթը ձեռքերնին, երանյալ ու տառանյալ կըրջեին այս ու այն ուղղութիւնով: անակնկալ օժանդակութիւն մը սպասելով:

...Ձեռ գիտեր թե Կոմիտաս, որ թուրքերեն ռիտեր բայց չէր կրնար գրել, որուն օգնութեան դիմեց: Ենովք Շահեն, որ իր ծանոթներուն կողմէ գրված քառթերու հավաքելով բանտին գրասենյակը տարած էր, մեղի բաւով թե Կոմիտասն ստացավ երկու քառթ, մեկը իր տան հասցեով, ապահովարար Կարապետ վարպետին, և մյուսը ամերիկյան գեսպանատան թարգման պ. Արշակ Շմավոնյանի: Վարդապետը ծանոթ դեմք մըն էր ամերիկյան գեսպանատան մէջ: ...Անշուշտ Կոմիտաս մեծ հույս դրած էր Շմավոնյանի և անոր միջոցով ձեռք բերվելիք գեսպանական միջամտութեան մը վրա, որմէ կակնկալներ իր փրկութիւնը:

Տարակուսելի է սակայն որ գրված բոլոր քառթերն ալ իրենց հասցեին ժամանեցին. և հարկե շատերը վար գրվեցան բանտին գրասենյակին մէջ ուր ուշադիր և մանրակրկիտ շննդութեան մը առարկա կդառնային նախապես:

Բայց Կոմիտասի նախապէս վառ մնաց ամբողջ օրը. և իրիկվան կողմ, դուկա. Պաղի խանի վիճակված անակնկալ բախտաւորութիւնը բոլորովին հուսադրեց զինքը. իրեն հետ նաև ուրիշ շատեր որոնք նույն նպատակով քառթեր ուղղել էին ազդեցիկ անձերու:

Իրիկվան կողմ, մեր վրա այլապէս հուսատու ազդեցութիւն մը բերին արձագանքները բուռն ուժակոծութեան մը որ տեղի կունենար նեղուցներուն առջև, և որ քնական է չէր կրնար մեզ անտարբեր թուելու: Ապահովութիւն փրկութիւնը այդ կողմէն կրնար զաւլ: Անշուշտ խորհողներ կային թե կառավարութիւնը, իր փախուստին օրը, կրնա մեզ ալ միասին քշել գիւպի Գոնիա կամ այլուր. բայց կարելի էր հուսալ թե թուրքերը, մայրաքաղաքին անկումնէն ետք, այլևս չեն շարունակեր պատերազմը, և իրենք ալ, մենք ալ կփրկվինք:

Կոմիտաս, որ կսիրեր բառեր շինել, ռոմբերդս բառը նետեց մեջտեղ, թնդանութներու որոտմանց համար, և այս բառը մեծ հաջողութիւն դտավ: Ոմանք «եռաձայն» ածականը կցեցին անոր, ակնարկելով օրվան հրեք դաշնակիցներուն, Ռուսիո, Անգլիո և Ֆրանսայի, և երկար միջոց մը քիչ մը ամեն մարդ խոսակցութեան ուրիշ նյութ չունեցավ այլ միայն այդ «եռաձայն» ոմբերդս-ը, որու գանդունները հետզհետե գորեղ կհնչեին:

Բանտին պաշտոնատան այն սենյակը որ մեզմէ ոմանց հատկացվել էր նախորդ գիշերը, միշտ մեր արամադրութեան տակ թողված էր: Դուկա. Պաղի խանի մեկնումով հոն բաց տեղ մը կմնար, և քնեկկանի առաջարկութեան վրա այդ տեղը հատկացվեցավ Կոմիտաս վարդապետի, որ գիշերը շարունակ դուկա. թորոմյանով դրազվելու հարկադրված, ոչ միայն քիչ էր ռեսցել, այլ շատ նեղվել էր իրեն պէս արթուն մնացողներու սիկառններու ծուխնէ: Եթե օրվան մեծագույն մասը բանտին հրապարակը անցուց, կոնակլ տալով այս կամ այն ծառին, սիկառններու ծուխնէ կարելի եղած չափով հեռու մնալու համար էր:

Կոմիտաս հոգեկան կորով ցուլց տվավ, նկարագրի ամբողջութիւն՝ իր ձերբակալութեան պահուն և Պոլսո կեդրոնական բանտը մնացած դուլց մը օրերուն:

Բժիշկ վ. Թորոմյան որ առհասարակ ազկակ մարմին և փխրուն հոգի մը ուներ և որ մեկն է եղած ամենեն ավելի բնկճվողներուն, կպատմե իր հուշերուն մէջ:

«Ապրիլ 11—24-ի վատշվեր գիշերն էր երբ անուշ քունեն հանվելով տարվեցա մոտակա ոստիկանատունը և անկե Մեհտերեանի բանտը, ուր տիրող կեդրոնութիւնը և ոգիներու խուռներամ քաղմութիւնը նկարագրել կարելի չէ... Այդտեղ տեսա բազում բարե-

կամենք, որոնց ձեռքերը հազիվ սեղմած՝ սկսալալ ու մարմրիլ... Ակնունի, հաժակ, ԼԻՀրդատ Հայկադն, Զարդարյան և ուրիշներ իսկուր կաշխատեն զիս հանդարտեցնել... Շունչս կրոնվեր... Ողի պակասը, մթնոլորտի աղստտությունը զիս շափաղանց կհուղեն երր ահա ներս մտցուցին Կոմիտաս վարդապետը... Դեմքը ժողովից, ականողիքը հրամայական, շիտակ քովս եկավ ու իր դոռ ձայնովը՝ «Զե՛ս ամաչեր» ըսավ... Այդ րատերը այնկոծ սրտիս վրա շղիտեմ ինչո՛ւ րան մը սրսկեցին մեղմարար ու ես ինկա ա-նոր կուրծքին վրա... լալով՝ միշտ լալով, այնքան հոն արցունքներ թափելով որ

վարդապետին կուրծքը թրջելու աստիճանին եղա... Ան կշռեր ճակատս, թեևրուն մեջ զիս կսեղմեր ու կզգայի թե իրմեն րան մը հիս կներարկվեր, ույժ մը, տեսակ մը էլեկտրա-կանություն որ կենդանարար ազդեցություն մը կներգործեր վրաս և առանց առոր... դու-ցե թուրոսվին շքանայի»²։

Ու պահն է արդեն որ ճամփա ելլենք Կոմի-տասին հետ. դեռ չգիտենք թե ուր կերթանք, երբ ձերբակալվածները կհանեն րանտեն ու շոգենավ կտանին գիշերանց։

² «Հատաք», 1935 հոկտ. 27, թիվ 2946։

(Շառունակելի)



ՍԱՄՎԵԼ ԱՆՔՈՍՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վերջին հարյուրամյակում պատմա-հաս-
մանատական մեթոդի օտար թե հայրենի
ներկայացուցիչների ուսումնասիրություննե-
րը ամենայն գիտականությամբ և մեկընդ-
միշտ ապացուցել են, որ հայոց լեզուն անա-
ռարկելիորեն պատկանում է մի լեզվաըն-
տանիքի, որ ընդունված է կոչել հնդեվրո-
պական: Լեզուների ցեղակցությունը պարզու-
շատ ստույգ միջոցներ են կիրառվում. այս-
պես՝ եթե տարբեր լեզուների մեջ կան նույն-
իմաստ ոչ փոխառյալ բառեր, որոնք ցեղա-
կից լեզուների կրած պատմական հնչյունա-
փոխությունների վերլուծությամբ հանգում
են նույն ընդհանուր նախաձևի, ասյա աղ-
լեզուները գալիս են մեկ ընդհանուր լեզվա-
հիմքից: Բացի դրանից, որևէ լեզվի համալ-
վերջինիս ցեղակցության խնդիրը պարզելու
իմաստով առավել կարևորություն են ներկա-
յացնում լեզվի բառային հիմնական ֆոնդի
առավել հաճախ օգտագործվող բառերը (դե-
րանություններ, թվականներ, բնտանիքի և
մարմնի անդամների անուններ, ազգակցա-
կան ու գերդաստանի ազգուստակ արտա-
հայտող բառեր ևլն, ևլն), ինչպես նաև տրվ-
յալ պատմական դարաշրջանում, քաղաքա-
կության տվյալ մակարդակում տոհմի,
ցեղի կամ ժողովրդի օգտագործած գործիք-
ների, աճեցրած բույսերի, խնամած բնտանի
անասունների տեսակների անունները ևլն,
ևլն: Հա՛րց լեզվի մեջ վերոհիշյալ բոլոր բա-
ռախմբերը առավել չափով աղերսակցվում
են հնդեվրոպական լեզուների հետ, ուստի.
ինչպես հատուկիչ կերպով ևլն ևսպացուցեց

գերմանացի հայագետ Հյուբշմանը¹, նալի-
րենը հնդեվրոպական լեզվաընտանիքում մի
անկախ ճյուղ է՝ առավելապես մոտ աղ լեզ-
վաընտանիքի սրելյան խմբին: Այս բոլո-
րից դուրս, կան նաև քերականական համա-
պատասխանություններ. վերցնենք թեկուզ
մեկ օրինակ. բայի արգելական ձևը հա ե-
րենը կազմում է մի՛ ձևով, որը, ինչպես
ցույց է պրոֆ. Հր. Աճառյանը, հնդեվրոպա-
կան նախալեզվի me ձևն է, և հնդեվրոպա-
կան ցեղակից լեզուներում գտնում ենք հե-
տևյալ ձևերով՝ սանսկրիտ՝ ma, հուհարեն՝
me, թիսարենեն՝ ma:

Ըստ պրոֆ. Հր. Աճառյանի, Walde-Po-
korny հնդեվրոպական երկհատոր բառա-
յանում կան 2223 բառեր, որոնցից, մեծ հա-
յագետի հաշվումներով, հայերենում արմա-
տական թե ածանցական ձևերով պահպան-
ված են 968 բառ² պարզ և ածանցված ձե-
վերով: Այսպիսով, հայոց լեզուն պահպանել
է գիտությանը հայտնի հնդեվրոպական ար-
մատների մոտ 45 տոկոսը, ընդ որում աղ
արմատները առավելապես լեզվի «կենսա-
կան» բառապաշարի մի փունջ են, բառեր,
որոնցից դարերի ընթացքում բառակազմա-
կան միջոցներով հազարավոր նոր բառեր

¹ ՅԱ՝ ԴԵbschmann, Über die Stellung des
arm. in Kreise der indogerm. Sprachen, KZ. 1875.

² Թեև բնիկ հայերեն բառերը մեր լեզվի 11000
արմատների մոտ 9 տոկոսն են կազմում, սակայն
ա՛համեմատ կարևոր են, քան մեզցած բոլոր ար-
մատները միասին:

են ստաջացել: Հնդեվրոպական լեզվի բազմաճյուղյա ընտանիքում հայերենը, ըստ երեվոյթին, միայն սանսկրիտից, հուհարենից ու լատիներենից է հետ մնում այս բնագավառում, սակայն էթնոկենտրոն ունենալով, որ հայ գրականությունը վերահիշյալներից շատ ավելի ուշ է սկսվել և իր դարաշրջանի գաղափարախոսությունը համապատասխան տեսակի մեջ անհամեմատ սահմանափակ է եղել, ապա հասկանալի կլինի, որ հայոց լեզուն հնդեվրոպական հիմք-լեզվի ամենահուսալի ավանդապահ մեկ դրսևորումն է: Կատկածից վեր է, որ հայերենի մոտ 9700 չստուգաբանված արմատներից շատերը դարերի ընթացքում ճշտորեն պիտի ստուգաբանվեն և, անկասկած, մեծ մասամբ հարըստացնելով ՁՅԵ բնիկ հայերեն բառերի գանկը:

Ամեն մի ժողովրդի պատմությամբ ու լեզվով գրավոր սասնագետի համար, անշուշտ, առաջնակարգ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպե՛ս է գոյացել այդ ժողովրդի, որն է եղել նրա բնօրրանը, ե՛րբ և ինչպե՛ս է կազմավորվել նրա լեզուն: Սակայն այս բոլոր հարցերը վիճելի են ամեն մի ժողովրդի համար, քանի որ հարցին պատասխանելու համար մարդկային հասարակության մախաակունքները պետք է գնալ: Սի բան պարզ է. եթե գիտականորեն ապացուցված է, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, ապա այն լեզուն կրող մեր մախնիներն էլ, անշուշտ, երբեք սպորում էին հնդեվրոպական ցեղի մախանայրենիքում, որն այսօր էլ գիտության համար վիճելի է: Վերջին ժամանակներում կատարված աշխատանքները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը, եթե ոչ մախապատմական ժամանակներում, գոնե մեր թվականությունից շատ դարեր առաջ եղել է հայ ժողովրդի բնօրրանը. ալվելին՝ ուրարտական, խեթական ժողովուրդները, նրանց մշակույթն ու լեզուն աղերսակցության շատ եզրեր ունեն հայ ժողովրդի, նրա մշակույթի ու լեզվի հետ: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքների մեջ առանձնապես ուշադրության արժանի են պրոֆ. Գ. Ջահուկյանի ուսումնասիրությունները: Սակայն հայագիտության այս բնագավառը դեռևս զարգացման ուղիների վրա է. հարուստ ընդունված «դատական» տեսակետների համեմատ նոր առաջ քաշված կարևոր տեսակետներով, անկայն ոչ բոլորը ոչ վիճելի: Ինչպիսիք, մախապատմական ժամանակներից մինչև մ. թ. ա. վեցերորդ դարը հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին գոնե քաղաքացիական իրավունք ստացած անստույգելի տեսակետ չկա: Մի բան պարզ է, որ հայ ժո-

ղովրդը մ. թ. ա. 2-րդ դարում իր պատմական բնօրրանում պետականություն հիմնեց՝ Արտաշեսյան հարստությունը: Հասկանալի է, որ հայկական թագավորության սահմանների ներսում ընդհանուր խոսակցական լեզուն հայերենն էր, ինչ որ ավելի ուշ վկայում է նույնիսկ Հայաստան այցելած հույն պատմիչ Ստրաբոնը: Կասկածից վեր է, որ ինքնուրույն թագավորություն ստեղծել կարողանալու համար, այդ էլ հատկապես Հայաստան աշխարհի այն ժամանակվա քաղաքական պայմաններում, հարկավոր էր ունենալ ընդհանուր լեզու, ալվելին՝ ինքնուրույն պետականություն ունենալու հանդեպին գիտակցություն ու հոգեբանություն, ինչ որ, գոնե այն ժամանակներում, անպայման պիտի ենթադրեր լեզվական ընդհանրություն: Հենց այստեղ էլ ասենք, որ 5-րդ դարում մեր մախնիների ստեղծած անգուգական գրականության գաղտնիքը այս է. հայերը, մինչև սեփական գիր ու գրականություն ունենալը, առնվազն մեկ հազարամյակ Հայոց բարձրակուրալում բանավոր կերպով մշակեցին, հղկեցին իրենց լեզուն: Այս բոլորը, անշուշտ, տրամաբանական եզրակացություններ են, սակայն վերադառնալով կոնկրետ լեզվական փաստերին: Հայտնի է, որ 5-րդ դարի հայ պատմիչներ Ագաթանգեղոսն ու Մովսես Խորենացին, ինչպես նաև 11-րդ դարի հայ մեծ մտածող Գրիգոր Մագիստրոսը իրենց ստեղծագործություններում մեզ են ավանդել մեր մախնյաց ժողովրդական բանահյուսության 14 հատվածներ: Ամենայն կասկածից վեր է, որ դրանք փայտանական հայերենի նմուշներ են, իսկ դրանցից առավել կարևորը՝ «Վահագնի ծնունդը» (Երկնքի երկին և երկիր...) մեր ժողովրդի շատ հեռավոր անցյալի պաշտամունքը դրսևորող փայական երգ: Վտտահ կարելի է ասել, որ, եթե հայերս 1-ին դարում և նույնիսկ մեր թվականությունից էլ առաջ գրեր ունենալիքը, մեր մախնյաց ստեղծած բանավոր արժեքների հանդեպ մախանձախնդրություն ցուցաբերող պատմիչը «Վահագնի ծնունդը» մեզ գրավոր պիտի ավանդեր այդ ժամանակներում իսկ: Մեր կարծիքով, «Վահագնի ծնունդը» հայերենի մախագրային շրջանի համար նույնքան հին և կարևոր լեզվական նմուշ է, ինչ որ Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսական» հին հուհարեն լեզվի համար: Գրաքարին ծանոթ ամեն մարդ, մարդայով այդ հեթանոսական ստեղծագործությունը, զգում է իր մախնյաց լեզվի շունչը, բանաստեղծական բարձր ճաշակն ու բարձրարվեստ երևակալելու ոգին:

Վերահիշյալ 14 պատմիչների լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ-

քեներ որպես պետական ընդհանուր լեզու կազմավորվելու շրջանում իսկ հարստանում էր հարևան քաղաքակիրթ ժողովուրդներից առած փոխառություններով, ինչպես նաև Հայոց բարձրակարգակամ բնակվող փոքրիշատե մեծ մոտ երկու տասնյակ ցեղերի, ցեղախմբերի սուրստրատով¹։ Այնպես որ, մեր թվականությունից դարեր առաջ հայերենը լեզվական մի ամբողջական համակարգ էր, մոտավորապես այնպիսին, ինչպես այն քանավոր կերպով հասցրել էր մեր ժողովուրդը մինչև 5-րդ դարը, այդ լեզուն լույս էր, ինչ որ 5-րդ դարում գրի առնվեց՝ հանգեղով, անշուշտ, այն դույզն փոփոխությունները, ինչ որ հետագա դարերում կարող էին առաջանալ գրական ավանդույթներ չունեցող՝ մի քանավոր լեզվի մեջ։ Եթե նկատի ունենանք, որ վերջին մի քանի հախտուն (դիմամիկ) դարերում իսկ շատ լեզուներում գրեթե աննշան փոփոխություններ են կատարվել (ֆրանսիացին, օրինակ, այսօր առանց դժվարության կարողում է Մոլիերո, Գոյցիսկի՝ Կոռնել ու Ռասին), ապա հասկանալի կլինի, թե ինչու վիպասանական հայերենն այդքան մոտ ու նույնական է 5-րդ դարի գրական հայերենի՝ գրաբարի հետ։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ. 5—7-ՐԴ ԴԱՐՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց արքա Տիգրան 2-րդի կայսրությունից հետո, Հայաստան աշխարհը կիսանկախ վիճակում էր՝ մե՛րթ Բյուզանդիայի, մե՛րթ Պարսկաստանի ասպատակությունների ապարդեգ։ Պարսկաստանի և Հայաստանի հարաբերություններն ավելի են վատանում 3-րդ հարյուրամյակի 20-ական թվականներից սկսած, երբ Պարսկաստանում Սասանյանները տապալում են Պարթևներին ու իրենց հարստությունն են հաստատում։ Սասանյան Պարսկաստանը չէր կարող հանդուրժել հարևան Արշակունի հայոց թագավորությունը, որոնք ծագումով պարսիկ պարթևներ էին։ Ըստ երևույթից, նույն թշնամական տրամադրությունը եղել է նաև Հայաստանում, այդ երևում է հատկապես հայոց Արշակ արքայի (350—387)՝ պարսից Ծապուհ արքային տված պատասխանից. «Քեզ ու քո որդիներին չեմ թողնի իմ նախնիների վրեժը և Արտեշան արքայի մահը, որովհետև դուք՝ ծա-

ռաներդ, մեյ՝ ձեր տերերի, գանր խլվ եք...» (Բյուզանդ, IV, ԾԻ)։

Սկսվում է դավադրությունների իրկարատել շրջան. հայոց Տիրան թագավորը կուրացվում է, նրա որդին՝ Արշակ 2-րդը, արտրվում է Խուժիստանի Անդադ քերդը, վերջինիս որդի Պապը գոհվում է Բյուզանդիոնի նեղ դավադրության հետևանքով...

Հայաստանի և Պարսկաստանի միջև արքունական թշնամական հարաբերությունները վերջանում են նրանով, որ 428 թ. պարսից արքունիքը իսպառ վերացնում է հայոց կիսանկախ Արշակունիների հարստությունը, իսկ երկիրը ղեկավարվում է նշանակալի մարզպաններով։ Ահա այսպիսին էր Հայաստան աշխարհում քաղաքական իրավիճակը գրեթե գյուտի հախօրեին։ Այս տեսակետից ինչքան էժշտ է գերմանացի հայագետ Մարկվարտը, որը, ըստ արժանալույց գնահատելով Մեսրոպ Մաշտոցի և նրա գործակիցների ջանքերը, Մեսրոպին ու Սահակ Պարթևին բնութագրում է որպես մտքի հսկաներ, որոնց հանդեպ իր հայրենի գրի գյուտարարներ Պիպինը և Վինֆրիդը «ողորմելի թգուկներ են երևում»։ Այսպիսով 5-րդ դարի առաջին տասնամյակում հեռատես հայ հոգիները կանխագուծում էին հայ ժողովրդի քաղաքական անկախության մնացորդների ոչնչացումը։ Հարկավոր էր ժողովրդի միավորման նոր ուղիներ գտնել. կարծես հրաշք էր պետք գործել։ Իմաստուններն ասում են, որ մեծ մարդիկ ժամանակի պահանջի ծնունդ են ծնվում են հենց այն ժամանակ, երբ պետք է ծնվեին, որպեսզի նոր լուսավոր մայրողիներ քացեն իրենց ժողովրդի առաջ։ Ժամանակը ծնեց իր մեծ հանճարին, հասարակ մի այր՝ Մաշտոց անունով։ Մեսրոպ Մաշտոցն իր ժողովրդի գլխատեղում կապեց լույսի հետ, մտքի ու քականության անձեռակերտ հրաշագործությունների հետ։ Պատահական չէ, որ հայ քանաստեղծները Մեսրոպ Մաշտոցին համարում են հավերժ անառիկ Յճ ամրակառույց ամրոցների ճարտարագետ։ Հայ ժողովրդի հանճարեղ գալակի գյուտը նշանաբանելու իմաստով ինչքան բնորոշ է նրա սուրբ-սուրբ աշով գրված առաջին նախադասությունը. «Մեմայել գիմաստություն և գիրատ, իմանալ գրան հանճարոյ, ընդունել գործուածս քանից, ի միտ առնուլ գարդարութիւն ճշմարիտ և ուղղել գիրատունը»։

Եվ այսպես, Մեսրոպ Մաշտոցի տարիների մեղվաջան ու անճմվեր աշխատանքը պատվեց փառապանծ հաղթանակով։ Ըստ ընդունված կարծիքի, 5-րդ դարի 1-ին տասնամյակում նա Հայաստան աշխարհ վերադարձավ հայոց աթոռները ձեռքին՝ ասորե-

¹ Ի դեպ, նշենք, որ հայերենի չստուգաբանված մոտ 8700 բառերի մեջ զգալի տոկոս պետք է կազմեն Հայկական բարձրավանդակում ապրող այլ ժողովուրդների լեզուների բառերը, որոնք, դժբախտաբար, ըստ երևույթից, հար հափխյան անապագուցելի պիտի մնան։

րենհից ու հուճարենհից հմուտ աշակերտների միջոցով Սուրբ Գրքից կատարած թարգմանությունը մագաղաթի վրա արձանագրած:

Լեզվաբանները միաբերան վկայում են, որ, ով որևէ ժողովրդի համար այնքան է ստեղծում, ինքնից մեծ լեզվաբան է: Իսկ ինչքան առավել հանճարեղ լեզվաբան է Մեսրոպ Մաշտոցը, որ նրա ստեղծած այնքանը ահա արդեն 1500 տարիներ զերկատարյալ կերպով սպասարկում է իր ժողովրդին:

Հայագիտության գոյության ամբողջ ժամանակաշրջանում մարդկանց հուզել է այն հարցը, թե նախքան մեսրոպյան գրերն ու 5-րդ դարի հայ գրականության սկզբնավորումը հայ ժողովուրդը հայատառ գիր ու գրականություն ունեցե՞լ է, թե՞ ոչ: Արտահայտված են շատ թեր ու դեմ կարծիքներ, որոնց քննությունն, անշուշտ, մեր նպատակից դուրս է: Սակայն ամենահամառոտ կերպով արժե անդրադառնալ այդ խնդրին:

Մինչև մեսրոպյան գրերի երևան գալը մեզանում հայատառ գիր ու գրականություն եմոտագրող հեղինակների հիմնական պնդումըն այն է, որ նոր գիր ունեցող մի ժողովուրդը 2—3 տասնամյակի ընթացքում չէր կարող ունենալ ո՛չ այդքան հարուստ և ո՛չ էլ արվեստով ամենաբարձր կատարելության հասած գրականություն:

Այստեղ նշենք, որ այժմ սա ավելի հայրենասիրություն ու առաքինություն է դիտվում, քան թե գիտական տեսակետ:

Մենք միանում ենք նրանց, որոնք գտնում են, որ մինչև մեսրոպյան գրերը հայերս հայատառ գիր ու գրականություն չենք ունեցել: Ահա մի երկու պատճառ.

ա) Վերջին հարյուրամյակներում Հայաստանում հայտնաբերվել են ամենայն կարգի հնություններ, բայց հին հայերեն գրեր՝ ոչ:

բ) Նախքան հայատառ գրականություն ունենալը մեր ժողովուրդը, մեզ ծանոթ չափով զոհն, մեկ հազարամյակ ուներ բանավոր ստեղծագործություն, ինչ որ վերևում ցույց տվեցինք՝ վիպասանական հայերենի հարցը քննելիս:

Ինչպես ընդունված է լակոնիկ ձևով ասել՝ մի ամբողջ ժողովուրդ և նրա հազարամյա մշակույթը,—ահա 5-րդ դարի հայ բարձրարվեստ գրականության գաղտնիքը:

Հասկանալի է, որ գրերի ստեղծումից անմիջապես հետո Հայաստան աշխարհում զարգացավ ինքնուրույն և թարգմանական գրականությունը: Գրերի գյուտից սկսած մինչև 460 թվի, միայն մոտ 50 տարվա ժամանակաշրջանից մեզ են հասել 41 գործեր: Ինչպես հիմնվորող դարի երկրորդ կեսում, այնպես էլ 6-րդ և 7-րդ դարերում մեր նախնիներն ստեղծեցին այսօր էլ աշխարհին

հիացմունք պատճառող գրականություն: Նշենք թեկուզ օտարերկրյա բանասերների մի երկու կարծիք: Ֆրանսիացի գիտնական Լակրոզը թարգմանագ թագուհի անվանեց Աստվածաշնչի (Նոր կտակարանի) հայերեն թարգմանությունը: Գերմանացի հայագետ Մարկվարտը ամբողջ միջնադարյան գրականության մեջ, ներառյալ նաև բարձրարվեստ լատիներենով ստեղծվածը, չի գտնում մի երկ, որն իր արվեստով հավասարվեր 5-րդ դարի պատմիչ Եղիշեի «Լասն Վարդանայ և Հայոց պատերազմին» դյուցազնավեպին: Մեջ բերենք իր իսկ խոսքերը. «Միջնադարյան ու՛ր ժողովուրդը կկարողանա պարծենալ, թե երբևիցե կարողացել է իր սեփական լեզվով կամ թեկուզ միայն բախտավոր լատիներենով հրապարակ հանել Վարդանի և իր ընկերների դյուցազնամարտի այնպիսի մի նկարագրություն, ինչպիսին է Եղիշե վարդապետի նկարագրածը»: Գրի առնվելու յոթեին իսկ այդքան հույզված հայոց լեզուն առավել հարստացավ, ճկուն դարձավ անհատ հանճարների գրչի տակ. եթե սկզբում հայոց լեզվով թարգմանվում էին առավելապես կրոնական բովանդակություն ունեցող երկեր, ապա շուտով Եզնիկ Կողբացին գրեց «Եղծ աղանդոց» փիլիսոփայական երկը, Կորյունը՝ իր ուսուցչի՝ հազար երանավետ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը («Վարք Մաշտոցի»), Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին գրեցին «Հայոց պատմությունն», Եղիշեն ստեղծեց հայ գրականության առաջին գեղարվեստական գործը, իսկ 7-րդ դարում Անանիա Շիրակացին գրաբար լեզվով արտահայտեց թվերի աշխարհի ու տիեզերքի խորին խորհուրդները:

Միջանկյալ խոսենք նաև գրաբարի խոսակցական լեզու լինելու հարցի մասին: Դժբախտաբար անցյալում շատ հայ բանասերներ արտահայտել են այն տարօրինակ կարծիքը, թե 5-րդ դարի գրի առնված հայերենն արհեստական լեզու է եղել՝ հորինված Մաշտոցի և նրա աշակերտների կողմից: Այսօր այս տեսակետը նույնիսկ ծիծաղելի պետք է համարել: Հայտնի է, որ ժողովրդական բանահյուսությունը, ինչպես ամուսն էլ ցույց է տալիս, գուտ ժողովրդական ստեղծագործություն է՝ ժողովրդի խոսած կենդանի լեզվով հորինված: Ինչպես վերևում ցույց տվեցինք, մեր պատմիչների մեզ ավանդած վիպասանական հայերենը ոչնչով չի տարբերվում 5-րդ դարում գրի առնված գրաբար հայերենից:

Մյուս կողմից՝ եթե 5-րդ դարում ստեղծ-

1 Հ. Մարկվարտ, Հայոց պոլոսների ծագումը և Մաշտոցի կենսագրությունը:

ված գրականության լեզուն ժողովրդին մատչելի չափով չի եղել, հայ ռամիկի ձեռքին նրա խոսած ինքնաձայն լեզվով մատյան չափի տրվել, ինչպիսի հայրենի գրեր ստեղծվեցին. չէ՞ որ մինչ այն էլ, անկասկած, Հայաստան աշխարհում գտնե կրոնական բնույթի հո:նարեն և ասորերեն գրքեր կային: Եվ վերջապես՝ ամհիմն է այն պնդումը, թե գրաբար լեզուն մատչելի չէր ռամիկին: Լեզվաբանական գիտությանը ծանոթ ամեն մարդու համար պարզ է, որ դժվար լեզու չկա, լեզուն դժվար է, երբ այն յուրացվում է այլ լեզվով խոսողի կողմից, մինչդեռ մարդու համար մայրենի լեզուն, ինչպես իր շրջյանը օղորդ կամ խմած ջուրը: Հայտնի է, որ Արաբիայի անապատներում, Ղորանի ժամանակներից ի վեր քաղաքակրթության հետ շփում չունեցած արաբ թռչվոր բեղվիհներ խոսում են այն դասական արաբերենով, որ ուսույթ արաբներն իսկ այն յուրացնելու համար տարիներով են ուսումնասիրում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Հայտնի բան է. չկա լեզու, որ փոփոխությունների ենթարկված չլի: Լեզվի փոփոխությունների պատճառը հենց լեզվի գոյության մեջ իսկ է: Ծառ լեզուների համար հայտնի են գլխավորաբար երեք շրջաններ՝ հին, միջին և նոր: Այդպես է նաև հայոց լեզվի համար:

Կրաքար լեզուն, որը, ինչպես վերևում ցույց տվեցինք, 5-րդ դարում խոսվում էր ռամիկի քերանում, գրավոր լեզու դառնալուց հետո մնաց անփոփոխ: Ավելին. 18-րդ դարում շատ բանասերներ 5-րդ դարի հեղինակների լեզվական «սխալները» դիտելով, աշխատեցին գրել նրանցից առավել «մաքուր» գրաբարով:

Հայոց լեզուն միայն գրքերում չէր արձանագրված, նրանով հաղորդակցվում էր մի ամբողջ ժողովուրդ, և հասկանալի է, որ ժողովրդի խոսած կենդանի լեզուն չէր կարող փոփոխությունների չենթարկվել: Մասնավորապես հայոց լեզվի համար ստեղծվել էին առավել նպաստավոր պայմաններ. երկիրը գտնվել էր քաղաքական ինքնուրույնությունից ու կենտրոնական ղեկավարումից, տեղանքը լեռնոտ, իսկ հաղորդակցության հնարավորությունները գրեթե գրոյի հավասար:

Եվ այսպես, 11-րդ դարի վերջին և 12-րդ դարի սկզբին ժամանակակիցների վկայությամբ ժողովուրդը խոսում է մի լեզվով, որ թեև բառական իմաստով քիչ, սակայն քերականությամբ բավական տարբեր է գրաբարից: Նոր ժամանակներում գիտնական-

ներն այդ լեզուն անվանեցին «միջին հայերեն», այսինքն՝ ընկած մի կողմից գրաբարի, մյուս կողմից՝ նոր աշխարհաբարի միջև: 12—13-րդ դարերում հայ հեղինակներն իրենց «լուրջ» գործերը գրում են ավանդական գրաբարով, մինչդեռ բժշկագիտական գործերը, հանելուկներն ու բանաստեղծությունները՝ միջին հայերենով: 1265 թ. Սրբառ Գուդեստար արքայազնը միջին հայերենով «Դատաստանագիրք» (օրենքների ժողովածու) է գրում, իսկ այդ ցույց է տալիս, որ ոչ միայն օրենքը պահողը, այլև օրենքը կիրառողը այդ լեզվով էր խոսում, ա՛յդ լեզուն կարող էր կարդալ ու հասկանալ: Այսպես է սկիզբ առնում միջին հայերենը, որով ստեղծվել են այնպիսի քարձարվեստ գեղարվեստական արժեքներ, որ հայտնի ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը դրանք համարում է մարդկային ստեղծագործ հոգու գերկատար արտահայտություններ:

Եթե ի մոտո ուսումնասիրենք հայոցը, կրտսենենք, որ միջին հայերենում գրեթե չկա ոչինչ, որ լեզվի մախող շրջանում՝ գրաբարում չլիներ, միայն թե գրաբարում այդ կենտրոնը, չարժեքավորված, մինչդեռ միջին հայերենում՝ օրինաչափություն: Այսպես, օրինակ՝ գրաբարում եզակի գործիականում՝ ու վերջավորություն են ունենում միայն հոլովման պատկանող քիչ թվով բառախմբեր, մինչդեռ միջին հայերենում՝ ու վերջավորությունն ընդհանրապես բառի գործիականի (եզակի թե հոգնակի) վերջավորությունն է: Նույնպես և Գի հոգնակիակերտ մասնիկը, որ գրաբարում միայն մի քանի բառերի վրա է դրվում, միջին հայերենում ընդհանրական (ուճիվբոսալ) հոգնակիակերտ է: Դեռևս 1866 թ. Բ. Արսեն Ալտրնյանն իր դարագլուխ կազմող «Քննական քերականության» մեջ ամենայն մանրամասնությամբ ցույց է տվել, որ միջին հայերենն ու նոր աշխարհաբարը վերաճած գրաբարն են՝ ոչ թե գրաբար լեզվի աղավաղումով առաջացած, այլ նրա կրած աստիճանական բարեշրջությունների հետևանքով:

Մասնագետների կարծիքով, սակայն, միջին հայերենը մեկ ընդհանուր հասկացություն չէ: 12—17-րդ դարերում Հայաստանի աշխարհագրական տարբեր անկյուններում գրված միջին հայերենով երկերն իրար համեմատ տարբերություններ են ներկայացնում. այսպես, օրինակ՝ կու մասնիկը (որով կազմվում է միջին հայերենի սահմ. եղանակի ներկան ու անկատարը, ինչպես նաև պայմանականի ապառհի ու անցյալի ապառհի) գտնում ենք թյուր հեղինակների մոտ, մինչդեռ ո՞նց բառն առավելապես Արեվելյան Հայաստանի հեղինակներն են օգ-

տագործում: Եվ իրոք, այսօր այդ քառք արեվմտահայ գրականում չկա, մինչդեռ արեվելահայ խոսակցական լեզվի ամենակենդանի քառերից մեկն է:

Այս նույն կարծիքի է նաև գերմանացի հայագետ Կարստը, որի «Historische Grammatik des Kilitikish-Armenischen, Strashurg, 1901» աշխատությունը միջին հայերենին նվիրված ուշագրավ աշխատություններից մեկն է:

Միջին հայերենի շրջանում մետրայան այբուբենին ավելացան երկու նոր հնչյուներ՝ օ և ֆ՝ վերցվելով հունարեն այբուբենից, որով մետրայան այբուբենն ունեցավ 38 հնչյուներ:

Միջին հայերեն լեզուն, ինչպես ցույց են տալիս մեզ հասած գրությունները, եղել է նաև Հայկական Ռուրիկյաց հաղատության պաշտոնական լեզուն, նրանով գրվել են արքայական հրովարտակներ, արտոնագրեր ևլն:

ԱԾԵԱՐՀԱՐԱՐՈՒ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԹԱՆԱԿԸ

Պետևս միջին հայերենի շրջանում որոշակիորեն դիմազդվում են հայերենի բարբառները, այնպես որ 18-րդ դարում Սայաթ-Նուվա մեծ բանաստեղծը Թբիլիսիի հայոց բարբառը գիտե որպես հայերեն լեզու:

19-րդ դարի արշալույսին որոշակիորեն երևում է, որ գրոն նախկին ըմբռնմամբ մեկ ընդհանուր խոսակցական ու գրական հայերեն չկա. մեր ժողովրդի երկու հատվածների ներկայացուցիչները խոսում ու գրում են տարբեր բարբառային հիմք ունեցող երկու գրական հայերենով՝ արևմտահայ և արեվելահայ, նույնիսկ տարբեր ժամանակներում ու մեկը մյուսից անկախ լուծում որդեգրվելիք ընդհանուր խոսակցական լեզվի խնդիրը:

17-րդ դ. վերջին և հատկապես 18-րդ դ. ընդհանուր խոսակցական հայերեն այս հատկացության ներկա ըմբռնումով գրեթե չկա. ամեն մարդ, ըստ իր ուսման մակարդակի, գրում է գրաբարի և մայրենի բարբառով՝ խառնուրդով: Չմոռանալով նշել, որ այս դարաշրջաններում ևս ուսյալ ավանդապահ մարդիկ, հատկապես Մխիթարյան հայրերը, գրում են մաքրամաքուր գրաբարով:

Այսպիսով, մեկ կողմից՝ գրաբար, մյուս կողմից՝ հայերեն զանազան բարբառներ, որոնք անչափ լցված էին թուրք-պարսկական քառերով ու արտահայտություններով: Բոլորի համար հասկանալի է դառնում, որ

նարկավոր է ստեղծել մեկ ընդհանուր խոսակցական հայերեն, որով խոսեին և գրեին ասեմայն բարբառի ներկայացուցիչներ: Արեվմտյան իրականության մեջ ընդհանուր խոսակցական ու գրական հայերենին հիմք է ծառայում Պոլսի հայ բարբառը, որը շատ ընդհանրություններ ունեւ փոքրասիական հայ բարբառների հետ, մյուս կողմից՝ Պոլսից Հայոտնիայի հետ սիասին մշակութային կենտրոն էր: Գործին քիչ չավուլ չօգնեց նաև այն հանգամանքը, որ ժամանակի տափուրականության մեծ մասը, հատկապես Սխիթարյանները, բնիկ պոլսեցիներ էին:

Վերևում մենք գրեցինք, որ Պոլսի հայ բարբառը հիմք հանդիսացավ արևմտահայ գրական լեզվի համար, բայց սա չի ենթադրում, որ գրական լեզուն բարբառի հետ նույնական է: Բարբառում եղած բոլոր օտար բառերը հանվեցին և փոխարինվեցին գրաբար լեզվում եղած համարժեքներով: Նոր աշխարհաբարը, ըստ հնարավորին, հրաժարվեց նաև ուսումնականների կողմից մինչ այդ կիրառվող գրաբարի քերականությունից: 1830-ական թթ. մենք արդեն ունենք նմուշներ նոր աշխարհաբար հայերենի արեվմտահայ տարբերակով:

Արևելահայ իրականության մեջ վերևի հարցերը սրվեցին 19-րդ դարի 50-ական թթ.: «Հյուսիսատիայ» ամսագիրը Նազարյան-Նալբանդյան գործակցությանը մոյ աշխարհաբարի դրոշակակիրը եղավ: Նոր աշխարհաբարի տարածմանը նպաստեցին Լազարյան ճեմարանի հայ ուսանողությունն ու հյուպարակ եկած պարբերական հարուստ մամուլը: Այնպես որ, 50—60-ական թթ. ընդհանուր գծերով կազմավորվեց նաև արևելահայ աշխարհաբարը, որը 70-ական թթ. մեծ վիպասան Բաֆֆու ստեղծագործություններում տաշվեց, հղկվեց, ճոխացավ, առնականացավ:

Ահա արդեն մեկ հարյուրամյակ է, որ մեր ժողովուրդը խոսում ու գրում է երկու գրական հայերենով: Երկուսն էլ ունեն իրենց կանխած հավանքը:

Վերջին հարյուրամյակում՝ բառական հարստացման կողմը բացառած, էական փոփոխություններ չեն կատարված երկու գրական լեզուներում էլ: Ցայսօր Պետրոս Մուրյանի լեզուն նույնքան սիրելի ու հարազատ է արևմտահայի համար, որքան սիրելի ու հարազատ է Ռաֆֆու լեզուն արևելահայի համար:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆ

Ներկայումս ժամանակակից հայերեն ասելով հասկացվում է արևելահայ գրական լեզուն, որին նվիրված հետազոտություններ այդ վերտառությամբ են լույս տեսնում:

Նախարհաբար սկզբից տրված է ի հակադրություն գրաբարի (գրի ձևով). այն է՝ աշխարհիկ, աշխարհական, խոսակցական ձևով:

Հայտնի է, որ վերջին հայրությանը ամենահախտուն ժամանակաշրջանն է: Դեռևս անցյալ դարի վերջին տասնամյակներում հայերս ունեինք բազմաթիվ դպրոցներ, նույնիսկ միջնակարգից էլ բարձր: Ստեղծվեցին բազմաթիվ պարբերականներ, և գրական լեզուն թափանցեց ամեն քաղաք, ամեն գյուղ, ամեն ընտանիք: Հրապարակ եկան գեղարվեստական խոսքի մեծ վարպետներ՝ Մուրադյան, Ծիրվանզադե, Նար-Ռոս, Վահան Տերյան և ուրիշներ, որոնք իրենց ստեղծագործություններով հայ գանգվածների մեջ տարածեցին գրական հայերենը: Բարբառախոս մարդիկ ուսում ստացան, տարիներ շարունակ ուսումնական հաստատություններում գրական լեզվով խոսեցին ու գրեցին՝ շատ անգամ նույնիսկ ամոք գգարով իրենց լեզվի մեջ պահած բարբառային առոգանության համար: Այսպիսով, գրական լեզուն հաղթական այրալ սկսեց բարբառների դեմ:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով գրական լեզվի հալթանակն էլ ավելի ապահովվեց: Երկրի բոլոր մարդիկ անխտիր ուսում ստացան, ստեղծվեց քաղաքային կյանք, մտավորականություն, ուսուցիչների բանակ, և գրական հայերենը հնչեց ամեն հարկի տակ, ամեն հայ մարդու բերանում:

Ներկայումս Սովետական Հայաստանի մոտ 2 միլիոն բնակչության կեսից ավելին ապրում է քաղաքներում և խոսում գրական հայերենով, այն աստիճան, որ բարբառագետներն իսկ այսօր դժվարանում են մարդկանց մայրենի բարբառի տարրերը ջոկել նրանց խոսած լեզվից:

Հայտնի է, որ հայ ժողովուրդը վերջին 45 տարիների ընթացքում աննախընթաց վերելք ապրեց. մենք ունեցանք գիտության, տեխնիկայի, մշակույթի բազմաթիվ նոր առաքարեզներ, որոնք իրենց հետ բերեցին իրենց անունները. անհրաժեշտությունն զգացվեց ստեղծել տասնյակ հազարավոր նորակազմ բառեր, նույնքան էլ փոխառնել օտար բառեր: Բավական է նշել, որ ներկայումս Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած բազմաթիվ բառարանը կիսով չավի (մի քանի տասնյակ հազար) ավելի բառեր է պարունակում, քան Սոս. Մալխաս-

յանցի բառարանը, որը մեր լեզվի 25—30 տարի առաջվա պատկերն է արտացոլում:

Գրաքար մատենագրությունից մեզ ավանդված է մոտ 57.000 բառ, մինչդեռ վերջին 50 տարում հայերենը, նորաշույն փոխառություններն էլ հետո հաշվելով, բառերեկույթին, թվով ավելի շատ բառերով է հարստացել: Այժմ հայերենի բառապաշարի ընձեռած հնարավորության շնորհիվ հայերեն է թարգմանված համաշխարհային գրքի գրեթե ամբողջ հատընտիրը:

Հարց է առաջանում. քերականական իմաստով ի՞նչ չափով է փոխված ժամանակակից հայերենը: Հայտնի է, որ լեզվի քերականական կառուցվածքը նորությունների հանդեպ անընկալ է: Անշուշտ, անցյալ դարի 70-ական թթ. համեմատ քերականական փոփոխություններ կան, սակայն միայն բնականոն ենթադրելի սահմաններում: Դրանք առավելապես արտահայտվում են պարբերի քերականական ձևերը հիշեցնող երևույթների վերացմամբ, քերականական օրենքների պարզեցմամբ, խոնարհման ու հոլովման համակարգերում, բայց հնարավորին, զարտություններին վերացմամբ կ'ըն, կ'ըն:

Հարկ է նշել, որ ժամանակակից հայերենը ոճական իմաստով մեծապես ազդվել է ուսուցչական լեզվից, իսկ վերջերս՝ նաև արևմտահայ գրական լեզվից:

Այսօրվա աշխարհում, լեզուների ներկա փոխհարաբերությունների պայմաններում բնական է, որ հայոց լեզվի մեջ կարող են թափանցել և թափանցել են անհարկի բառական փոխառություններ, ոճական ձևեր ու արտահայտություններ, որոնց համարժեքները մեր լեզուն դարեդար պահպանել է: Այդ պատճառով կարևոր դեր ունի կառարելու Հայաստանի կառավարության վերահսկողությամբ գործող տերմինաբանական կոմիտեն. այս ուղղությամբ կատարված աշխատանքներն ու ընդունված ճիշտ որոշումները մեծապես օգնում են հալ մարդկանց՝ չափը պահել փոխառությունների հարցում, ինչպես նաև նախանձախնդրություն ցուցաբերել հանցի հայերենով խոսելու: 24-րդ մայրենի լեզուն տվյալ ժողովրդի գանձերի գանձն է, իսկ այն սրբությանը պահել-պահպանելը՝ ամեն մարդու համար սուրբ և սուրբին պարտականություն:





ՔԱՀԱՆԱՆ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱՆ*

Հայ ժողովուրդը առաջիններից մեկը եղավ, որ համարձակորեն իր մտքի ու սրտի դռները բաց արեց Քրիստոսի քարոզած Ավետարանի լույսի առաջ:

Ե դարում գրեթե գյուտով երբ հայ ժողովուրդն ու Հայաստանյայց եկեղեցին իր ուրույն ազգային դիմագիծը ստացավ, մեր ժողովուրդը Հայաստանյայց եկեղեցու մեջ ոչ միայն տեսավ իր հոգեկան, կրոնական զգացմունքների արտահայտությունը, այլ նաեւ իր իսկ գոյության, հարատւման ուժն ու ամրոցը:

Ե դարից սկսած մեր ժողովրդի դժբախտ ճակատագրի բերումով եկեղեցին ոչ միայն կրոնական, այլև մշակութային օջախ դարձավ, որը վստ պահեց այդ ջահր, հասցնելով մինչև մեր օրերը:

Հայ եկեղեցու և նրա սպասավորների կատարած կրոնական, հայրենասիրական, մշակութային գործունեությունը արժանի է խոր ուշադրության:

Մեծ է եղել մեր ժողովրդի դերը եկեղեցին կանգուն ու կենդանի պահելու գործում: Մեր ժողովրդի սիրուց է բխում հայ հոգևորականության հանդեպ ցուց տրված այն հարգանքը, որի արտահայտությամբ հաճախ հանդիպում ենք մեր պատմության մեջ:

Հայաստանյայց եկեղեցին որպէս հաստատություն ունեցել է իր կրոնական, զինվորյալ սպասավորները: Հնուց ի վեր եկեղեցու պաշտոնյաները բաժանվել են երկու խմբերի՝ կուսակրոն և ամուսնացյալ քահանայութեան, որոնց միջև իրավական իմաստով ոչ մի տարբերություն չի եղել:

Կուսակրոն քահանան ապրել է վանքերում որպէս «մշակ առանց ամօթոյ», որտեղ ալոյթել է, տքնել, ստեղծագործել, մագաղաթների էջերին է հանձնել իր հույզերն ու մտքերը, խորհրդածությունները, աստվածային ճշմարտությունները, հասկանալու հա-

մար տառապել է և «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» մրմնջացել. քարոզել է Ավետարանի յուսն ու սերը, ապա սերունդներին է հանձնել իր ժողովրդի գլխով անցկացած ավերածությունների ու ավերների պատմությունը, նկարագրել է գերեվարված հայ պատանիների, աղջիկների, մայրերի, հայրերի ու մեր մանկիկների ճիշն ու բողոքը:

Իսկ քահանան եղել է ժողովրդի ծոցում ապրող, նրա ցավերին ու ուրախություններին մասնակից, հոգեկան մխիթարիչը, Ավետարանի պատգամներով լուսավորված ու ապրող և ի պահանջել հարկին նահատակվող մի անձնավորություն:

Հին Կտակարանի մեջ մարգարեներին, քահանայության պաշտոնին և քահանային մեծ տեղ է տրված: Մարգարեները քարոզողներ և օրենքը պատգամողներ են եղել, իսկ քահանաները՝ զոհ մատուցողներ և քահանայագործողներ: Նրանք օրենքի մեկնիչներն ու պարզաբանողներն են եղել, Աստուծո և մարդկանց միջև միջնորդներ. նրանց ամեն մի խոսքը կշիռ է ունեցել և հասարակությունը առաջնորդել է Աստուծո ճանապարհով:

Նոր Կտակարանի և հատկապէս «Գործք առաքելոց»-ի և առաքելական թղթերի մեջ շեշտը դրվում է քահանայի կոչման, դաստիարակության, նրա պարտականությունների և նկարագրի վրա: Նոր Կտակարանի մեջ քահանան՝ եկեղեցական հովիվը, թե՛ քարոզում է, թե՛ ուսուցանում և թե՛ քահանայագործում՝ իր մեջ միացնելով Հին Կտակարանի և՛ մարգարեի, և՛ քահանայի միմյանցից տարբերվող պաշտոնները:

Ովքե՞ր կարող են լինել քահանա, և ինչպիսի՞ք են նրանց պարտականությունները: Այս հարցերը առաքելական դարերից մինչև մեր օրերը՝ եկեղեցական հայրերի և հայրապետների կողմից քննության առարկա են հանդիսացել:

Մեր եկեղեցու պատմության մեջ քահանան դարձել է ամենադժգոյծ անձնավորությունը, որը Ավետարանի լույսով դաս-

* Դասախոսություն՝ կարդացված Էջմիածնի հոգևոր ճեմարանում, Գևորգյանց տոնին, քահանայական լսարանում, վճարվարի 20-ին:

տխարակել ու դատտխարակում է մեր ժողովուրդը: Իդուր չէ, որ մեր երանաշնորհ հայրապետները Ղևոնդյանց տոմը համարել են քահանայից դասի տոմ:

Քահանան լինելով ժողովրդի հետ ամենօրյա շփման մեջ զտնվող անձնավորություն, անմիջական դատտխարակն է եղել իր հոտին: Նա «հովի քաջն» է եղել, «որ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ, 11):

Հայ հոր սերունդը դատտխարակելու հարցը միշտ էլ եղել է հայ եկեղեցու և քահանայի մտահոգության առարկան: Դատտխարակել, սովորեցնել նրան տանը, եկեղեցում, դպրոցում՝ հարատև ջանասիրությամբ, Ավետարանի լուսի տակ միշտ հայեցի և քրիստոնեաշունչ:

Քահանան ժողովրդի մեջ ամեն տեղ է: Երբ այսքան պատասխանատու է քահանայի պարտականությունը, ուրեմն ամեն մի պատեհապաշտ մարդու ձեռնադրությունը մեր եկեղեցու և ժողովրդի կրոնական և ազգային շահերին վնաս կհասցնի: Պողոս առաքյալն առում է. «Ձեռս վաղվադակի յուրուք վերայ մի դմիցես» (Տիմ. Ե 22), որովհետև «ոչ որ զանձն ընծայեցուցանէ նա է ընտրեալ, այլ գոր Տէրն ընծայեցուցանէ»:

Դժբախտ է այն մարդը, որի ստանձնած պաշտոնը կամ գործը իր կարողություններից վեր է: Քահանան պետք է գիտակցի, որ ի վիճակի է այդ գործը կատարելու: Նա իր կոչմանը գիտակից անձնավորություն պետք է լինի:

Եղմարիտ կոչում ունեցող քահանա պետք է ունենա երեք անհրաժեշտ պատրաստություններ կամ կրքեր, այն է՝ սեր մարդու հանդեպ, սեր Աստուծո՝ փառքի և սեր իր հոգևոր աշխատանքի հանդեպ: Եվ կոչումը անընդհատ պետք է վերանորոգվի ներքին հայեցողությամբ կամ հոգեկան առանձնագմամբ, աղոթքով, ս. գրքերի ընթերցանությամբ և ընդհանրապես հասարակության այլ և այլ խավերին հետաքրքրող շահեկան գրքերի ընթերցանությամբ: Նա պետք է լինի ծովկալ, պահեցող:

«Այլ ճնշեմ գմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ ալոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանցիմ» (Ա Կորնթ. Թ. 27) կամ՝

«Այլ զգեցարուք զՏեր Յիսուս Քրիստոս և մարմնոյ խնամ մի տանիք ի ցանկությունս» (Հռով. ԺԳ 14):

Առաջին հերթին քահանան պետք է լինի հավատքի մարդ: Ոչ միայն՝ Ավետարանը լավ իմանա, այլև Ավետարանի կյանքով սպրի և օրինակ դառնա մարդկանց: Նա Ավետարանի լույսով պետք է առաջնորդի իր հոտը դեպի կատարելություն: Առաջնորդ, հովիվ լինելը հեշտ չէ, հովվից պահանջվում

է հոգեկան, մտավոր և ֆիզիկական ուժերի չարում՝ դատտխարակման գործում հաջողության հասնելու համար: Եթե հովիվ լինելու հանգամանքը մարդկանց փառասիրություններն է շղոմ, իսկ ինչպիսի՝ աշխատանք է անհրաժեշտ այդ անվան արժանի լինելու համար:

Քահանայի ուսումնասեր, պատրաստված լինելը անհրաժեշտություն է: Նա ժողովրդի մեջ միշտ չէ, որ պիտի հանդիպի միայն սահմանափակ հետաքրքրությունների տեր մարդկանց: Նա շփման մեջ է լինում այլ և այլ մասնագիտությունների տեր մարդկանց հետ, տարբեր գաղափարախոսություններ դավանող, տալիքեր նախասիրություններ ունեցող մարդկանց: Կյանքի այլ և այլ հարվածների տակ կցած մարդկանց է հանդիպելու քահանան, հանդիպելու է նաև սզկիվ, համեստ, ուղղամիտ մարդկանց:

Քահանան պետք է մտնեն նրանց, սիրի, հարգի նրանց մեջ մարդկայինը, մասնակից դառնա նրանց ապրումներին, հետաքրքրություններին, վերջապես քահանան պետք է լինի այնպիսի մի անձնավորություն, որի առաջ ժողովրդի բոլոր անդամները, մեծից մինչև փոքրը, կարողանան բաց անել իրենց սրտերը՝ սպասելով նրանից խորհուրդ, քաջալերանք, մխիթարություն, հուսադրում, սեր և հավատք իրենց կատարած գործի հանդեպ: Միևնույն ժամանակ նա պետք է կանխի իր բարի խրատներով այն բոլոր սարքներն իսկ, որոնք և՛ անհատին և՛ ընտանիքին, և՛ եկեղեցուն ու ժողովրդին վնաս են բերելու: Ներսես Շնորհալի Հայրապետը իր «Ընդհանրական»-ում՝ «Առ դասս քահանայից» ուղղված խրատներում առում է.

«Մի ոք ի ձեց սիրեսցէ զկուրուքսին տգիտութեան քահանայական ուսմանց չաղագս ծուրութեան կամ աշխարհական զբաղմանց, այլ թէև ոչ ամենեցուն ամենայն շնորհօք կատարեալ լինել հմար է, գոր և Աստուծային օրենքս պահանջեն ի քահանայից, սակայն ի հարկատրսն պարտին անթերի լինել...»:

Քրիստոնյա համայնքի անդամները քահանայի մեջ ոչ միայն պետք է տեսնեն իր կոչմանը նվիրված անձնավորությանը, այլև գիտելիքների լայն պաշար ունեցող նկարագրի տեր քահանային, որը Ավետարանի հավիտենական ճշմարտության ջատագովն է:

«Եթե կոչումը առաքելական ոգի կուտա հոգևորականին և կգոտեպնդե գայն արիությանը», եթե նկարագիրը հարատևության ջիղը կգորացնե հոգևորականին ներսը ուսումնայն անառիկ կընեն անոր տրամաբանության ամրոցը, ծանոթություններու և հետևության ճոխ մթերքով մը դիտելու ու դա-

սակում նոր կարողության մը հմայքով», — ասում է յուսահոգի հարգեն կաթողիկոս Կյուլենբյանը:

Եթե քահանայի գիտելիքները չեն պսակվում հավատքի մարդու համեստ յուսալսականով, դաստիարակությունը «ծայն բարբառող յանապատի» կլինի: Ո՛վ կլսի նրան, երբ ինքը քահանան կարիք ունի քրիստոնեական դաստիարակության:

Քահանան Աստուծո պատգամաբերն է, գործակիցը և քարոզիչը. «Որ ընդունի զձեզ, զիս ընդունի, և որ զիս ընդունի, ընդունի զառաքիչն իմ» (Մատթ. ԺԸ 40): Նա պետք է կարողանա զանազան ձևերով մատուցել միևնույն ճշմարտությունը իր ունկնդիրներին՝ նկատի ունենալով նրանց ընկալելու, ըմբռնելու կարողությունը և զանազանությունը:

Քահանան առաջին հերթին որպես ծիսականտար իր շնորհներով փայլում է եկեղեցում: Նրա աղոթքները, երգերը, քարոզները այն քաշողական ուժն են լինելու, որոնց ունկնդրման համար մարդիկ պետք է զանջնջվեն իրենց, աստվածաբույր և հայաբույր այդ օջախը: Քահանան Աստուծո ներկայացուցիչն է տաճարում: «Ջող կապեցեք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և գոր արձակեցեք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԸ 18 Բ.), — ասում է ավետարանիչը: Քահանան իր սրբակյաց կյանքով և իր անկեղծ աղոթքներով ջնջմացնում է եկեղեցու մթնոլորտը և հավատացյալների մեջ ներարկում աստվածապաշտության ջերմ հավատքը: Դաստիարակում է իր աղոթքներով և քարոզներով, որոնք չպետք է կատարվեն մեքենայաբար. այլ «և թէ գոյ հմար արտասուօք և մեծա երկիտիս»՝ Ներսես Շնորհալի Հայրապետի բառերով ասած: Ծիսականտարությունը կատարել երկյուղածությամբ, որովհետև՝

«Ծանեալուք և զայս, զի կոչումն անուան քահանայութեանդ՝ ձերոյ ոչ է ի մարդկանէ և ոչ է ի ձեռն մարդոյ, այլ յալմանէ՝ որ կոչեցաւ քահանայ ըստ կարգին Մեքիսեղեկի, որ է ինքն ճշմարիտ քահանա և քահանայապետ և պատարագ Աստուծոյ Հօր» (Ներսես Շնորհալի):

Ներսես Շնորհալի Հայրապետը քննադատում է քահանաներին, որոնք մարմնական և հոգեկան մաքրությունը զանց առնելով, եկեղեցի են մտնում, վայրիվերող պատարագ մատուցում, ժամերգություն կատարում: Այսօր էլ այժմեական են հնչում նրա խոսքերը.

«...Կարգեալ էք քահանայական գործառնութեամբ նուիրել զամենայն հոգիս Աստուծու... և արդ աղաչեմ զամենեսեսն սիրովն Քրիստոսի բանալ զայս մտաց և զարթնոյ

ի մահահրաւէր թմրութեն իննցաղոյս... այլ արիաբար և յօժարամիտ սրտի առանց ծալութեան զկանոնեալ սահմանս աղօթից և հարցն անթերի կատարեցէք ըստ յիշաբանչիւր ժամուս»:

Հայրապետական կանոններին ենթարկվելը ոչ միայն օրենք պետք է լինի, այլև պետք է լինի այն ուղին, որով պետք է առաջնորդվեն քահանաները:

Վարդան վարդապետը «Երաւոյ յաղագս քահանայութեան» մասում գրում է, որ երկինքը «ի ձայն քահանայի» քաջվում և փակվում է: Ահա թե ինչպիսին պետք է լինի քահանան:

Հեշտ է անցյալով հպարտանալ, գոյց տալ արժանավոր, նահատակ քահանաների սնունդները, որոնք եկեղեցու հաստատման, հավատքի, հայրենիքի համար հոժարակամ իրենց անձը նվիրել են տանջանքների, հրի ու սրի, ու կարելի է նշել երանելի քազմաթիվ քահանաների անուններ, որոնք գրիչ են վերցրել մեր եկեղեցու դավանանքը պաշտպանելու, մեր ժողովրդի մշակութային, հասարակական կյանքի զարգացման գործում իրենց համեստ յուման մոծելու համար: Իր նախորդներին արժանի լինելու համար այսօր քահանան պետք է հավատա ներկայի ու գալիք օրերի իր սրբազան գործունեությանը՝ ներշնչվելով նրանց աշխատանքով, հավատքով ու եռանդով: Ժողովուրդը քահանայի կյանքով և նրա քարոզներով է, որ ճանաչում է և պատկերացում ունենում քրիստոնեության մասին: Նրա խոսքն ու գործը կյանքում միմյանց պետք չէ հակասեն:

Քահանան բնավորությամբ պետք է լինի պարկեշտ, պարզ, համեստ, խաղաղասեր, խոնարհ, հավատարիմ, անջահախնդիր. բնավորության գծեր, որոնք շատ հեշտությանը կնվանեն հավատացյալ մարդկանց սերն ու հարգանքը:

Նյութը արհամարհելը, նյութով չտարվելը ամեն մի մարդու առաքելությունը չէ: Իսկ երբ քահանան է շահույթի, փողի հետևից ընկնողը, նա մաքրամաքուր պատվանդանից իջնելով՝ դառնում է սովորական մի մարդ, որը իր քահանա դաստիարակի կոչումը վերածում է արհեստի, և ինչպե՞ս նա կարող է դաստիարակել, օրհնակ հանդիսանալ իր հավատացյալներին:

Հովհաննես Սրկ. վարդապետը իր «Յաղագս քահանայութեան և քահանայից» (Սովորք Հայկական Գ, էջ 9—77) ճառում խոսում է քահանայի կոչման մասին:

«Քահանայութեան գործառնութիւն և պատիւ ոչ այլ ինչ է քան զսոբորեցութիւն հոգւոց առ ի փրկութիւն ունի դիտաորութիւն» և ապա քահանային ներկայացնում է որպես «բժիշկ, վարդապետ, հայր, դայակ, խոր-

նըրդատու», որի միջոցով «խորհուրդ տալու» ամպաշտություն էան լնու և եկեղեցի Քրիստոսի գեղեցկապէս և քաջօրէն կարգօք մատակարարի և ամբողջ մնայ»:

Անձնակեր և գոհողության ոգի ունեցող քահանայի համար անհամատեղելի է ընչաքաղցությունը, որովհետեւ Հիսուս «...վասն թեր աղքատացա՛, որ մեծատոնն էր» (Բ կորն. Ը 9):

Եվ եթէ մեկը հոգևոր հար է, միթէ՞ նա իր որդիների հետ՝ Քրիստոսով ամբողջություն կազմող այդ ընտանիքում կատարված ծիսակատարությունների համար պետք է սակարկի, կամ իր դժգոհությունը հայտնի, կամ պարզապէս ձեռք մեկնի՝ մի քան ավելի ստանալու համար: Եվ իզուր չէ, որ մեր ժողովրդական ստեղծագործությունը հանդիսացող առակներում և առաջվածքներում մահախ ենք հանդիպում քահանայի ունեւաղցությունը ընդգծող թեւավոր խոսքերի:

Հոգևորականների համար է ապաված.

«Ջի արմատ ամենա՛ն չարեաց արծաթսիրութիւնն է, որում ոմանց ցանկացեալ վրիպեցան ի հաւատոցն և զանձինս արկին ընդ բազում ցաւօքն: Այլ դու, ով մարդ Աստուծոյ, փախիր յայնմանէ, և երբ զհետ արդարութեան» (Տիմ. Զ 10—11):

Ներսէս Շնորհալի Հայրապետը ավելի առարկայացնելով իր ասելիքը, գրում է այն մասին.

«Եւ մի ոք ի ձէնք ըստ հարկի պահանջեսցէ զհին արծաթոյ շնորհի վասն մկրտութեան, կամ մահու հաղորդ տալու, ալ որ ունի և տան սիրով որպէս զուրկ եկեղեցոյ առէք, և որ աղքատ լինին մի բռնադատէք»:

Գործի հանդեպ հավատքի պակասը և նյութապաշտությունը այն երկու մոլորություններն են, որոնք ապականում են, եղծանում մարդկային բոլոր առաքելությունները, որոնք արգելք են հանդիսանում մեքի ու հոգու թոխչքներին, և այդ գորեղ թշնամիները կխորտակեն հոգևորականին՝ նրան դարձնելով անարժան մի հովիվ, որը «...թողու գոչխարսն և փախչի» (Հովն. Ժ 12):

Զէ՛ որ հոգևոր հայրը, դաստիարակը նյութից վեր պետք է լինի: Եթե նյութապաշտությունն է տիրապետող ոգին, քահանայի ունեցած մյուս բարեմասնությունները կըրժգունեն:

Քահանայի հովվական պաշտոնը նրան պարտադրում է հաճախ լինել հավատացյալների ընտանիքներում: Ամեն մի ընտանիք ունի իր ցավն ու ուրախությունը: Քահանան իր դաստիարակչական միջոցներով, իր հայրական խրատներով, հորդորներով, համբերատար գրույցներով, Ավետարանի խոսքերով սեր, խաղաղություն, եղբայրու-

թյուն է սերմաներու: Նա հոգեկան միփոսություն է տալու ճիվանդներին ու սգավորներին:

Սահակ Պարթև Հայրապետը իր կանոնների մեջ գրում է՝ իր խոսքն ուղղելով քահանաներին.

«Ուսուցէք ևս ժողովրդականս յամենայն անառակութենէ ի քաջ վախչել՝ յորկորքատութենէ, յարբեցութենէ, ի հակառակութենէ, ի զրկելոց զաղքատս և զընկերս իրեանց, մի կոտուղս, մի հաճախակողս, մի չարաւերս, ատեսցեն զշնացողս, զգողս, զպողոնիկս, զաւագակս...» (Կանոնը Սահակ Պարթևի ԻԶ. կանոնագիրք Հայոց):

Ինչպիսի՞ն պետք է լինի քահանան, երբ ուրախության սեղանի վրա է: Եթե խմուղը և շրջապատի մարդկանց ուրախությունը խաթարուղ աշխարհական մի անձնավորություն է, ինչպիսի՞ ըննադատության կենթարկենք նրան, իսկ եթե այդ արարքը թող տվուր քահանան է, որքան ավելի ցավալի է հոգեվորականների և եկեղեցու շահերի համար: Քահանան միշտ զգույշ պետք է լինի, իմանա իր չափը և իր դիրքով ու շուքով դաստիարակ հանդիսանա շրջապատի մարդկանց համար:

«Մի յապաղել անդր ընդ զհմարքու աշխարհականացն մանկունս ...այլ յառնել վաղվադակի ի սեղանոյ անտի, զի մի ընդ զինեմոյսն յարբեցութեան ըմբռնեալ ալալ լինիցի արտաքնոց տեսանողաց, ոչ միտմ ինքն, ալ և ամենայն քահանայք միովն», — խրատում է Ներսէս Շնորհալի Հայրապետը:

Քահանան է նաև հասարակական գործիչ. նա իր խոսքն ունի ժողովրդին ուղղված: Մեր ժողովրդի կյանքի յուրահատուկ պայմանները ստիպում են, որ քահանան մասնակցի հասարակական կյանքին: Այս չի նշանակում, որ նա կողմ, կուսակից կամ կուսակցական լինի: Քահանան պատշաճում է Աստուծո արդարության և ճշմարտության կուսակցության: Ինչպիսի՞ տնտեսական ու քաղաքական պայմանների, ինչպիսի գերիշխանությունների տակ էլ որ լինի նա, ելակետ պետք է ունենա Հայաստանյայց եկեղեցու, հայ ժողովրդի և հայրենիքի շահերը:

Քահանան ոչ միայն իր հոտի դաստիարակն է, այլև ուսուցիչը: Նրա ընտանեկան խաղաղ, հայեցի, քրիստոնեական մթնոլորտը օրինակելի պետք է լինի և օրենքի խրատությունը իր և իր ընտանիքի անդամների վրա կիրառի:

Երանաշնորհ Գրիգոր Տաթևացի վարդապետը, վարդապետական գավազանի տրվչության առիթով իր «Քարոզգիրք»-ի «Զմեքան» հատորում վարդապետների համար

առում է, որը և վերաբերում է բաժանմանին։

«...Ջի վարդապետին պարս է, որ գծանք և մեծամեծ օրվա ինքն կատարեցել, զսակաւն և գթեթնն այլոց քարոզեցաւ։ Ջի որպէս մերձ է ականցս իւր ի բերանուն ըստ օտարաց, նոյնպէս մերձատուր և նախկին ինքն յսեցէ։ Ապա թէ գծանք լուծն այլոց դնիցէ, և ինքն մատաւրն ոչ հպեցի, նմանի հիմար փողաճարի՝ որ գլայն ծայրսն ի բերանն իւր դնիցէ և զնեղն արտաքս, ոչ հնչէ ծայն, այլ միշտ յերեսս իւր թթանէ»։

Խոսքի և գործի հակասությունն է այստեղ ընդգծված պատկերավոր ձևով։ Դաստիարակ քահանան իր հմաւքը կկորցնի, երբ իր ասածները իր համար և իր ընտանիքի անդամների համար ևս կլանքի օրենքներ չդառնան։ Այլապէս «իսկ եթէ ոչ իւրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոյն ուրացեալ է և չար բան զանհաւատսն է» (Ա ՏԻՄ. Ե 8)։

Եթե Ամենայն Հայոց Հայրապետությունը և մեր մյուս վանական հաստատությունները ելել են և են մեր եկեղեցու սիրտը, ապա մեր մարմնին սրտից արլում տանող ու դնպի սիրտը արլում միող մազանոթները և երակները քահանայությունն է։ Առանց արյունատար երակների սիրտը ինչքան էլ առողջ լինի, իր դերը չի կարող կատարել, իսկ մարմնի մի մասի հիվանդությամբ՝ սիրտն էլ կդադարի բնականոն աշխատելուց։

Այսօր էլ քահանան պատկեշի վրա է։ Նվիրված և իր կոչման բարձրության վրա գտնվող քահանաների կարիքն ունի մեր ժողովուրդն այսօր, որոնք լինեն Եսայի Մարգարեի խոսքերով. «Դուք քահանաք Տեառն կոչեսցիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսցիք» (Կա. 6) քահանաներ, որոնք լինեն հոգեպէս անթերի մարդիկ, ինչպէս ասում է Մահակ Պարթև Հայրապետը իր կանոնագրքում։

«...Տաներուք, զի որպէս կուրութիւն աչաց ատելի է մարմնոյ, նոյնպէս ազիւտութիւն ոգոյ ատելի է Աստուծոյ»։

Մեր դարաշրջանում, երբ մարդկանց սրտերում խարխուլել են հավատքի եգրերը,

կրք միայն նրա իմն է տիրապետողը, վերստին պատգամների տարածումը ու յուսաբանումը, որպէս դաստիարակի, մեզանից ավելի ուժ, եռանդ և գիտելիքներ է պահանջում։

Մեր դարավոր պատմության ընթացքում մայր քահանայությունը արժանավորապէս բաժանեց իր ժողովրդի ողորդությունը։ Մեր քահանաներից շատերը «սողոքեցան, քարկոծեցան, սպանմամբ սրտով մեռան»։ Նրանց նահատակությամբ և վկայությամբ սակայն «Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»։


Այսօր Ղևոնդյանց դասի և նրանց նմանների նահատակությունը չի պահանջվում մեզանից, բայց ունենք քաղաքիվ գործեր կատարելիք Ղևոնդյանց ոգով և հավատքով։ Լինենք մեր հայրերի օրենքներին հավատարիմ։ Լինենք Մայր Աթոռ ս. Էջմիածնի համեստ սպասավորները և երդվենք լինել մեր մշակույթի, ժողովրդի և Աստուծոյ արժանի զավակները։

Ոչ միայն պարծենալ անցյալով, այլև մեր գործերով, մեր տրեմաջան աշխատանքներով սատարենք մեր նոր սերունդի դաստիարակության գործին։ Եվ մենք որպէս նոր ժամանակների քահանա սերունդ, մի բան շահախ, մի քար դնենք այն պատմության փառաւնել կառույցի վրա, որը կոչվում է Հայաստանյայց եկեղեցու պատմություն։

Մի կողմ թողնենք մամոնայի ետևից վազելը և այլ մարդկային մեր տկարությունները, երբ ձեռքման վտանգը դառնկյալն սրի նման կախված է մեր ժողովրդի մի մեծ հատվածի գլխին, երբ մեր հոգին ու սիրտը աղճատվելու վտանգի տակ է, հավատարիմ լինենք՝ այն ուխտին, որը մեզանից (ուրաքանչյուրը կատարել է Աստուծոյ ս. սեղանների առաջ։ Մեր ազդեցությունը շարունակենք կատարել անճանճրությոյ, մեր հարկերի աղոյթների պէս, որպեսզի մենք ևս կարողանանք ասել մեր եկեղեցու և հայրենիքի պաշտպան Վարդան Մամիկոնյանի խոսքերը։

«Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ... բայց միայն յարութիւնս քաջութեան վատրութիւն մի խառնենցուք»։





ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻՆ ԵՎ ԻՐ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լամբրոնացիք մեր միջնադարի ամենապայծառ դեմքերից է: Երբ Ներսես Շնորհալու արգասավոր կյանքը թեքվում էր դեպի արևմուտք, հայոց գրական երկնակամարի վրա իր հանճարով երևաց Լամբրոնացիք: Ինքնատիպությամբ, իր հարուստ հոգով ու պոռթկումներով նա մտնում է Նարեկացու: Երկուսն էլ, ամեն մեկն իր դարում ու տեղում, իրենց հանճարով անկրկնելի եղան: Գրեցին ի խորոց սրտի, կրքոտ ու կրակոտ, հակում ու փոթորկալի: Պատահական չէր, որ Լամբրոնացիք ամբողջ կյանքում իր իդեալն էր ընտրել Գրիգոր Նարեկացու: Ապրեց շատ կարճ՝ ընդամենը 45 տարի, բայց այդ կյանքը եղավ զարմանալի գեղեցիկ՝ եռանդով, համարձակությամբ ու յայնպիսիությամբ զարդարված: Ապրեց, գործեց ու ստեղծագործեց Կիլիկիայում, որն այդ շրջանում ամբողջ հայության հոգեկան օջախն էր: 11-րդ դարում սելջուկների հորդանքեր լցվել էին Մայր երկիրը: Քաղաքական կյանքը անհաստ էր: Բուռ հայրենիքից շատերը գաղթում էին դեպի Միջագետք և Կիլիկիա: Այդ գաղթականներից մեկն էլ Լամբրոնացու մեծ պապը՝ Օջին իշխանն էր, որը 1073 թվականին Գանձակի գավառից գնաց Կիլիկիա և բնակություն հաստատեց Լամբրոն քերդում: Հայ տարրը այստեղ բնակչության մեծ մասն էր կազմում: Հիմքը՝ վեց Կիլիկիայի հայկական պետությունը: Լամբրոնի ամրոցում 1158 թվականին ծնվեց «գեղեցիկ դիմօք» մի մանուկ, որը կոչվեց Սմբատ՝ ապագա Ներսես Լամբրոնացին: Սովորեց մոր մոտ, ապա Սկսնա վանքում: Շրջեց Ամանուսի լեռների վրա եղած գրեթե յուր լանջերը, սակայն ամենից շատ սիրեց

«ծալուակուռ» վեհաճիստ Սաղրու վանքը: Այստեղ գրեց Պատարագի և Սաղմոսի սքանչելի մեկնությունները: Իր անսպարիտ կաշարը նա քաղեց Կիլիկիայի վանքերի դպրոցներից ու գրապահոցներից: Շնորհիվ Կիլիկիայի ազգային պատմության՝ երկրի տնտեսության, արհեստների և վաճառականության զարգացման հետ միաժամանակ ծաղկում էր նաև ազգային մշակույթը: Ամեն մի վանք կրթության և լուսավորության մի ցած էր այդ ժամանակներում: Հիշենք դրանցից Դրագարկի Սև քարի, Հոռմկայի, Գըրների և Կարմիր վանքերը՝ իրենց տարբեր տիպի դպրոցներով, որտեղից որպես լուսն ընձյուղներ ճառագայթեցին Ներսես Շնորհալին, Բարսեղ, Իգնատիոս և Սարգիս Շնորհալիները, Մխիթար Հերացի, Մատթեոս Ուռհայեցի, Գրիգոր Տղան և ինքը՝ Ներսես Լամբրոնացին: 28 տարեկան հասակում սա արդեն եպիսկոպոս էր: 24-ի մեջ մեկնում էր խորախորհուրդ պատարագը և Սաղմոսը: Ներսեսը հայոց հայրապետանոցի հոգեկան զարդն էր և արքունիքի աչքերը, խորհրդատուն, թարգմանիչ ու քարտուղարը: Պայքարեց երկու ճակատի վրա՝ հանուն հայ եկեղեցու և պետության ինքնուրույնության, անկախության ու քաղաքացության: Առաքինության, նշմարասիրության, խաղաղության և մարդասիրության բոլոր գաղափարները նրա համար մի ակունք ունեին և դա սերն էր՝ համամարդկային սերը: Որպես խաղաղության և սիրտ հոգեվոր զինվոր՝ մնաց միշտ անվեհեր, և անհաճանք: Պատմության մեջ հայ հոգևորականներից շատերը միաժամանակ եղել են նաև ազգային, հասարակական, հայրենա-

սեր գործիչներ ու գաղափարախոսներ: Սրանք ձեռք-ձեռքի գործել են թագավորների և իշխանների հետ՝ համուն հայրենիքը ու հավատի: Այդպիսին էր և Լամբրոնացին: Ամխոնք էր աշխատանքի մեջ: Նրա համար գիշեր գոյություն չուներ: Մի երկու ժամով միայն ննջում էր աթոռի վրա՝ կծկված: Իր կյանքից գողանում էր ժամանակը: Խավար գիշերները միայն մի վտիտ մոմ էր աղոտ լույս տալիս նրան, բայց իր հոգին արեգակ էր: Աշխարհաքաղաքացի էր նա՝ ուղղամիտ, լայնախոհ: Որքան դեպի երկինքն էր ուղղված նրա հայացքը, նույնքան էլ դեպի երկիրը, աշխարհն ու կյանքը: Փոքր Ասիայի անկյուններից մեկում, եվրոպական վերածնությունից ավելի քան հարյուր տարի առաջ, նա քարոզեց յուսամիտ, մարդասիրական գաղափարներ՝ խաղաղություն և ազգամիջյան համերաշխություն: Գիրն ու խոսքը իր համոզումների գեղեցիկ մարմնավորումն էղան, մինչև իր կյանքի վերջին ժամը: Անպայանելի էր վախճանը: Մեռավ բեմի վրա՝ քարոսյան խոսքը բերանում: Բոցաշունչ պերճաբանի մարմինն ամփոփեցին Սկևռա վանքի ս. Աստվածածին եկեղեցու կամարների տակ, այն եկեղեցու, որին Օշին իշխանն ու Շահանդուխտը ուխտել էին նվիրել իրենց Սմբատին՝ դեռ չծնված...

• • •

Բազմաժանր ու բազմաբնույթ է Ներսես Լամբրոնացու թողած գրական ժառանգությունը: Նա եղել է արտակարգ բեղմնավոր: Նրա գրեթե քոլոր գործերը հասել են մեզ, թայց, դժբախտաբար, առ այսօր դրանց շատ քիչ մասն է տպագրված: Մեր պատմաբաններն ու մատենագիրները հիացմունքով են խոսում նրա մեծ վաստակի մասին. «Յատուրս սորա էին վարդապետը անուանիք և իմաստունը՝ Ներսես սքանչելի... և միս Ներսես եպիսկոպոս Լամբրոնացի, եղբայր Հեթումյ, որ թարգմանեաց զմեկնություն Տեսլեանն Յովհաննու, և գլատություն Գրիգորի պապուն Հոռմայ, և գորինադրություն... արար և մեկնություն յինքեցե Սաղմոսացն Դատթի, և Առակացն Սողոմոնի, և սուրս պատարագամատուցն...»¹:

Լամբրոնացու թուր գործերի և թարգմանությունների վերաբերյալ բազմավաստակ բանասեր Հ. Ղևոնդ Ալիշանի մոտ կարդում ենք հետևյալ տողերը. «Ո՛ր քսաններեքամեցի տիեզերական վարդապետ դոքսմի... ի յուս հանել գաղափարագամեկնիչն, ասեմ որ ոչ միայն իրանյոց գրատոր երկոց գլուխ և նախարաս, այլ թերևս առհասարակ հայերեն դպրութեանս յայնմ սեռի գրուածոց...

Առատաբան և ներանձնական Սաղմոսամեկնիչն գրեալ ի 26—8 ամս տիոցն... Ո՛ր հանգոյն մին գիտաց հիսել և արտասանել գիլաշարի ճառսն ի Համբարձումն Տեսոն, և ի Գալուստ Հոգւոյն Սրբոյ... զԱտենաբանությունն հռչակապանծ, միս ևս հրաշալիքս գրատոր գործոց... Որքան քնենք միտք՝ այնքան և ապշին ընդ հոյովություն վաստակաց մորին, յորոց կան, մեան կեցեացի վրկայք յիսնաթի գրատորքն՝ ընդ մեծ և ընդ փոքր, և որ հեղինակութեամբ, և է որ թարգմանութեամբ՝ ի յունէ, ի յատինէ և յասորոց, թույ գրեգորիականությունս պէտպէս մատենից սրբոց»:

Վերոհիշյալ բազմաթիվ գործերի մեջ սեզեբարգանց, գլուխ-գործոցներ են «Ատենաբանությունը» և «Պատարագի մեկնությունը»: «Ատենաբանությունը» մեր միջնադարյան հոգևոր ճարտասանության մեջ մի անցման կողով է՝ իր ձևով, էությանը և մարդասիրական գաղափարներով: «Ատենաբանություն» վերնագիրն ունեցող հրապարակախոսական գործերը Լամբրոնացու ժամանակների համար նորություն չէին: Դա եկեղեցական արծակի մի յուրահատուկ տեսակ էր, որն արձագանքում էր ժամանակի տրամադրություններին և զբաղվում ոչ միայն կրոնական, եկեղեցական հարցերով: Դեռևս 8-րդ դարում Հովհաննես Օձնեցի իմաստասեր կաթողիկոսը եկեղեցական կարգ ու կանոն էր այլ հարցերի վերաբերյալ հանդես եկավ իր Ատենախոսությամբ: Այդ շրջանում նկատվում էր ոչ միայն անկարգություն, այլև կյանքի պայմանների հետևանքով առաջացած հավատի թուլություն: Ահա թե ինչու Օձնեցին մի մեծ ժողով հրավիրեց Դվինում և արտասանեց իր հայտնի Ատենախոսությունը: Վերջինս գոված է գեղեցիկ և ըմպիր ոճով: Խոսքի վսեմությունը, պայծառ իմաստը, ս. Գրքի, եկեղեցական հայրերի գործերի շուրջ դրսևորված հմտությունը ու մանավանդ բարի գործերի նախանձախնդրությունն և հորդորները առանձից պայծառություն են տալիս Օձնեցու «Ատենախոսութեանը»: Այսպիսի մի գործ էլ ունի Ներսես Շնորհալին, 1166 թվականի ապրիլի 17-ին, Ծաղկազարդի կամ Արմավենյաց կոչված տոնի օրը, Հոռմկյայի հոգևորականների առաջ արտասանված մի գեղեցիկ ճառ, որը հայտնի է «Ատենաբանություն» անունով: Շնորհալու Ատենաբանության արժեքավոր, տիրահատուկ և բնորոշ կողմերից մեկն այն է, որ հայրապետական և կրոնական հարցերի հետ գուրգնջաց այնտեղ շոշափվում են նաև այնպիսի խնդիրներ, որոնք էու-

¹ Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 90—87:

թյալը ազգային, աշխարհիկ բնույթ են կրում: Լամբրոնացիին հետևելով Օձնեցուն և Շնորհալյուն, իր Ատենաբանության մեջ ոչ միայն ինքնուրույն է, այլև մեր արձակի հրապարակախոսական այդ տեսակը ավելի խորացրեց, զարգացրեց, դուրս բերեց այն ազգային կյանքի շրջանակներից և իր քրե-
նած խնդիրներից հաղորդեց համամարդ-
կային բնույթ: Եթե մոտ երկու տասնամյակ առաջ, հույների հետ եկեղեցիների միության հարցերին պատասխանել էին Ներսես Շնորհալյուն և Գրիգոր Տղան՝ իրենց դավա-
նաբանական գրվածքներով ու թղթերով, ապա այժմ, այդ լուրջ ու ծանր պարտա-
կանությունը կատարելու էր Տարսուցի եղի-
տուսարդ արքեպիսկոպոս, Ներսես Լամբրո-
նացին: Եկեղեցիների միության խնդիրը նոր
մե էր ստացել, որը պահանջում էր նոր մո-
տեցում և նոր վերաբերմունք: Այդ հարցերը
նույնպես միայն կրոնական կամ դավանա-
բանական բնույթ չէին կրում, այլ սերտորեն
կապված էին ժամանակի կացության, տար-
բեր ազգերի միջև քարեկամական հարաբե-
րություններ հաստատելու և այլ խնդիրների
հետ: Ահա այդ խնդիրների լուծմանը է
նվիրված Լամբրոնացու «Ատենաբանու-
թյունը»: Ելակետ ունենալով մի կողմից
քրիստոնեական վարդապետության խաղա-
ղասիրական սկզբունքը, մյուս կողմից՝ հայ
ժողովրդի աշխարհիկ ու հոգևոր կյանքի
պայմանները և աշխարհի տարբեր ազգերի
միջև խաղաղություն հաստատելու անհրա-
ժեշտությունը, Լամբրոնացին այս աշխատու-
թյան մեջ առաջ քաշեց եղբայրության, խա-
ղալուծության և համամարդկային սիրու գա-
ղափարներ: Ահա թե ինչն է հանդիսանում
այս հռչակավոր գործի էությունը ու ոգին:

Մեր քանասիրության մեջ որոշ գիտնա-
կաններ այն կարծիքն են հայտնել, որ Լամբ-
րոնացին «Ատենաբանութիւնը» արտասա-
նել է 1178 թվականին Հռոմկլայում հրավիր-
ված ժողովում, իսկ ոմանք էլ ընդունում են,
որ այս մեծ ճառը մա խոսել է ոչ թե Հռոմ-
կլայի, այլ Տարսուցի 1187 թվականի ժողո-
վում: Այս երկու կարծիքներից ո՞րն է հա-
վանականը, կամ մի՞թե Լամբրոնացին այս
բազմաթվանդակ գործը գրել է միայն դա-
վանաբանական, ծիսական խնդիրները քն-
նելու կապակցությամբ: Հռոմկլայի և Տար-
սուցի ժողովների միջև ընկած է ուղիղ 19
տարի: Պատմաբան Հ. Մ. Չամչյանը գրում
է. «Ամենեքին սուրբք ի մի գումարեալ ան-
դանոր ի Հռոմկլայ, ի Հայրապետական Ա-
թոռն, յամի տեառն 1178 և ի թուականու-
թեանն հայոց ՈՒԸ...: Եւ ի ժողովի անդ խո-
սեցաւ ճախ Ներսէս Լամբրոնացի զայն
սրբանչեի մանստանդ թէ գնդիաշունչ Ատե-

նաբանութիւն իւր...»: Հետևելով Չամչյա-
նին, Հ. Ղ. Ալիշանը գրում է. որ Լամբրոնա-
ցին «գլխտենաբանութիւնն հռչակապաւն»
արտասանել է «ի համագումար ժողովի
Հայոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Հռոմ-
կլայն (1178)»³: Հ. Գ. Զարբհանայանը, Ա.
Զամինյանը և ուրիշներ գտնում են, որ
Լամբրոնացին այդ ճառը արտասանել է ոչ
թե Հռոմկլայի, այլ Տարսուցի 1187 թվակա-
նին կապաւած ժողովում⁴:

Տեսնենք, թե այս կարծիքները ինչ վաւ-
տերի վրա են հիմնված:

Այս երկու խմբերի էլ հիմքերը հավանու-
րեն եղել են «Ատենաբանության» տարբեր
վերնագրերը և տեղիք տվել այդ տարբեր
կարծիքներին: Ուշագրւալ է, որ «Ատենա-
բանության» տպագիր հրատարակություն-
ների վերնագրերի մեջ տարբերությունն
այնքան նկատելի չէ, որքան ձեռագրերինը:
Մի քանի հրատարակությունների («Նամա-
կանի»՝ 1898 և 1865 թթ., Վենետիկ, էջ 93.
«Ատենաբանութիւն և ճառք», Կալկաթա,
1851 թ., էջ 1 և այլն) վերնագրերի մեջ թեև
տարբերություն չկա, սակայն չի գրված
տարեթիվը, թե ո՞ր ժողովում, ե՞րբ է խոսել
Լամբրոնացին այդ ճառը: Իսկ ձեռագրերում
ոչ բոլորի մեջ միատեսակ կա ժողովի և խո-
սելու ժամանակը, որտեղ նկատելի են մաս-
քաների ու կապակցությունների տարբերու-
թյունները: Մ. Մաշտոցի անվան Մատենա-
դարանի հին ձեռագրերից մեկում Ատենա-
բանության վերնագիրն է՝ «Յաստումաձա-
խումք և ի տիեզերական ժողովն Տարսուցի»
որ ելն ի շրջան ընթացից ժամանակի Ուժ-
թուականն հայոց, հրամանաւ հատմանը շտապ
կաթողիկոսէն հայոց Գրիգորիսի, եղբոր-
որդու սրբոյն Ներսէսի, յաջորդի տաքե-
լական Աթոռու սրբոյն Գրիգորի և քրիստո-
սապսակ արքային հայոց Ատնի, սակաւ
միութեան եկեղեցւոյ»⁵:

Իսկ մի ուրիշ ձեռագրի մեջ արդեն «ՈՒԸ»
ժամանակը չկա. «Աստումաձախումք և տիե-
զերական ժողովն Տարսուցի, որ ելն ի հա-
մանքեշտակ կաթողիկոսէն հայոց Գրիգորէ,
եղբորորդու սրբոյն Ներսէսի Կյաւեցու և ի
քրիստոսապսակ արքայէն հայոց Ատնէ,
սակաւ միութեան եկեղեցւոյ: Ատենական
խօսք մեծից և սրբոյն Ներսէսի այնմ աստ-
ումաձապան քաղաքի արթոսկայի և աստ-

³ Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, էջ 128:

⁴ Հ. Ղ. Ալիշան, Միտումն, էջ 87:

⁵ Հ. Գ. Զարբհանայան, Հայոց հին գրակ. պատմ., Կ. Նու-
սիքեան, 1814, էջ 178:

⁶ Ձեռ. ՁՁ 1981, էջ 1:

ուսածախսու վարդապետի»։ Այսպիսի տարբերություններ կան նաև մի լատին ալլ ձեռագրերում։

Իր «Ներսես Լամբրոնացի» արժեքավոր մատենագիտական հետազոտության մեջ բանասեր Ռ. Ն. Ալիեյանը, բազմաթիվ ձեռագիր օրինակների և տպագիր հրատարակությունների ընձեռած տվյալների վրա, խմբավորելով Լամբրոնացու Ատենաքաանության հին ու նոր, խմբագրված ու չխմբագրված վերնագրերը, գտնում է, որ դրանց մեջ ամենահինը և ամենահարազատը հետևյալն է եղել։

«Ատենաքաանութիւն սուրբ և տիեզերական ժողովոյն, որ եղև ի շրջան րնթացից ժամանակի ՌԻՋ (1177) թուականի՝ հրամանաւ Գրիգորիսի յայտորդի առաքելական Աթոռոյ սրբոյ Գրիգորի, համաձայնութիւն Ներսեսի՝ մուսատ նոցին պաշտամակցի»⁷։ Որտեղից են առաջացել Լամբրոնացու Ատենաքաանության վերնագրի այդ տարբերությունները և ինչու՝ չկա միատեսակություն ոչ տպագրվածների և ոչ էլ ձեռագրերի մեջ։ Ամենայն հավանականությամբ, Լամբրոնացու կազմած նախնական օրինակը (1183 թ.) խմբագրողը, նկատելով, որ հին թնագրի մեջ ժողովի վայրը չի նշված, Լամբրոնացին էլ Տարսոնի եպիսկոպոսն է եղել սուանց ուշադրություն դարձնելու ժողովի ժամանակի վրա, ենթադրել է, որ այդ ժողովը կայացել է Տարսոնում և ժամանակի իշխանուպետն էլ եղել է «քրիստոսապսակ արքայն հայոց Լևոն»։ Ահա այստեղից էլ սկսվում է այն թուրիմացությունը, որ բանասերների մի քանիսի կարծիքով իբր թե Լամբրոնացին «Ատենաքաանութիւնը» կարդացել է Հռոմկայի ժողովում, իսկ մի քանիսն էլ րնդունում են, որ այդ գործը արտասահել է Տարսոնի ժողովում, առանց ուշադրություն դարձնելու նախնական օրինակի վերնագրի մեջ եղած ՌԻՋ թվականի վրա։ Չամյանի և Ալիշանի կարծիքների հիմքը և սկզբնաղբյուրը առնման հավանականությամբ եղել է նախնական օրինակի վերնագիրը, որտեղ ոչ Տարսոն անունը կա և ոչ էլ Հռոմկայ, թայլ կա ՌԻՋ (1177) թվականը։ Հայտնի է, որ 1177 թվականին ոչ Հռոմկայում և ոչ էլ Տարսոնում ոչ մի կրոնական ժողով չի գումարվել։ Հռոմկայի նշանավոր ժողովը կայացել է 1178 թվականին, իսկ Տարսոնինը՝ 1187-ին։ Չամյանը ըստ երևույթին կարևորություն չի տվել այդ երկու տարվա տարբերությանը (1177 և 1178) և պատշաճ է համարել՝ Լամբրոնացու ճառը դնել 1179 թվա-

կանի Հռոմկայի ժողովում, որին հետևել է և Ալիշանը։

Հռոմկայի ժողովի թղթերից մեզ շատ քիչ բան է հասել։ Գրիգոր Տղայի հետ Լամբրոնացին էր այդ ժողովը ղեկավարողը, որը միության խնդիրներին վերաբերող թղթերն ինքն է հավաքել, դասավորել, պատմական ծանոթություններ ավելագրել և խմբագրել։ Եթե Լամբրոնացին այդ ժողովում խոսած լիներ «Ատենաքաանութիւնը», չէր կառույ պատահել, որ նա այդ մասին ոչ մի հիշատակություն չաներ և իր ճառն էլ չլցեր ժողովի մյուս փաստաթղթերին։ Այդ ժողովից, ցանոք, միայն երկու թուղթ է մեզ հասել, որոնք ինքը՝ Լամբրոնացին է պատրաստել՝ Բյուզանդական կայսեր և Սինոդոսին ուղարկելու համար⁸։ Սի հանգամանք էլ կա, լատինի որ Հռոմկայի ժողովը գումարվել էլ միության խնդիրներին լուծում տա ու նպատակով, իսկ Լամբրոնացու «Ատենաքաանութիւնը» էլ անթողջությամբ առած՝ միության ու մարդասիրություն է քարոզում, ուստի հարմար է համարվել՝ դնել այդ ժողովում։ Այդ թուղթից բացի, Չամյանի և Ալիշանի համար, ինչպես երևում է, հիմք են ծառայել նաև կաթոլիկ եկեղեցու հայրերի պատմագրական հայտնողությունները։ Ինչպես Ներսես Շնորհալու ժամանակ 1178 թվականին Հռոմկայի ժողովի նյութերն ու արձանագրությունները, այդպես էլ Գրիգոր Տղայի օրով՝ 1179 թվականի նույն Հռոմկայի ժողովի գործերը, Կղեմես Գալանոսը, 17-րդ դարում Հռոմում հրատարակեց՝ աղավաղումներով։ Բայց և այնպես մեծ պատմագիրն ու մեծ բանասերը օգտագործել են կալանոսի նշած փաստերը։

Այժմ տեսնենք, թե որոնք են Գ. Ջարր հանայանի, Ա. Չամիչյանի և մյուսների կարծիքների հիմքերը։ Այս տեսակետից ուշագրավ են ժե—ԺԸ դարերի որոշ ձեռագրերում եղած Ատենաքաանության խմբագրված վերնագրերը, որտեղ ավելագրված են «Տարսոն» և «Լևոն Բ» անունները։ Եվ քանի որ այդ դարերի բազմաթիվ ձեռագրեր Ատենաքաանության վերնագիրն այս ձևով կն հաղորդում⁹, ուստի զարմանալի չէ, որ վերելում հիշված հայագետները Լամբրոնացու այդ ճառը դնեն Տարսոնի ժողովում։

Սակայն Ատենաքաանության տպագիր ու ձեռագիր տարբեր օրինակների խմբագրված և չխմբագրված առանձին վերնագիրների համեմատությունը, նոր ուսումնասիրու-

⁷ Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 181—200։

⁸ Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 1931, 1427, 2588, 4000, 4198, 5807, 6394, 6385 և այլն։

⁷ Ձեռ. № 2588, էջ 1։

⁸ Զ. Ն. Ալիեյան, «Ներսես Լամբրոնացի», Վիեննա, 1956, էջ 188։

թյունները, ստիպում են մտածել՝ թե արդյո՞ք Լամբրոնացիներ իր ճառն արտասանել է Տալսոնի ժողովում: Ուրիշ փաստեր էլ կան, որոնք այդ կասկածն ավելի են խորացնում: Առաջին՝ Ատենաքանության մականական և խմբագրված վերնագրերում կա հայոց ՈՒԶ թվականը, որը գույց է տալիս 1177 տարեթիվը: Բայց այդ թվականին Տարսոնը տակավին հայերի ձեռքը չէր, այլ պատկանում էր հույներին: Հայոց կաթողիկոսարանը գտնվում էր Հռոմկլայում, ինչպե՞ս հայերն այնտեղ կարող էին հրավիրել համագայից, այդպիսի մի մեծ ժողով: Երկրորդ՝ խմբագրված վերնագրերում եղած «քրիստոնապալական արքային հայոց Լևոնի» հաղորդումը նույնպես ճիշտ չէ, ժամանակավրիպություն է: 1177 թվականին Լևոնը ոչ միայն «քրիստոնապալական արքա» չէր, այլև դեռ Ռուբինյանց իշխանության գլուխ էլ չէր անցել, այդ ժամանակ Կիլիկիայի իշխանապետն էր Ռուբեն Բ-ն (Լևոնը թագադրվեց քսանմեկ տարի հետո՝ 1188 թվականի հունվարի 8-ին): Եթե Ատենաքանության մականական և խմբագրված վերնագրերում հիմք ընդունենք՝ կատարվի այսպես. վերնագրերում ցույց տրված ՈՒԶ (1177) թվականին ոչ Հռոմկլայում է ժողով եղել և ոչ էլ Տարսոնում:

Մաղաքիա արք. Օրմանյանն այն կարծիքին է, որ Լամբրոնացի Ատենաքանությունը արտասանել է ոչ Հռոմկլայի և ոչ էլ Տարսոնի ժողովներում, այլ դա ինքնուրույն գրական մի գործ է¹¹: Մ. Օրմանյանի կողմից արծարծված այս նոր տեսակետը ավելի հիմնավոր ու համոզիչ է, և ահա թե ինչու:

«Ատենաքանության» մեջ և Հռոմկլայի ու Տարսոնի ժողովներում շոշափված հարցերը տարբեր և անհարկ են: Հռոմկլայի՝ 1179 թվականի ժողովում հույներն իրենց կողմից առաջադրված «գլխակարգելու» 8 խնդիրները անփոփել, դարձրել էին միայն մի հիմնական կետ. այն է՝ ընդունել երկու բնությունը քանաձևը: Մինչդեռ Լամբրոնացի Ատենաքանության մեջ խոսում է դավանանքից ու ազգությունից անկախ սիրո, եղբայրության, խաղաղության մասին և խիստ քննադատության է ենթարկում քաղկեդոնականներին: Լամբրոնացիներն խոսում է տուների տարբերության, խմորում և անխմոր հացի, ջրախառն բաժակի, մեռուի և մյուս ծիսական արարողությունների մասին, որոնց վերաբերյալ Հռոմկլայի ժողովում խոսք անգամ չի եղել:

Տեսնենք Տարսոնի ժողովը: Այստեղ պարզ ու որոշակի ձևով Հռոմի կողմից պահանջ-

վում էր՝ ընդունել լատին եկեղեցու գլխավորությունը, մինչդեռ «Ատենաքանության» հեղինակը քարոզում է եկեղեցիների ու ազգերի մեջ համահավասար իրավունքներով միություն ու եղբայրություն: Հռոմը պահանջում էր տեղումնական և սրբերի տոները կատարել հաստատուն ամսաթվերով, այնինչ Լամբրոնացիներ գործի մեջ տուների հաստատուն ժամանակին կարևորություն չի տալիս և համաձայն է դրանց շարժական սկզբունքին: Տարսոնի ժողովում Հռոմը պահանջում էր «Հոգույն Սրբոյ և յՈրդու բոլորման», վարդապետությունը, իսկ Լամբրոնացի Ատենաքանության մեջ կրքոտ ու խիստ քննադատում է երկրնակությունը: Տարսոնի ժողովը գումարվել էր Հռոմի առաջարկությամբ՝ դավանաբանական, կրոնական որոշ հարցերի շուրջ քանակներ համար, ինչպե՞ս կարող էր պատահել, որ ժողովի ատենախոս Լամբրոնացի քննվող հարցերից և ոչ մեկի վրա կանգ չառներ, իսկ մի քանի հարցերում էլ միայն հակադրվեր: Վերջապես, Ատենաքանության քովանդակությունից չի երևում ոչ ժողովի ժամանակը, ոչ այդ ժամանակի հուզող հարցերը և ոչ էլ ժողովի հանգամանքները: Ինչպե՞ս կարող էր ներսես Լամբրոնացի սյդ ամենի կողքով յուրյամբ ու անտարբերությամբ անցնել: Ինչպես տեսնում ենք, վերելում բերված քաղաքի վաստերի հետ միասին, Լամբրոնացու Ատենաքանության քովանդակությունը նույնպես հաստատուն է Մ. Օրմանյանի կարծիքը, որ այդ հուշակավոր գործը գրվել է ոչ Հռոմկլայի, և ոչ էլ Տարսոնի ժողովների համար և ոչ էլ արտասանվել այդ ժողովներից որևէ մեկում:

Ներսես Լամբրոնացու «Ատենաքանությունը» «ամենայն հավանականությամբ, ինքնուրույն, գրական մի աշխատություն է, ինչպես նրա մյուս արձակ ու չափածո երկասիրություններից շատերը: Քննենք այս նշանավոր գործի էությունը և այնտեղ արծարծված հիմնական խնդիրները: «Ատենաքանության» մեջ հեղինակն արտահայտել է Կիլիկյան Հայաստանի ժամանակն հուզող ոչ միայն կրոնական, ազգային, այլև սոցիալախն, միջազգային բնույթի խնդիրներ՝ մարդասիրական գաղափարներով հագեցված: Այստեղ, ամենից առաջ, այքի է ընկնում Լամբրոնացու համարձակ, անաչառ քննադատական վերաբերմունքը՝ կյանքում գոյություն ունեցող անհատական, ազգային, միջազգային, կրոնական և աշխարհիկ բնույթի բացասական երևույթների նկատմամբ: Եթե Հովհան ՕՃՃեցու և Ներսես Շնորհալու Ատենաքանությունների մեջ ժամանակի հետ կապված արատները, հոգևորականների ու եկեղեցական կյանքում

¹¹ Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլս, 1812, էջ 1538—1539:

տեղ գտած անկարգությունները, ազաճութունը, աղանդավորությունն ու կարգազանցությունները խիստ, բայց ստոնասիրտ քյւննադատության են ենթարկվում, խարազանվում զուտպ, առանց չափի զգացումը խստիւտելու, ապա Լամբրոնացու քննադատության եղանակը բոլորովին այլ ձևով ու թափով է դրսևորվել: Որքան մեծատաղանդ է Լամբրոնացին որպես ճարտասան, պերճաբան, նույնքան էլ կրքոտ ու բուռն է նրա խոսքը: Վերջինիս համար չափը ոգևորության թափն է, իսկ չափանիշը՝ ճշմարտությունը: Նա ինքն էլ զգում է, որ քննադատության հուզումնային պահերին կարող է դուրս գալ չափի զգացումի, և նույնիսկ արենքի սահմաններից, որպիսի զանցանքը կարող է շատերին դուր չգալ և դժգոհությունների տեղիք տալ: «Այն թերևս ոչ ընդարձակութեամբ ապացույցիս քամքսն է զմեզ՝ արտաքոյ արշաւել խորհրդոյս զօրութեան»¹²: Սակայն, նա որքան կրքոտ է, ամենքն էլ համարձակ է ու անվախ և բնավ էլ կարեկորություն չի տալիս իրեն ճիշտ չհասկացող, նեղմիտ մարդկանց կարծիքներին, քանի որ ինքը իրեն համարում է ճշմարտության առաքյալ: «Ինձ ոչ բնաւ այս կարծիք, որ հստակեալս եմ ճշմարտութեանն»¹³:

Միայն այսքանով չի սահմանափակվում Լամբրոնացին. նա կամենում է, որ ամեն մի մարդ ինի չիտակ ու ազնիվ և դառնա ճշմարտության զինվոր, ճշմարտության քարոզիչ: Նա հորդորում է բոլորին, թե «խօսեցաք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում և դատաստան արդարութեան, խաղաղութեան դատեցէք ի դրունս ձեր»¹⁴: Ըստ Լամբրոնացու, պետք է համարձակ լինել քննադատելու և վեր հանելու նույնիսկ օրենքներում եղած թերությունները, եթե դրանք իրենց էությանը օգտակար չեն ներկայի համար, ճիշտ չեն ներկայացնում ապագա լավ կյանքի ուրվագիծը և կտրված են անցյալից. «զստուեր հանդերձելոց քարեացս նկարագրեցին սրէնքն»¹⁵, իսկ եթե որոշ մարդիկ, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար չեն ուզում համարձակորեն քննադատել ժամանակի օրենքների պակասավոր կողմերը, այդպիսի մարդիկ ճշմարտության, հետևաբար և մարդկության համար քարեկամներ չեն: Չկա մարդու համար ավելի անպատվաբեր մի բան, քան ճշմարտության դիրքերից երկչոտությամբ

նահանջելը: Ուստի, դիմելով հասարակությանը, նա հավաստիացնում է նրանց, որ ինքը բնավ այդ երկչոտներին չի մեղավելու և ամեն ինչ ասելու է շիտակ, անաքող և անվախ. «Եւ ընդէ՛ր է ինձ պատրուակաւ զընթացս բանիս ի յառաջ ձգել. և ոչ մաքուր հաւատոյ ձեր առաջի գտոյն մերկացուցանել»¹⁶: Ընթերցողին այսպես հախալատորաստելուց հետո, պատկերավոր, բայց խիստ ոճով քննադատության է ենթարկում երկքնակներին, զանազան ժամանակներում երևան եկած քրիստոնեական կրոնի սղանդավորներին, հերձվածողներին, կարճ՝ բայց բնորոշ որակումներով ու բացատրական մակդիրներով: Քրիստոնեական իսկական վարդապետության և ճշմարտության լուսավոր ճանապարհներից խոտորված այն մարդիկ, մանավանդ դրանց կույր առաջնորդները, — զայրացած բացականչում է Լամբրոնացին, — աղետալի հետևանքների պատճառ դարձան աշխարհի շատ ժողովուրդների համար «ով ալետիցս ի տանէն զչարսն քոսուցանէր և զվերակացուս խորանհիւ քակտիչս և քայքայիչս առարկէր... և զհովիւսն հօտիցն օծտողս զինէր: զՄակեդոն հոգոյն պարզեաց թընամի յարուցանէր և զաստուածութեան նորին զմխտելն խրատէր: զԵւտիքէս զխաւար խաւարաւ բժշկել վարդապետէր և զներատրոյթիւնն ունայն ցուցանել յորդորէր»¹⁷:

Այնուհետև քննադատում է այն հոգևորականներին, որոնք իրենց փափուկ, անձնական կյանքի ու փառքի համար աղավաղում են Քրիստոսի մարդասիրական վարդապետությունը՝ չարաշահելով իրենց կոչումը: Եթե Հովհան Օձնեցու և Ներսես Շնորհալու Ատենաքանությունների մեջ սուր քննադատական խոսքեր են ասվել և մերկացվել են միայն ազգային եկեղեցականները, ապա Լամբրոնացու մոտ դատապարտվել են քրիստոնյա տարբեր ազգերի պատկանող բոլոր այն հոգևոր հայրերը, որոնք ուղղամտությունից, ճշմարտությունից և մարդասիրությունից հեռու գտնվելու պատճառով մեծ վնասներ են հասցրել տարբեր ազգերի ժողովուրդներին՝ նրանց մեջ թշնամություն սերմանելով: Ապա այդ անարժան, հոգևորականներին հակադրում է անցյալի անձնուրաց, սակավապետ և ուղղամիտ հոգևոր հայրերին, որոնք արհամարհելով անձնական շահն ու փառքը՝ անդուր քարոզում էին ճշմարտասիրության և մարդասիրության գաղափարներ: Մեր երանելի հայրերը, — արիստանքով բացակայում է Լամբրոնացին, — ժողովուրդին առաջնորդում էին դեպի

¹² «Ատենաքանութիւն սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ, Վեհեփիկ, 1812, էջ 10: (Այս գրքի մի էջը հայերեն է, մյուսը՝ լատիներեն):

¹³ Անդ, էջ 10:

¹⁴ Անդ, էջ 8:

¹⁵ Անդ, էջ 10:

¹⁶ Անդ, էջ 12:

¹⁷ Անդ, էջ 32:

բարեկամությունն ու խաղաղությունն: Նրանք նոր ուխտից վերցրին սիրով յի բաժակը, մեզ արբեցրին այդ սիրով՝ աշխարհի մարդկանց և ճշմարտությունը սիրելու համար: Հիսուս առաջ եմ եկել մեծ մասամբ կեղծ վարդապետներ: Առաջ աղոթքը, հոգևոր երգը մինչև սերունդների ու արարչի աթոռներն էին հասնում՝ անմեղ մարդկանց մաքուր շքություններով: Այժմ ոչ այդ աղոթքն է անկեղծ և ոչ էլ երգը, քանի որ դրանք գտնվում են տգետ, եսամոլ հոգևորականների քերականում¹⁸: Այդպիսի հոգևոր հովիվները ոչ միայն հոգով չեն կարող կերակրել ժողովրդին, այլ մարդկանց մեռցնում են նաև մարմնական սովից: Իր ասածները հաստատելու համար Լամբրոնացին ընթերցողին դիմում է այսպես. «Մի կարծե՛ք վայրապար գասացեալս, այլ հայեցարուք լռեթացս մեր հոգեւոր՝ ըստ նոցա մարմնոցն յարացոցի... Աղօթք և նորայն բանական պտուղ մեր էր. գոր այժմ տեսանքք ի ձեռս անիմաստիցն: Արդարութիւն՝ եկեղեցւոյ քրիստոնէից էր հազ, որով նոքա լցեալ են և մեք սովամահ մեռանցիմք»¹⁹:

Լամբրոնացին «Աւետեաքանության» մեջ միայն սոսկ քննադատի դերով չի սահմանափակվում: Նա մերկացնելով իր ժամանակի հոգևոր և աշխարհիկ կյանքում գոյություն ունեցող արատներն ու անտեղծ, միաժամանակ հուսադրում, քաջալերում և ցույց է տալիս մարդկանց, թե ինչպես կարելի է դուրս գալ այդ վատ, անառողջ վիճակից և ինչպես ազատվել արատներից: Որքան խորն է խայթում նրա խուռքը, նույնքան էլ նա լավատես է և հուսադրող: Նա համոզված է, որ ազգերի միջև թշնամություն և սերմանող տգետ, ամբարտապան հոգևորականները հոգու ճամփեքով երկար չեն կարող զնայ: Նրանց մարմինը ցեցի պես կերել, սպառել է նրանց հոգին. իսկ ո՞վ կարող է լինել հոգեվորական առանց հոգու: Այդ մարդիկ շուտով դուրս կշարտվեն աշխարհի լուսավոր ճանապարհից, որպես հոգով սպառվածներ և մոլորվածներ: Կզան արժանավոր հոգևոր նոր հիվիվներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելու Ավետարանի «դճեյ զսնճն իւրեանց ի վերայ քանատր ոչխարաց» պատգամը: Այս կապակցությամբ, աստեղաբանը մասնավորելով իր խոսքը, Հայաստանի մասին ասում է. եթե մեր երկրի վրա տարբեր ժամանակներում հարձակվող բրդնակայներին ու բարբարոսներից անգամ չը հաջողվեց ստատանել կամ պղծել մեր հայրերի սրբազան պատգամներն ու հավատը, չկարողացան խտտորել մեր երթը հոգու լու-

սավոր ճանապարհներից, ապա ի՞նչ կարող են անել մեր ազգին մի քանի հոգեգործի հոգեվորականներ, որոնց վատը կամ մյուս օրը մեղ ժողովրդի ամենակարող ձեռքը դեն կըշարտի և ազգի միջից արմատախի կանի նրանց ախտածետ հոգին: Ախուհանդերձ Լամբրոնացին՝ հորդորում է մարդկանց, որ պետք է հաստատապես հավատալ ճշմարտության հաղթանակին, քայց միաժամանակ պետք է զգոն լինել, երբեք չմոռանալ, որ հավատի և հոգու թե ներքին և թե արտաքին թշնամիները էլի կարող են երևալ՝ մարդկանց մոլորեցնելու և նրանց մեջ թշնամություն և սերմանելու նպատակով: Այդ պատակտիչները հավասարապես վտանգավոր են հոգու, մարմնի, ազգի, հավատի և մարդս սիրության համար: Աշխարհի պատմությունից հայտնի է, — ընդհանրացնում է Լամբրոնացին, որ դարանամուտ այդպիսի քանսարկուներն են եղել ազգերի մեջ թշնամություն և սերմանողները և խաղաղության պահակտիչները, որոնք շատ անգամ են մի ազգը դուրս բերել մյուսի դեմ: «Միութիւն ազգաց քրիստոնէից և խաղաղութիւնց, որ առ իրեարս տապալեցաւ ի թշնամեացն արուեստից... ուստի և քակտեցաւ յառ միմեանս մարտէն՝ տնջելոյթ թշնամոյն ներգործութեամբ... միոյ տաճարին քարինք ի զանգամ ազգաց՝ առ իւրաքանչիւր յօդ անտաշ դարձան և զփառս տանն կործանեցին»²⁰:

Իր մտքերը համոզիչ դարձնելու և ամուսպնդելու նպատակով, Լամբրոնացին դարձյալ դիմում է ս. Գրքին, բերում է հին Խորանի կյանքից պատմական օրինակներ, թե ուր կարող է հասցնել ժողովուրդներից ազգերի մեջ եղած անմիաբանությունն ու թշնամանքը: «Մաքեցան ի սրոյ բարկութեանն և ի սովոյ տգիտութեան, և առ զետս քաքն լացոց սովեալ նստեաք, արդարս ի լաչ և ի յողթս նոցա՝ որք զհայրենից աշխարհի պայծառութիւն գմտաւ անէին»²¹: Իսկ մորթապաշտ, եսամոլ և մարդկային սիրուց գուրկ տգետների համար, միևնույն է, թե նրանք եգիպտական կամ քաքեյոնական գերության մեջ են, միայն թե կուտ լինեն, և ապրեն՝ թեկուզ անասնական կյանքով: Այս օրինակով Լամբրոնացին ազգերի մեջ միություն և եղբայրություն քարոզելու հետ մեկտեղ ներշնչում է նաև հայրենասիրական տրամադրություններ: Ամարգանքի խոսքեր է ասում նաև այնպիսի մարդկանց հասցեին, որոնք որպես մաքսավորներ ու փարիսեցիներ, խոսքով աստվածասեր և մարդասեր են իրենց ցույց տալիս, սակայն, իսկապես և աստվածատյաց են և մարդատյաց: Անդողոր

¹⁸ Աճ, էջ 94:¹⁹ Աճ, էջ 94—86:²⁰ Աճ, էջ 86:²¹ Աճ, էջ 98:

քննադատում է այն մեծամիտ մարդկանց, որոնք մյուս ազգերի վարք ու բարքը համարում են պիղծ, անմաքուր, անարգում են ուրիշների կյանքը, հայտարարելով, որ միայն իրենց ազգային հավատն է ճշմարիտ, ողորդակ, իսկ վարք ու բարքով էլ՝ իրենք ամենակատարյալն են աշխարհում։ Այստեղ ամենայն հավանականությամբ Լամբրոնացին նկատի ունի հույներին, հռոմեացիներին և խաչակիրներին։ Նա գտնում է, որ ազգերի մեջ խտրություն, մեծամտություն ու թշնամանք առաջացնող պատճառները որոշ չափով նաև դավանաբանական և ծիսական տարբերություններն են եղել։ Ապա՝ դավանաբանական ժողովների մեծ մասը փոխանակ եղբայրության ու միության, պառակտում ու զժտություն են տվել ազգերին։ Երկար դարեր այդ ժողովներում քննվել և դեռ քննվում է մի խնդիր՝ ընդունել Քրիստոսի մեջ մեկ, թե՞ երկու բնության սկզբունքը։ Այդ կապակցությամբ մեջ բերվում, քննադատվում են լե՞ միաբանակների և թե՞ երկաբանակների տեսակետները։ Լամբրոնացին խիստ ոճով մերկացնում է առանձնապես երկու բնության կողմնակիցներին, որոնք մի կողմից խեղաթյուրում են Փրկչի մարդկության խորհուրդները և մյուս կողմից՝ դավանանքի պատրվակի տակ ձգտում են իշխել փոքր ազգերի վրա և՛ կրոնով, և՛ անտական իրավունքներով։ Ուստի, եզրակացնում է ատենախոսը, դավանաբանական վեճերը և հակառակասեր հոգի ունեցող որոշ հոգևորականներ հանդիսացան այն պղտոր աղբյուրը, որտեղից մոլորված մարդիկ դարեր շարունակ խմեցին այդ անմաքուր, ապականված ջուրը և հարբեցին ամբարտաւանության, ազգային սնափառության, այլուտեցության վարակիչ ախտերով։ Դավանանքից հետո Լամբրոնացին առաջ է քաշում ու քննադատում ծիսական հարցերը։ Վերլուծելով սրանց մեջ էլ եղած տարբերությունների պատճառով առաջացած ուզգամիչյան անախորժությունները, հարցնում է քրիստոնյա տարբեր ազգերի հոգևորականներին, թե չէ՞ որ բոլոր տոներն ու ծեսերը առաջացել են հավատից ու սիրուց, ապա ինչո՞ւ եք դուք հակառակ ձևով վար-


վում։ Մի՞թե դուք, դավանական ու ծիսական վեճեր բորբոքող հայրերդ, չե՞ք նկատում, որ դրանով խախտում եք նախնայ ազգային, ալանդական, սուրբ օրենքները և կեղծում։ Չկա հոգևորականի համար ավելի ծանր հանցանք, քան կեղծավորությունը։ Լամբրոնացու կարծիքով հոգևորականը, որ ազգին ու դավանանքին էլ նա պատկանի, պարտավոր է լինել պարզ, անկեղծ և ճշմարտախոս։ Նա պիտի տեսնի նաև իր ազգի թերությունները, միշտ հանդես գա լուրեպաշտ ուսուցչի, ուղղողի և խրատողի դերում։ Այս կարգի ընդհանուր դիտողություններից հետո, Լամբրոնացին իր խոսքը որոշակի ուղղում է հայ, հույն և լատին այն եկեղեցականներին, որոնք ազգային նեղ, պահպանողական հայացքները, ավանդամուլական ձևապաշտությունները ավելի քարձրո են դասում, քան մարդասիրությունն ու ճշմարտությունը, որի պատճառով շատ ազգեր խիստ տուժում են ոչ միայն հոգեպես, այլև մարմնով։ «Էս գի՞ն» էր լանցանքն այս քան սաստիկ պատուհասիս արժանի։ Յաւտ է անայառ մտայ իմաստնոց, գի ոչ էր մեղք ըստ մարմնոյ որ ներելի էր տկարութեամբ, այլ ըստ հոգոյ՝ տկարանալ առնուլ ապաշտանց ժամանակ, զոր սակասօք թուել ոչ է անպատշաճ։ Այսինքն՝ գի դարձաք միմեանց թշնամիք... ատեցաք զիրեսարս»²²։

Այս թշնամական ծանր դրությունից ազգերն ու նրանց եկեղեցիները կարող են դուրս գալ, կարող են խաղաղ անքնի միայն այն դեպքում, եթե եկեղեցու և կրոնի սպասավորները առողջ աչքերով նայեն իրավունությանը, բժշկվեն այլատեցության, այլուքննադատության ախտերից, տեսնեն նաև իրենց արատներն ու բացերը, չվարագործեն ճշմարտությունը, և երբեք չկեղծեն։ «Մի՛ սնայառ վարդապետութիւնն այլևս լիցի աշառանօք մարդկան պատրուակեալ։ Մի՛ այլ լոյսն ընդ գրութանս լիցի թաքուցեալ, մի՛ կարծեսցի տկար գաստուածն գօրութեանց կատարիչ խորհրդոյս»²³։

²² Աճղ, էջ 16։

²³ Աճղ, էջ 88։

(Շարունակիլ)



ՀԱՆԳԻՍ

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ Վ. ՈՍԿԱՆԻ

1 հունիսի 1895 — 25 փետրվարի 1968



Վիեննայից ստացված մահագրից խոր վշտով տեղեկացանք Վիեննայի Մխիթարյան միաբանության երևելի անդամ և հայ բանասիրության մեծանուն փաստալավոր դոկտ. Հ. Համազասպ Վ. Ոսկյանի մահվան գույժը։ Այս օրերին, երբ պատրաստվում

էինք սույն էջերը տրամադրել նրա կողմից վերջին տարիների ընթացքում հայագիտությանը մատուցված ծառայություններից, ցավոք սրտի այժմ ստիպված ենք արձանագրելու միայն նրա անդարմանելի կորստյան և մեր մշակույթի և փրկյալների շարքում իր թողած մեծ քաջի մասին։

Հ. Հ. Ոսկյանի մահը տեղի է ունեցել փետրվարի 25-ին երկամսյա ծանր հիվանդությունից հետո, իսկ հուղարկավորությունը՝ ամսի 28-ին Վիեննայի Կենտրոնական գերեզմանատանը։

Հ. Համազասպ Վ. Ոսկյանը ծնվել է 1895 թ. հունիսի 1-ին հայրենի Խոտորջուրի խանդածոր թաղում։ Նա հազիվ 12 տարեկան պատանի էր, երբ 1907 թ. գնաց սովորելու Վիեննայի Մխիթարյանների մոտ, ուր և 1919 թ. դարձավ նորընծա, 1914 թ. ուխտյալ և ի վերջո 1919 թ. ձեռնադրվեց քահանա։ Ոսկյանը իր աշակերտական շրջանում թրրովել է Մխիթարյան միաբանության մեծանուն երախտավորների՝ Հ. Հակոբոս Տաշյանի և Հ. Ներսես Ալկինյանի շնչով և իր բնածին ընդունակություններով և արտակարգ աշխատասիրությամբ դարձել նրանց ավանդույթների ժառանգորդը և ապա նրանց գործի արժանավոր շարունակողը։ Հ. Հ. Ոսկյանը Վիեննայի համալսարանն ավարտելուց հետո 1922 թ. արժանացել է աստվածաբանության դոկտորի գիտական աստիճանին։

Ինչպես Վիեննայում, այնպես էլ Միաբանության սփյուռքահայ դպրոցներում Հ. Հ. Ոսկյանը ամենայն ձեռնհասությամբ ստանձնել է մի շարք փարչական և մանկավարժական պաշտոններ։ Մինչև 1928 թ. նա կղե-

րանոցի փոխ-վերակազմում էր: 1928—1931 թթ. պաշտոնավարել է Բուլղարիայի հայա-շատ Պլովդիվ քաղաքում իբրև Մխիթարյան վարժարանի ուսուցիչ, իսկ 1931—1937 թթ.՝ նույն վարժարանի տնօրեն: 1937 թ. ընտլը-վել է Ընդհ. վարչության անդամ և գործա-կալ Վիեննայում: Ապա անցնելով Տրիեստ, շուրջ մեկ և կես տարի զբաղվել է տեղվույն Մխիթարյան վանատան և եկեղեցու վեր-ստացման և նորոգության հարցերով: 1947—1960 թթ. շարունակելով իր մանկավարժա-կան քեղմնավոր գործունեությունը՝ Հ. Հ. Ոսկյանը հետևություն իբրև մեծավոր և տնօ-րեն Մխիթարյան վարժարանի՝ հայեցի ու-սում է ջամբել հազարավոր հայորդիների: Դեռ ավելին. տեսնելով սփյուռքում մայրենի լեզվով զրկված դասագրքերի պակասը. հա-կառակ իր բազմազբաղ վիճակին Հ. Հ. Ոսկ-յանը հեղինակել է հինգ. հատորանոց «Ծո-ղակաթ» հայերեն դրոշերգարանը և դարձյալ հինգ հատորանոց Հայոց պատմության դա-սագրքերը, որոնք ունեցել են մի քանի հրա-տարակոթուններ և նրանցով դաստիարակ-վել բազմաթիվ հայ մանուկների սերունդ-ներ: Դարձյալ այս ժամանակաշրջանում է, որ Հ. Հ. Ոսկյանը իր հեղինակած բազմաթիվ մանկա-պատանեկական գրքերով հարըս-տացրել է սփյուռքահայ գրականությունը և իր կարևոր նպաստի բաժինը բերել նոր սե-րընդին հայրենասիրության, բարոյախոսու-թյան, առողջապահության, կարգապահու-թյան և այլ հարակից խնդիրներին հաղոր-դակից դարձնելու և նրանց դաստիարակելու գործում:

Ակսած դեռևս 1920-ական թվականներին, ելք ինք դեռ շատ երիտասարդ էր, և ապա Հ. Ն. Ակինյանի բազակալության շրջանում (1937 թ.) և ի վերջո 1960 թվականից մինչև իր վերջին շունչը Հ. Հ. Ոսկյանը շարունակել է սնվա հայագիտության մեջ նշանակալից դեր խաղալ «Հանդէս ամսօրեայ» պար-բերականի խմբագրապետն ու նրա մնայուն և հիմնական աշխատակիցը: Նա բազմաթիվ հոդվածներ է գրել նաև սփյուռքահայ մի շարք պարբերականների, այդ թվում «Ու-սումնարան», «Աւետիք», «Մասիս» և այլ թերթերին և հանդեսներին:

Հ. Համազասպ Ոսկյանը իր վերոհիշյալ բազմազան և բեղմնավոր գործունեությու-նից բացի շուրջ կես դար, այսինքն իր բո-վանդակ ստեղծագործական կյանքը, նվիրեց հայագիտության զարգացման ազնիվ գոր-ծին: Իր նշանավոր նախորդների՝ Տաշյանի ու Ակինյանի մահից հետո, Ոսկյանը իր ամ-բողջ էությունը շարունակեց անձնավորել Վիեննայի Մխիթարյան միաբանության շրջանակից ներս գարգացող հայագիտու-թյան գործը և իր արժանի տնայր գրավեց

նորագույն շրջանի հայ մշակույթի պատմու-թյան մեջ:

Հ. Հ. Ոսկյանը ժամանակակից հայ ձեռա-գրագիտության մեծագույն ներկայացուցիչ-ներից մեկն էր: Իր գիտական գործունեու-թյան սկզբնական օրերից մինչև իր կյանքի վերջին շրջանը նա բազմաթիվ նվիրվածու-թյամբ ձեռնամուխ է եղել դեռևս հայագի-տությանը անհայտ մնացած գրչագրերի հայտնաբերման, ուսումնասիրման և հրա-տարակման գործին: Ակսած Ավստրիայի տարբեր քաղաքներից մինչև Լ. Պոլսի ազ-գային և պետական հիմնարկությունները, Թեհրանից մինչև Չեխոսլովակիա և վերջա-պես Բուլղարիայից մինչև Լիբանան գրված մեր ձեռագիր գանձերը եթե ճանաչելի դար-ձան հայ բանագիտությանը, ապա այդ քուր-րը պարտական ենք Հ. Հ. Ոսկյանի բազմաթի-վ հանդիս և ժաջան պրպտությունին: Սա-կայն այս առարկեղում նրա աշխատանքնե-րի թագն ու պսակը հանդիսացավ նրա եր-կար տարիների տրեմալում գործունեության արգասիքը եղող «Ծուգակ հայերեն ձեռա-գրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա» խորագիրը կրող հոյակապ հա-տորը: Թեև հիշյալ հատորի առաջին ձեռա-գրի նկարագրությունը մասամբ կատարել էր իր մեծ ուսուցիչը և հայրենակիցը՝ Հ. Հ. Տաշյանը, այնուամենայնիվ վերջինս իր ա-ռողջության վատթարացման հետևանքով այդ գործի կատարումը կտակել էր իր աշա-կերտին: Եվ այսպես դեռևս 40 տարի առաջ իր ելիտարադասկան տարիներին Հ. Հ. Ոսկյանը Տաշյանական ոճով գրեթե մեծ մասամբ ախարել, իսկ իր վերջին տարի-ներին ամբողջացրել էր այն, սակայն հրա-տարակյական միջոցներից զուրկ լինելով միայն 1963 թ. շնորհիվ Կյուլպենկյան հիմ-նարկության հնարավոր եղավ հրատարակել այդ գործը: Ծուրջ 1160 մեծադիր էջեր բո-վանդակող այդ պատկանելի հատորում նա իրոք հմտությամբ և մեծ բարեխղճությամբ իրրև Տաշյան ձեռագրագրության անմիջական շարունակություն, իբրև Բ. հատոր, ստեղծեց իրը, որը գիտությանը արդեն հալոսի դար-ձավ Ոսկյան ձեռագրագրուակ անունով, և ուր գիտական նկարագրության ներթրվեց 574—1304 համարները կրող ձեռագրերը. այսինքն 730 ձեռագրեր: Բավական է նշել, որ ներկայումս Վիեննայի Մխիթարյան Մա-տենադարանը մեր ձեռագրական ամենամեծ գանձարանների թվում առաջինն է, որ հա-յագիտությանը ամենալոյն մանրամասնու-թյամբ ճանաչելի է դարձրել իր գրչագրական քովանդակ հարստության հետ և այդ շնոր-հիվ Հ. Հ. Ոսկյանի հիշյալ հոյակապ աշխա-տության:

Հ. Հ. Ոսկյանի կողմից կատարված ձեռա-

գրագիտական մաշեցնող աշխատանքները կարևոր նշանակություն ունեցան հետագայում հեղինակի կողմից պատմա-բանասիրական, մատենագրական և այլ բնույթի արժեքավոր ուսումնասիրություններ ստեղծելու գործում:

Նրա երկար տարիների աշխատանքի այդ-յունքը եղող հայագիտական երկասիրությունների գլուխ-գործոցը հանդիսացավ անկասկած հայ վանքերի պատմությանը նվիրած նրա տասը հատորանոց մեծարժեք աշխատությունը, որը ընդգրկում է շուրջ 300 էջ և միջնադարյան մեր մշակույթի յուրատու միջնադարյանի պատմությանը ընծայված ամենակատարյալ և լավագույն աշխատությունն է: Ուսումնասիրողը այդ հատորներում կգտնի Վասպուրականի—Վանի, Տարսնի—Տուրքմեռանի, Անաստիանի, Բարձր Հայքի, Արցախի, Կիլիկիայի, Գուգարքի, Խարբերդի, Տիարպեքի, Տրապիզոնի և այլ նահանգների ու գավառների հայկական վանքերի պատմության շարադրումը: Պետք է նշել, որ այդ վանքերից շատերի հետքը այժմ իսպառ ջնջվել է պատմության ասպարեզից, և նրանց երբեմնի շենքուղ կյանքի պատկերն ենք տեսնում մի պահ հառնա՞ դարավոր մոխիրների միջից՝ Հ. Հ. Ոսկյանի բեղմնավոր գրչին պատկանող հիշյալ հատորների էջերում:

Հ. Հ. Ոսկյանը իր ուսումնասիրությունների յնթադրում գիտական հետազոտման է ենթարկել մեր միջնադարյան բազմաթիվ մատենագիրների կյանքն ու ստեղծագործությունը և այս առթիվ կատարել է նաև մինչ այդ չլուծված մի շարք կարևոր հարցերի ճշգրտումներ: Նա ուսումնասիրություններ է ցվիրել Հովհաննես Վանականին և նրա դպրոցին, Մխիթար Գոշին, Վարդան Արեւիկյուն, Կիրակոս Գանձակեցուն, Մաղաքիա Աթեղային, Հակոբ Նարնեցուն, Մատթեոս Զուղայեցուն, Ստեփանոս Ռոշքային և այլոց:

Բազմավաստակ գիտնականը իր շնորհակալ աշխատանքն է մատուցել նաև հայ պատմագիտությանը, ուրվագծելով Գևորգյան, Ռշտունյան, Դիմաքսյան, Անձնագյան, Ամատունյան և այլ հայ մախարարական տների պատմությունը:

Հ. Հ. Ոսկյանը իր ավանդ է մուծել հայերեն բնագրերի հրատարակման և ուսումնասիրման գործում: Այդպիսիք են նրա «Երգերգացի առաջին և երկրորդ թարգմանությունը», «Մարդիկեի ժողովրդի հայերեն կանոնները», Ներսես Լամբրոնացու մի շարք ներքողների և ճառերի հրատարակումը, և այլն:

Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրման առաջնությունը ևս Հ. Հ. Ոսկյանը

կարևոր ծառայություններ է մատուցել: Այս առումով բացառիկ արժեք են ներկայացնում նրա կողմից կատարված բնագրային և ուսումնասիրություններն ու հրատարակությունները, որոնք վերաբերում են Լեհաստանի, Տրիեստի, Հունգարիայի և մասամբ Տրանսիլվանիայի հայկական գաղթավայրերի պատմությանը:

Հայ միջնադարյան գրականության ուսումնասիրման հարցերը ևս լուրս չեն մնացել անխուց գիտնականի տեսադաշտից: Բավական է հիշել նրա «Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» ամենավերջին աշխատության մասին, ուր նա բանասիրությանը մեծ մասամբ, առաջին անգամ յիներով, ճանաչելի է դարձրել Հովհաննես Կարնեցու, Գրիգոր Օջականցու, Մովսես ղպիր Կարնեցու և Մարտիրոս վ. Ղրիմեցու մի շարք ստեղծագործություններին:

Հակառակ իր առաջացած տարիքին և վատառողջ վիճակին պետք է սքանչացումով արձանագրել այն իրողությունը, որ Հ. Հ. Ոսկյանի ամենավերջին տարիները նրա հայագիտական գործունեության ամենաբեղմնավոր շրջանը հանդիսացան: Բժշկները նրան բազմիցս հանձնարարել էին որոշ ժամանակ հանգիստ մնալ: Սակայն ի՞նչպես կարող էր նրա նման ժրջան մշակը անգործության մատնվել: Այո՛, հաճախ էր, որ նա իր նամակներում զանգատվում էր սոստոյակակ իր վիճակից, սակայն նա վրձնել էր անդադրում ստեղծագործել իր սիրելի ժողովրդի մշակույթի հարստացման համար: Նա պայքարող մոմի նման հատնում էր շիթ առ շիթ, սակայն ոգի ի բռն շարունակում էր յուսավորել իր շուրջը...

Եվ այսպես ի գարմանս բոլորին 1963 թ. իր տիտանական աշխատանքի արդյունքը եղող իր վիթխարի ձեռագրացուցակի հրատարակումից քիչ հետո «հանգստացող» գիտնականը մեկը մյուսի հետևից լույս էր ընծայում Ստեփանոս Ռոշքայի «Ժամանակագրություն»-ը (1964), Հովհաննես Ղրիմեցու «Պատմություն հույակալոր վանից Հաղթատայ Ս. Նշանին» (1965), «Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» (1966), դոկտ. Ջ. Օքերտինսկու «Լեհահայերը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոս Էսզովիցի մեջ» գերմաներենից կատարած իր ընդարձակ թարգմանությունը, ծանոթագրություններով հանդերձ: Դեռ չենք նշում իր խմբագրապետությամբ լույս տեսնող «Հանդես ամսօրեայ» պարբերականում ստանձնած իր խմբագրական աշխատանքների և իր բերած բեղմնավոր աշխատակցության մասին: Դարձյալ իր ջանքերով էր, որ այս շրջանին նա խմբագրեց, առաջաբան գրեց ու հրատարակեց իր սիրելի ծննդավայրի՝

խոտորջորի հուշամատյանը, գրված երկու հանգուցյալ Մխիթարյանների՝ Հ. Հալոթյուն և Հույոնյանի և Հ. Մատթեոս և Հանյանի կողմից (1964), և որը երկար տարիներ շարունակում էր անտիպ մնալ:

Հ. Հ. Ոսկյանը ինչքան խստապահանջ էր իր հկատմամբ, նույնքան ավելի ներողամիտ և քաջայեղ էր ուրիշների աշխատանքի վերաբերյալ: Հավագույն ապացույցը այդ մասին հանդիսանում են իր կողմից «Հանդես ամսօրեայ»-ում տարիներ շարունակ հրատարակած շուրջ չորս տասնյակի հասնող այն գրախոսությունները, որոնք նվիրված են սփյուռքում և Մայր Հայրենիքում լույս տեսած հայագիտական գրքերին: Նա իր յուրաքանչյուր գրախոսության մեջ ի՞նչպիսի քերտ սիրտ ու զգացմունք և խոր հիմնություն է դրսևորել և գիտական նորանոր սխրանքների է կոչել հեղինակներին:

Հայ բանասիրության համար ի՞նչպիսի սքանչելի ծրագրեր դեռևս նա ուներ իրագործելի... Նրա ձեռագիր ու անավարտ գործերի մեջ է գտնվում «Կանոնագիրք Հայոց»-ի համեմատական քննադրմ ու լասիներեն թարգմանությունը, «Վիեննայի Մխիթարեաններու Տրիեստի մեջ հրատարակած հայերեն ու հայատառ թրքերեն գրքերը» մատենագիտական հոդվածաշարի շարունակությունը, «Հանդես ամսօրեայ»-ում ամցայում լույս տեսած ձեռագրագրականքի մի հատորը և այլն և այլն: Այս բոլորը անշուշտ լույս կտեսնեն «Հանդես ամսօրեայ»-ի էջերում և առանձին գրքերով Միաբանության իր սիրելի գրչակից եղբայրներ՝ ամսիջական հսկողությամբ:

1965 թ. էր, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսության պաշտոնաթերթը «Էջմիածին» հանդեսի խմբագրությունը դիմելով նրան ցանկացել էր, որպեսզի Հ. Հ. Ոսկյանը բերի իր աշխատակցությունը: Սակայն հակառակ իր բոլոր բաղձանքին նրա հետգհետե քայքայվող առողջությունը պատճառ եղավ, որ բազմաթիվ գիտնականը խորին ավստասանքով հրաժարվի իր ցանկությունից: Նա իր վերջին նամակներից մեկում մեծ ցավով գրում էր, որ «Մոսստագած էի «Էջմիածին» ամսագրին հոդված հասցնել գտնե մեկ երկու հատ, քայց կերևա պիտի չկարենամ, զի բժիշկները հանգիստ կը պալուստդեն»:

Հայրենասեր գիտնականը մինչև իր կոանքի վերջին օրերը սերտ կապի մեջ էր գտնվում Հայաստանի հայագիտական մի շարք հիմնարկությունների, այդ թվում. Մարտոգյան Մատենադարանի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի, և Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի և առանձին բազմաթիվ հայագետների հետ: Հ. Հ. Ոսկյանը թեև միշտ բազմաթիվ և հաճախ հի-

վանդ, ամենամեծ սզգնությունը միշտ պատասառ էր իր խորհուրդներով ոգնելու իրեն դիմող առհասարակ բոլորին: Նա իր ցուցաբերած օգնությամբ ոգևորում էր իրեն դիմողներին, իսկ ինքն էլ իր հելլոթին ոգևորվում և լիցքավորվում էր նրանց աշխատանքներով: Իր նամակներից մեկում Ոսկյանը նշելուց հետո իր թագմագրադ վիճակի մասին, կանգ էր առնում «Հանդես ամսօրեայ»-ում գրված ձեռագրագրականքը մի հատորում ամփոփելու իր աշխատանքներին և ապա ավելացնում. «Բաց գործը դանդաղ կրթթանայ, զի ուրիշ աշխատանքներ այ կան և նորեր միշտ սունկի պես երևան կուգան և արգելք կ'ըլլան այս կամ այն ձևով. մանաւանդ ստիպում են ստեպ բանասիրական հարցումներու եղած օտար երկիրներե պատասխանելու: Սակայն սիրով կ'ընեն, զի հայ գրի ու մշակութի համար է»:

Իր հիվանդության օրերին հայ մշակույթին օգտակար չլինելը մեծագույն վիշտն էր նրա համար: Իր շմեղավերջին նամակում, գրված իր վախճանից մի քանի օր առաջ, նշելով վիրահատության ենթարկվելու նպատակով հիվանդանոց տեղափոխվելու մասին, մեծ ցավ էր հայտնում, որ որոշ ժամանակ ինք գրվելու է իր սիրելի Հայրենիքի գիտական աշխատողներին օգտակար լինելու պատենությունից...: Սակայն ի՞նչ իմանար ականավոր հայագետը, որ իր կարծած այդ որոշ ժամանակը, հազիվ մի քանի օր անց ավա՞ղ ինչպիսի տխուր վախճան էր բերելու իր կյանքին և նա ընդմիշտ բաժանվելու էր իր բոլոր սիրելիներից...

Նրա ամենավերջին բաղձանքն էր որքան կարելի է շուտ այցելել Մայր Հայրենիք և մոտիկից հաղորդակից լինել նրա ծաղկմանը և հայագիտության զարգացմանը: Նա հավատացած էր որ հայրենի բնությունը իր խոնջած մարմնին նոր կյանք է պարգևելու: Հ. Հ. Ոսկյանը խոսելով իր օղավոխության զնայու մասին, դարձյալ գրում էր. «Հայաստանի արևն ու ցուրը թերևս ավելի պիտի նպաստեն, արկաւ օր մըն այ տեղի կ'ունենայ...» և դարձյալ նա հավատացած էր, որ ինք ևս պիտի կարողանա «օր մըն այ ազատ հայրենիքի օդը շնչել...»: Սակայն վրա հասնող անսպասելի մահը վերջ տվեց ամեն ինչի:

Ոչ ևս է ազգնավայն անճնավոյությունն ու անհունց գիտնականը: Հ. Հ. Ոսկյանի մահը ոչ միայն անխոխարհելի կորուստ է Վիեննայի Մխիթարյան միաբանության համար, այլ նաև հատկապես հայագիտության համար: Դադարեց քաթախերու հսկ բանասիրության հավատ սրիմ, զգայուն, բազմա-վաստակ և ժրագան գիտնականի սիրտը: Հողին հանձնելով նրա անընչացած մարմի-

ընդ կորցրինք հայագիտության ավագագույն սերնդի ամենավերջին երախտավորներից մեկին:

Հ. Հ. Ոսկյանի թողած գիտական հարուստ ժառանգությունը իբրև նույն հիշատակը անթառամ պահող հավերժական հուշարձան՝ մեծ հարգանքով կհիշվի և խորին երախտագիտությամբ կուսումնասիրվի մերկա և ապագա հայագետների սերունդների կողմից: Հավերժ հարգանք նրա այսչափ հիշատակին:

ՄԱՍՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*

Ա. Գ Ր Զ Ե Ր

- 1.—Յովհաննէս Վանական և իր դպրոցը, Վիեննա, 1822, Զ+122 էջ (Ազգային Մատենադարան ԴԳ):
- 2.—Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը. Ուսումնասիրություն և քննադիր, Վիեննա, 1824, 80 էջ (Ազգային Մատենադարան ԵԷ):
- 3.—Մատենադարանը քննություններ: 1. Յովհաննէս Սարկիսյան. 2. Ներսէս Լամբրոնցացու Ներքինացիի վերափոխումն Աստուածածնի. 3. Մխիթար Գոշ, Վիեննա, 1826, Զ+182 (Ազգային Մատենադարան ԵԺԲ):
- 4.—Եղիա Աստուածատուրեան—Մուշեղեան և իր գրական արտադրությունները, Վիեննա, 1827, 80 էջ (Ազգային Մատենադարան ԵԺԷ):
- 5.—Վասպուրականի-Վանի վանքերը. Ա. մաս. 1. Բզնունեաց ծովի կղզիներու անապատներն ու վանքերը: 2. Ռշտունեաց վանքերը: 3. Վան-Տոսպի վանքերը: Գնունեաց և Առքերանի վանքերը, Վիեննա, 1840, Ը+324 էջ (Ազգային Մատենադարան ԵՃԹ):
- 6.—Վասպուրականի-Վանի վանքերը, Բ. մաս. 6. Արճիշահովտի, Քաջբերունեաց և Արծկէի վանքերը: 6. Արտազի վանքը: 7. Նախճատանի վանքերը: 8. Մաղարդայ Նախավկայի վանքից կոնդակները: 9. Գողթնի վանքերը, Վիեննա, 1842,

* Սույն մատենագիտությունը կազմելու ժամանակ մկատի ենք ունենել Վիեննայի Մխիթարյան միաբանության «Ազգային Մատենադարան» մատենաշարում յուր տեսած Հ. Հ. Ոսկյանի առանձին գրքերը, ինչպես նաև «Հանդէս ամսօրեայ»-ում 1818 թվականից մինչև 1867 թվականի տարացված վերջից 7—8 Ուսմարում նրա կողմից հրատարակված բոլոր հոդվածները և ուսումնասիրությունները, ձեռագրացույցները, գրախոսությունները, մամուլայինները և թարգմանությունները: Մատենագիտությունը դասավորված է ժամանակագրական կարգով: 266 ճշգրիտ ոչ հայագիտական գործերը (դասագրքերն ու այլ քննության գրքերը) և սխիտագրայ մամուլում նրա կողմից ջանքոված ռոդվածները:

Ը+385—742 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԱ):

- 7.—Վասպուրականի-Վանի վանքերը, Կ. մաս. 10. Անճառեաց, Բողոքիցի և Երուսնդունիցի վանքերը: 11. Աղբակի վանքերը: 12. Մոկաց, Խիզանի և Ճատակի վանքերը: 13. Ազնաձոր-Բաղէի վանքերը: 14. Վասպուրական-Վանի վանքերու մասին ընդհանուր՝ զանազան տեղեկություններ, Վիեննա, 1847, ԺԵ+743—1130 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԵ):
- 8.—Արդիկէի ժողովքի հայերէն կանոնները, քննադիր և ուսումնասիրություն, Վիեննա, 1845, Ը+132 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԴ):
- 9.—Սերաստիայի վանքերը, Ա. մաս. Սերաստիա քաղաքի վանքերը, Վիեննա, 1846, ԺԱ+78 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԴ):
10. Կարին և Կարնեցի և Կարնոյ վանքերը (պատկերազարդ), երկու դասախոսություն: Հրատարակություն Կարնոյ հայերենական միության Լիբանանի վարչության, Վիեննա, 1850, 58 էջ:
- 11.—Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1851, ԺԲ+232 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԷ):
- 12.—Գնունեաց և Ռշտունեաց ճախարարությունները, Վիեննա, 1852, Ը+156 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԱ):
- 13.—Տառն-Տուրուրի վանքերը, Վիեննա, 1853, Ը+271 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԴ):
- 14.—Արցախի վանքերը, Վիեննա, 1853, Ը+250 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԷ):
- 15.—Ուսումնասիրություններ Հայ ճախարարություններու մասին, Ա. Խորխոռունիք, Դիմաքսանք, Ալեկաքիք, Անճառեաց և Ամատունիք, Վիեննա, 1855, 120 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԷ):
- 16.—Կրիկիայի վանքերը, Վիեննա, 1857, Ը+320 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԴ):
- 17.—Գուգարքի վանքերը, Վիեննա, 1860, Ը+368 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԷ):
- 18.—Սերաստիայի, Խարբերդի, Տիարակիքի և Տրապիզոնի ճամբարներու վանքերը, Վիեննա, 1862, Ը+282 էջ (Ազգային Մատենադարան ԵՄԴ):
- 19.—Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանից ի Վիեննա, հատուր Բ, Վիեննա, 1863, Ը+1156 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիւպեկեան հիմնարկություն):
- 20.—Լեհաստանի և անոնց Անդրեան արքեպիսկոպոսը Եւզովիցի մէջ, գրեթե ղոկտ. Զ. Օրբիտինսկի (թարգմանություն: Հ. Համազասպ Ոսկեանի), Վիեննա, 1863:
- 21.—Ստեփանոսի Ռոջայ ժամանակագրություն կամ Տարեկանը եկեղեցականը, Վիեննա, 1864, Ը+231 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիւպեկեան հիմնարկություն):
- 22.—Յովհաննէս Դրիմբոյ Պատմություն հուշակաւոր վանից Հաղբատայ Ա. Նշանի, Վիեննա, 1865, ԺԴ+184:
- 23.—Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը. Յովհաննէս Կարնեցի, Դրիգոր արքեպ. Օջաւ-

կանցի, Մոսկւս դպիր Կարնեցի և Մարտիրոս վ. Ղրիմցի, Վիեննա, 1966, Զ+210 էջ (Ազգային Մատենադարան Մ.):

**Բ.—Պատմա-բանասիրական հոդվածներ—
ուսումնասիրություններ**

- 24.—Յովհաննէս Վանական վարդապետ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1921, էջ 41—52, 163—172:
- 25.—Վարդան Արևելցի, 1921, էջ 364—374, 456—471, 564—579:
- 26.—Կիրակոս Գամալեցի, 1922, էջ 89—94 և 214—222:
- 27.—Մաղաքիա արևդայի Պատմություն վասն ալ-գին հնոտոյաց, 1922, էջ 221—228:
- 28.—Էրզրոսի առաջին և երկրորդ թաղամասերի մասին: 1924, էջ 215—289, 297—311, 409—418:
- 29.—Յովհաննէս Սարկազի կեանքը, 1925, էջ 27—40:
- 30.—Յովհաննէս Սարկազի գրությունները, 1925, էջ 117—125 և 239—248:
- 31.—Ներսէսի Լամբրոնացու ներդրումն ի վերափոխումն Աստուածածնի, 1925, էջ 355—366 և 442—462:
- 32.—Մխիթար Ղօշ, 1925, էջ 548—561, 1926, էջ 25—85 և 129—137:
- 33.—Ապրիլ 2-ի լուսնի տոմսածառը, 1926, էջ 415:
- 34.—Եղիա Ա. Մուշեղեան Աստուածատուրեան և իր գրական արտադրությունը, 1927, էջ 28—36, 128—136, 237—246, 367—376, 489—501:
- 35.—Ներսէսի Լամբրոնացու ճանաչման ուղի (ուսումնասիրություն և քննադատ), 1928, էջ 120—195 և 311—318:
- 36.—Լիւմ աճապատը, 1933, էջ 347—375:
- 37.—Բզումենաց ծովի կղզիներու աճապատներն ու վանքերը, 1939, էջ 25—77:
- 38.—Ներսէսի Տարսուցի եպիսկոպոսի իրան տընտեսի (Բնագրի Ռաւտարակում), 1939, էջ 80—102:
- 39.—Թուանգ գիւղի Գանձկայ Ա. Գեորգ եկեղեցին, 1939, էջ 188—201:
- 40.—Ռշտունեաց գաւառի վանքերը, 1939, էջ 159—195, 1940, էջ 21—37:
- 41.—Վան-Տոսպի վանքերը, 1940, էջ 38—75, 164—192:
- 42.—Գնունեաց և Արեւրանի վանքերը, 1940, էջ 192—213:
- 43.—Ներսէսի Լամբրոնացու վարդ Գրիգորի նախնական (ուսումնասիրություն և քննադատ), 1940, էջ 214—220:
- 44.—Արտագի վանքը, 1941, էջ 33—53:
- 45.—Արմիշահովտի, Քաջքերուեանց և Արծկէի վանքերը, 1941, էջ 58—88:
- 46.—Նախնական վանքերը, 1941, էջ 178—219:
- 47.—Մաղարդայ Նախավայի վանքին կոնդակները, 1941, էջ 228—243 և 1942, էջ 89—128:
- 48.—Գողթնի վանքերը, 1942, էջ 23—61:
- 49.—Անձնագրաց, Բողունքի, Երուանդունիքի և Լիդրակի վանքերը, 1942, էջ 161—193:
- 50.—Սարգիսի մոլորվի հայրենի կանոնները (ուսումնասիրություն և համաձայն գիտական քննադատ) 1942, էջ 203—240, 1948, էջ 1—22, 1945, էջ 71—86:
- 51.—Սուլաց, Խիզանի և Բատախի վանքերը, 1943, էջ 80—96, 1944, էջ 58—67:
- 52.—Սալմաձոր-Բաղէի վանքերը, 1944, էջ 88—96:
- 53.—Սերաստիայի վանքերը, 1945, էջ 21—87:
- 54.—Վաղարշապատի վանքերու մասին ընդհանուր՝ զանազան տեղեկություններ, 1948, էջ 70—94, 1947, էջ 25—36, 77—87, 159—170, 218—230, 282—289, 328—347:
- 55.—Տրիստի մէջ թաղուած հայ եկեղեցականներ, 1948, էջ 404—420:
- 56.—Բարձր Հայքի վանքերը.—Դարանաղիք, 1948, էջ 528—558, Եկեղեցի, 1949, էջ 22—44, Կարմուշ և Դերջանի, 1950, էջ 38—51, 147—174, Սպերի, Բարկրդի և Թորթումի, 1950, էջ 343—387: Յանկուած. Քղիի և Խնուսի վանքերը, էջ 433—442:
- 57.—Գնունեաց Գախարարությունը, 1951, էջ 481—488, 1952, էջ 88—90:
- 58.—Արցախի վանքերը, 1951, էջ 339—367, 521—537, 1952, էջ 80—90, 218—242, 416—427, 548—574, 1953, էջ 33—52:
- 59.—Ռշտունեաց Գախարարությունը, 1952, էջ 161—187 և 371—404:
- 60.—Ակեացուց, Անձնագրաց և Դիմաքսեան Գախարարությունները, 1954, էջ 285—333:
- 61.—Ամատունեաց Գախարարությունը, 1954, էջ 497—521:
- 62.—Ակնայի վանքերը, 1954, էջ 79—85, 1955, էջ 17—42, 205—236:
- 63.—Կիլիկիայի վանքերը 1955, էջ 373—397, 505—525, 1956, էջ 26—45, 373—397, 505—525, 1956, էջ 26—45, 198—195, 320—335, 452—467:
- 64.—Գուգարքի վանքերը, 1957, էջ 13—25, 185—192, 282—307:
- 65.—Սանահինի վանքը, 1957, էջ 407—420:
- 66.—Սանահին և Հաղբաւ վանքերու հիմնարկությունները և ընդհանուր տեղեկություններ աճուց մասին, 1958, էջ 285—319, 475—492:
- 67.—Հաղբաւի կալուածները: Սանահինի և Հաղբաւի արձանագրությունները, 1959, էջ 361—382:
- 68.—Հաղբաւի առաջնորդները, 1959, էջ 31—79:
- 69.—Հաղբաւի դպրոցը, 1959, էջ 183—197:
- 69.—Սերաստիայ Գախարարի վանքերը, 1959, էջ 481—500, 1960, էջ 1—15:
- 70.—Սարքերդի գաւառի վանքերը, 1960, էջ 177—204, 368—380 և 482—508:
- 71.—Տիարակերի կամ Տիգրանակերտի Գախարարի վանքերը, 1961, էջ 39—71:

* Լ. Լ. Ոսկանի հետագա քուրդ հոդվածները լույս են տեսել «Հանդէս ամսօրեայ»-ում, կրկնությունից խուսափելու համար այլևս չենք ճշում այդ պարբերականի աճուցը:

- 72.—Տրապիզոնի մահմեդին վանքերը, 1901, էջ 278—281:
 73.—Յովհաննես Կարսեցի, 1905, էջ 338—355, 480—506:
 74.—Գրիգոր արքեպ. Օշականցի, 1864, էջ 7—23, 141—154 և 311—322:
 75.—Մովսես դպիր Կարսեցի, 1864, էջ 457—478:
 76.—Կարգ և թիւ թագաւորացն Հայոց ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցոյ, 1905, էջ 31—50:
 77.—Ստեփանոս վարդապետ Ռոշքայ, 1905, էջ 187—208, 335—346, 457—466, 1886, էջ 29—44 և 139—150:
 78.—Մատթեոս վ. Ջուղայեցի, 1886, էջ 275—280, 461—468, 1887, էջ 16—28, 128—142:
 79.—Ներսէս վ. Երեւանցի և Բուդապետի ազատագրումի համար գրուած հայերէն ծանկագիր մամուլները, 1887, էջ 267—282:
 80.—Յակոբ Կարսեցի երեցի կեանքի մասին՝ յոյցուիչ տեղեկութիւններ և գրութիւններու ցկատմամբ ճշդումներ, 1887, էջ 283—288:
 81.—Վիեն. Միսիթարեաններու Տրիեստի մէջ հրատարակած հայերէն ու հայատառ քրքրեիմ գլխաքերը, 1887, էջ 225—244, 289—312 (շարունակելի):

Գ. Ձեռագրացուցակներ

- 82.—Օլմիցի քաղաքական գրատան հայերէն երկու ձեռագիրները, 1924, էջ 510—513:
 83.—Կանոնագրոց ձեռագիր օրինակ մը ի Պոլսի, 1936, էջ 188—200:
 84.—Յուցակ Հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, 1937, էջ 570—580, 1938, էջ 108—115, 204—218 (այս վերջինը Ն. Գասապյանի հետ):
 85.—Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանից Միսիթարեանց ի Վիեննա: 1945, էջ 101—116:
 86.—Երկու հայերէն գրչագիր Աւետարան Զափէի մէջ, 1951, էջ 85—88:
 87.—Ամբատ Քաչկունցի Աւետարանը, 1951, էջ 463—467:
 88.—Յուցակ Թեմրանցի հայերէն ձեռագիրներու, 1953, էջ 95—110 և 596—604:
 89.—Հայերէն երեք ճոր ձեռագիր Բելլուրի մէջ, 1959, էջ 413—420:
 90.—Ն. Պօղոսեանցի պատմագիրք հայոց ձեռագիրը, 1960, էջ 75—81:
 91.—Վեդարատը հայերու Բելլուրի վանքից ձեռագիրները, 1960, էջ 550—567:
 92.—Հայերէն ձեռագիր Աւետարան մը Koblenz-ի մէջ: 1965, էջ 78—78:
 93.—Հայերէն խորհրդատետրի լատիններէն թարգմանութեամբ ձեռագիր մը Gollweig-ի վանքին մէջ, 1965, էջ 77—82:
 94.—Հայերէն ձեռագիր Աւետարան մը Admont-ի վանքին մէջ, 1964, էջ 158—168:
 95.—Գրացի համալսարանի հայերէն ձեռագիրները, 1964, էջ 479—484:

- 96.—Heek հնավանդակի հայերէն ձեռագիր Աւետարանը, 1965, էջ 221—223:
 97.—Յուցակ Վիեննայի Ավստրիական Ազգային Մատենադարանի հայերէն ձեռագիրներու, 1965, էջ 361—372 և 438—442:
 98.—Գարթայի Ս. Նշան եկեղեցոյ հայերէն ձեռագիրները, 1966, էջ 321—333:
 99.—Հայոց Ն. Պոլսոյ (Գոսվարտի) Պատրիարքարանի հայերէն ձեռագիրներէն, 1966, էջ 475—488, 1967, 378—384:
 100.—Ն. Պոլսոյ Պետական հիմնադրամի թանգարանից Մատենադարանից Աւագ Մաշտոց ձեռագիրը, 1967, էջ 43—52:
 101.—Ի Կ. Պոլիս «Թօփգարք» պալատին կից Ահմետ Գ. սուլթանից անուան Մատենադարանին հայերէն ձեռագիրները, 1967, էջ 183—198:

Դ. Գրախոսություններ

- 102.—Տօքթ. Մ. Սալբի, Ալեականք և խեականք... Աղեքսանդրիա, 1919: 1920, էջ 480:
 103.—Խաչմանեան Թ., Ամերիկական հանրագիտական տարեգիրք, 1925, Պոսթըն, 1925, էջ 83—84:
 104.—Dr. Pölz F. und Dr. Th. Innitzer: Kurzgefasster Kommentar zu den vier heiligen Evangelien... Graz 1922—1925, 1926, էջ 91:
 105.—Dr. Kraft B.: Die Evangelienzitate des hl. Irenaeus... 1924, 1926, էջ 91—92:
 106.—Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique... 1912—1926, 1926, էջ 284—286:
 107.—Oudenrijn Dr. M. A. Van den, Der Traktat. Յաղագս առաքինութեանց հոգւոյմ... 1942: 1946, էջ 125—128:
 108.—Թերզեան Մ. վրդ., Զմմատու հայ վանքը, Պելլուր, 1849: 1950, էջ 242—244:
 109.—Երեմեան Արամ, Նոր Ջուղայի ժէ դարու որմանկարչութեան յուշարձանը, Նիւ Եորք, 1942: 1950, էջ 110—112:
 110.—Սիրմեան Արտ. արքեպ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսալի մասնաւոր հաւաքումներու, Ա. հատոր, Փարիզ, 1950: 1950, էջ 94—98:
 111.—Պետիկեան Ա. Ա., Գրչանկարներ Պարտիկան գիւղին, Փարիզ, 1950: 1952, էջ 686—697:
 112.—Թերզեան Մեսրոպ վրդ., Ժակոբ Դ. Ջուղայեցի (1855—1880), Պելլուր, 1956: 1957, էջ 82—94:
 113.—Աթանասեան Խաչիկ վ., Վարք Արքամա Պետրոս Ա. Արծիւեան կաթողիկոսի, Պելլուր, 1959: 1959, էջ 572—574:
 114.—Անայան Հ., Հայկական մատենագիտություն, Ե—ԺԷ դդ. հտ. Ա, Երևան, 1959: 1960, էջ 155—158:
 115.—Նալբանդյան Վ. Ա., Թրիլիսին հայ մատենագրութեան մեջ, Երևան 1958: 1960, էջ 311—316:
 116.—Հարությունյան Հ. Ա., Հայոց տառեր IX—XI դարերում, Երևան, 1958: 1960, էջ 489—470:

- 117.—Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը 1801—1879 թթ., Երևան, 1958: 1980, էջ 628—698:
118. Inglislan P. Dr. Vahan, Hundertfünzig Jahre Mechttharisten in Wien, 1961. 1962, էջ 140—150:
- 119.—Ակարյանի Արշակ, Պատմությունից մայր գաղթականություն... Գ. Ռատուր, Ա. մապ... Գաղիլե, 1881: 1882, էջ 312—318:
- 120.—Գրիգորիս, Քրիստոսի բնության մարդու և նրանից ցատկ, աշխատասիրությամբ Ա. Ս. Կոնյանի..., 1882, Երևան: 1882, էջ 506—508:
- 121.—Սահակյան Հասմիկ, Հայ աշուղներ ժել—ժԸ դդ., Երևան, 1881: 1883, էջ 151—152:
- 122.—Սրապյան Արմենակի, Ստուգանքից Երզնկացի, Տաղեր, Երևան, 1882: 1883, էջ 313—314:
123. Armenische Handschriften beschrieben von Julius Assfalg und Joseph Molitor, Wiesbaden 1962. 1963, էջ 137—186:
- 124.—Գևորգյան Վ. Պ., Հովհաննիս Սեբաստացի, Բանաստեղծություններ, Երևան, 1884: 1884, էջ 234:
- 125.—Ղաֆադյան Կ., Հարցատ, ճարտարապետական կառուցվածքները և վիճակն արձանագրություններ, Երևան, 1883: 1884, էջ 278—286:
- 126.—Պտուկեան Զարին Պ., Կիլիկիան Հայաստանի դրամները, Վիեննա, 1883: 1884, էջ 281—282:
127. Das Leben des hl. Maschiotz von seinem Schüler Korlun, übersetzt von P. Dr. V. Inglislan, Düsseldorf, 1963. 1963, էջ 137—138:
- 128.—Հովհաննիս Հ. Տարություն և Հաննիս Հ. Մատթեոս, Յուշահատեան Խոտորոցորի, Վիեննա, 1884: 1884, էջ 440—442:
- 129.—Նդգարիան Ա. ՔԱ., Խրանի Զմարմնայ դատար, Թիֆլիս, 1883: 1884, էջ 567—588:
- 130.—Մուշեղյան Եղիշիկ, Հայերեն արձանագրությամբ առարկաներ (պրակ Ա. Հատկանշական յուրակ թանգարանային ժողովածուների շարքի) Երևան, 1884: 1884, էջ 588—570:
131. Der Nersessian Siraple, Manuscripts in the Freer Gallery of Art, Washington. 1963. 1964, էջ 270:
- 132.—Ակարյան Լ. Ռ., Կիլիկյան մանրակարգությունը ժել—ժԸ դդ., Երևան, 1884: 1885, էջ 151—154:
- 133.—Հարությունյան Վարդգես, Անի քաղաքը, միջնադարյան Հայաստանի թաղաքաշինության պատմությունից, Երևան, 1883: 1885, էջ 440—444:
134. Burchard Christoph, Untersuchungen zu Joseph und Aseneth, Tübingen, 1965. 1966, էջ 250—251:
- 135.—Սիմոնեան Սիմոն, Արևելահայ գրականություն, Պեյրուր, 1885: 1886, էջ 252—254:
- 136.—Արգարևանց Տիգրան Թ., Նոր Զուղայի անգիր գրականություն, Թեֆլիս, 1883, էջ 570:
- 137.—Ամարյան Հ. Մ., Միջնադարյան քաղաքաշինական հուշարձաններ (Ե—ԺԵ դդ.), Երևան, 1886: 1887, էջ 117—120:
- 138.—Սարգիսյան Հ. Բարսեղ—Սարգիսյան Հ. Պրիգոր, Մայր ցուցակ հայերեն ձեռագրային Մատենադարանից Միսիթարևանցի Վենետիկ, Ռատուր Գ. Մաշտոց-գիրք ձեռագրությունից, Վենետիկ, 1886: 1886, էջ 400—403:
- 139.—Գիլյան Վ. Ա., Հաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1886: 1887, էջ 248—252:
- 139.—Պատմություն հայկական Պոնտոսի, պատմագրից Յովակիմ Յովակիմյան, Պեյրուր, 1887: 1887, էջ 404—408:

Ե. Մահախոսականներ և այլնայր

- 140.—Վիեննայի Միսիթարևանցի Միսիթարևանցի Համաշխարհային պատերազմի տարիներուն: 1845, էջ 117—125:
- 141.—Ուսուցչապետ Լևոն Մելիքսեթ-բեկ: 1884, էջ 78—86:
- 142.—Հ. Նդիա վրդ. Փեչիկյան: 1884, էջ 383—388:
- 143.—Հ. Սարգիս վրդ. Բարսեղյան: 1885, էջ 493—496:
- 144.—Հ. Յովհաննես վրդ. Մըսրիսյան: 1885, էջ 495—502:
- 145.—Հ. Սրապիս վրդ. Նդիայան: 1886, էջ 78—82:

Զ. Թարգմանություններ

- 146.—Լեոնարդո-Բրամանտե—Վիլոյա Բամմատական գեղարուստա-քննության շրջանակին մէջ (Յ. Ստրիգոլսկի): 1818, էջ 36—59. 1820, էջ 282—245 և 467—478:
- 147.—Լեոնարդո և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը Եգիպտոսի մէջ (Ռոկո. Զ. Օրբերտինսկի, թարգմանչի ծանոթագրություններով): 1882, էջ 85—100, 288—286, 480—480, 1883, էջ 83—102, 278—284:
- 148.—Հայերը և Խաչակիրները (ըստ Գիլյանի): 1886, էջ 81—82 և 185—216:

ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՒԼԱՆԶՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու)

